

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՂԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ՂԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԶԷ

Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի պետական տարածաշրջանի համալսարանի գիտական միտքերի դահլիճում մարտի 27-ին տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Բացման խոսքում համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը, խոսելով Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, ասաց, որ դա առաջին հերթին մարդկության խնդիրն է: Այսօր ակամատես ենք, թե իսլամիստական պետությունը ինչ քաղաքականություն է վարում և ինչպես է տարածքներ վերցնում, ազգեր ու մշակույթ ոչնչացնում: Մեջբերելով Վիդուա Վիլսոնի խոսքերը՝ նա գուցա հետևյալը անցկացրեց այսօրվա իրականության և անցյալի միջև: «Ձեռքերը վայր չպիտի դնենք, մինչև Թուրքիայի կողմից ճնշված ազգերը իրենց ազատությունը չստանան, Թուրքիան վայրագությամբ կտրել-անցել է իր տերերին՝ գերմանացիներին: Հայերի նկատմամբ գործադրված մեթոդիկ ջարդերը ստիպում են մեզ եվրոպայի վրայից ավելել այդ տգետ ու վատառողջ ավազակախումբը»: Իսլամական պետության ձեռագիրը կարծես հենց այն ժամանակ Թուրքիայի գործողություններում երևում էր: Գրեթե տարբերություն չկա. 1918թ. ստեղծվեց Ադրբեջան պետությունը, որը դարձյալ ավազակախմբերի հիմքի վրա կառուցվեց: Նույն «ավազակախումբ» պիտակով ենք այսօր բնորոշում իսլամական խմբավորումները:

Քանակը: Գիտաժողով կազմակերպելու նպատակը այդ հարցին առաջին հերթին գիտական մոտեցմամբ անդրադարձնալը և ճշմարիտ գնահատական տալն է:

Գիտաժողովին արգասաբեր աշխատանք մաղթեց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Արսյանը: Նա ներկայացրեց նաև նախարարության ուղերձը գիտաժողովի մասնակիցներին, որում մասնավորապես ասված է.



«Հայերի ցեղասպանության ճանաչումը քաղաքակրթ աշխարհին անհրաժեշտ է առաջին հերթին հենց հօգուտ իրեն՝ հետագա ցեղասպանություններից պահպանվելու համար: Եթե Հայոց ցեղասպանությունը ժամանակին ճանաչվեր, տեղի չէր ունենա հրեաների ողջակիզումը, հետագայում չէին լինի Կամբոջայի, Ռուանդայի և այլ ողբերգություններ: Անպատժելիությունը նորանոր ջարդերն է ծնում: Մեր մեկդարյա ողբերգության դասերը միայն մեզ չեն առնչվում, այլև՝ տարածաշրջանին, համայն մարդկությանը, որովհետև այն վարդուց վերածվել է մի յուրատեսակ ուղերձի՝ ուղղված աշխարհին, որ անհրաժեշտ է զգուս լինել, զոնե երրորդ հազարամյակում անտարբեր չլինել ուրիշի ցավի համդեպ, որ համատեղ ջանքերով կարելի է միայն պայքարել ցեղասպանությունների դեմ՝ այլևս երբեք դրանք չկրկնվելու համար»:

Գիտաժողովում հնչեցին մեկ տասնյակ գեկուցումներ՝ տարբեր թեմաներով:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրան Բալայանը «Պատմությունը և պատմագիտությունը՝ Հայոց ցեղասպանության գաղափարախոսություն» զեկուցման մեջ նշեց, որ եղեռնը մի ծրագիր էր, որ դարերի ընթացքում խմորվել է թուրքական արքունիքում և իրագործվել 1915թ.: Թուրքիան մտածում էր իր գանձարանը ոսկով լցնել և դա կատարում էր թալանով, կողոպտելով: Պատմությունը միայն տարածքների հարցը չէր. այն ավելի շատ քաղաքակրթական պայքար էր, նպատակը՝ վատը սերմանելը: Բանախոսի համոզմամբ՝ հայությունը առաքելություն ունի կատարելու, և սա զգուս է եվրոպան:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Հարությունյանի զեկուցումն էր՝ «Արևմտահայ դարոցը Հայոց ցեղասպանության տարիներին. 1894-1923թթ.»:

Սրբաբան, որտեղ սովորում էր 24 հազար աշակերտ, դասավանդում՝ 1200 ուսուցիչ: Փաստերն ապացուցում են, որ չնայած արևմտահայության ծանր պայմաններին՝ հայ նվիրյալների ջանքերով Թուրքիայում պահպանվում էր հայկական ազգային կրթամշակութային կյանքը:

ԼՂՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Վահրան Աբանեյանը պատմեց մի մարդու մասին, որը, Վանից մազապուրծ փրկվելով թուրքի երախից, մեծամարտիկ որբանոցներում, ստանալով մանկավարժական կրթություն, հանգրվանել է Արցախի Առաջաձոր գյուղում, ընտանիք կազմել, շուրջ 40 տարի աշխատել որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Դա իր մորական պապն էր՝ Հարություն Մինասյանը, վաստակավոր մանկավարժ՝ Թուրքիան Հայոց ցեղասպանության մերժողականությունը բացատրում է փաստաթղթերի բացակայությամբ, սակայն բանախոսը, մեջբերելով Հրանտ Գինքի խոսքը՝ փաստաթղթերի կարիք

չկա. ամեն հայ մի փաստաթուղթ է, եզրահանգում է, որ մեկ մարդու կենսագրությունն այսօր ավելի խոր ընկալումների առիթ է, քան երկարաշունչ դասախոսությունները Թուրքիայի հակահայկական քաղաքականության վերաբերյալ: Բանախոսը հիշեցրեց նաև Ամենայն հայոց բանաստեղծ Յուզի. Թուրքիան գնահատականը՝ դեռևս տված 1912թ. «Թուրքիան նստած է մի քանի ազգերի հայրենիքի վրա, և որպեսզի հայրենիք ունենան, պետք է բնաջնջի այդ ազգերին»:

«Հայկական ցեղասպանության թուրքական քաղաքականության դրսևորումը Շուշիում» զեկուցումով հանդես եկավ Շուշիի «Կանաչ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Միեր Հարությունյանը: «Մեր հայրենիքում ապրելու իրավունքը պետք է պաշտպանենք ինքներս՝ առանց որևէ երրորդ ուժի վրա հույս դնելու: Այսօր մեր Պաշտպանության բանակի փառավոր ուղին, մեր պետության իրականացրած հստակ քաղաքականությունը ճիշտ ուղու վրա են», - ասաց Մ. Հարությունյանը:

Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան նաև պատմական գիտությունների թեկնածու Ռոնա Բալայանը («Մեծ եղեռնի արդար դատաստանի հայ վրիժառուները»), ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Անուշավան Պողոսյանը («Վշխարհը՝ լալ, աշխարհը՝ քոռ, աշխարհը՝ քառ»), Գրիգոր Նարեկացի համալսարանի հունամիտար ֆակուլտետի դեկան Լիլիկ Հակոբյանը («Հայոց ցեղասպանության ուրացումը հանցագործություն է»), բանասիրական գիտությունների թեկնածու Ժամնա Բեգլարյանը («Հայոց ցեղասպանության թեման հայ գրականության մեջ»), բանասիրական գիտությունների թեկնածու Տաթև Սողոմոնյանը («Հայոց ցեղասպանության թեման համաշխարհային գրականության մեջ»), Ամենայն հայրենիքի գրիգորյանը («1909թվականի Ադաճայի կոտորածները»):

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփելով՝ համալսարանի ռեկտոր Վարդան Հակոբյանն ասաց, որ հետևությունը մեկն է՝ պահանջում ենք հատուցում:

Սեփ. լրատվություն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԶԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՄ

Երկրորդ կլինի Շուշիում երկար սպասված ազդարարյան համալսարանի նոր համալիրի բացումը:

Նախարարը շոշափեց նաև միջբուհական համագործակցության թեման: Իսկ ճարտարապետաշինարարական համալսարանի ռեկտորը ներկայացրեց կոնկրետ իր ղեկավարած բուհի և ԱրԴՀ համագործակցության ուղիները, հատկապես մասնագիտությունների ուսումնական պլանները վերանայելու, դասախոսական կազմի փոխանակումների, ուսանողների շարժունակության մասով:

Ներկաները հնարավորություն ունեցան հարցեր ուղղելու ՀՀ ԿԳ նախարարին: Հարցերի մի մասը վերաբերում էր ուսման վարձավճարներին: Ա. Աշոտյանը տեղեկացրեց, որ քանի որ պետապատվերի ծավալը չի ծածկում բոլոր այն խմբերին, որոնք պետական աջակցության կարիք ունեն, ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել, որով բուհերի համար սահմանվել է ուսման վարձավճարների վերին շեմ, որը իր հերթին պայմանավորված է նվազագույն աշխատավարձով: Իսկ բուհերի ազատությունը սահմանափակվում է լոկալ այդ շեմի շրջանակում: Ուսման վարձավճարները կախված են նաև մի շարք չափանիշներից՝ կրթական աստիճանից և կրթության որակից. հավատարմագրված կրթական ծրագիրն ունի ավելի բանկ կրթավարձ, քան նույն մասնագիտությամբ չհավատարմագրվածը, ընդ որում՝ միջազգային հավատարմագրվածները՝ ավելի բարձր գին ունեն: Պետական բուհերին պարտադրել են իրենց վճար

ովի ծառայությունների 7 տոկոսը ուղղել ուսանողական զեղչերին: Օրենքով ամրագրվել են սոցիալական այն խմբերը, որոնք համար պետությունը երաշխավորում է ուսման զեղչ: Պետությունն իր վրա է վերցրել ամենամաքսիմալ ընտանիքների ուսանողների վարձավճարի փոխհատուցումը 50-100 տոկոսով: Բայց պահանջը նաև հետևյալն է՝ պետությունը, քիչ բացառությամբ, ապահովում է լավ սովորող ուսանողների ուսման վարձը: Պետությունը կանգնած է լավագույն սովորողի կողքին: Սոցիալական այդ քաղաքականությունը իր արդյունքը տվել է. անապահով ընտանիքների կրթության մատչելիության հարցը կարգավորված է: Օրենքով սահմանված է նաև բանակից զորացրվածների ուսման վարձավճարների հարցը:

Հարցի կապակցությամբ ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Արսյանն ասաց, որ Արցախում նույնպես օրենսդրական փոփոխություններ են նախատեսվում, որոնցում ներկայացված է ուսանողների կրթաթոշակների և նպաստների հարցը:

Շարունակելով թեման՝ Ա. Աշոտյանը նշեց, որ նոր օրենք է մշակվում, ըստ որի բուհերը վճարովի ծառայություններից ստացած գումարի որոշակի մասը պետք է հատկացնեն գիտությանը: Պետությունն ամեն տարի 14 մլրդ գումար է տրամադրում գիտությանը, բուհերը՝ 600 մլն: Նոր օրենքով պարտադրվում է բուհերին, որ եթե ուզում են օգտվել պետական գիտական դրամաշնորհներից, սեփական բյուջեի որոշակի մասը պետք է ուղղեն գիտությանը, գիտա

հետազոտական աշխատանքներին: Հարց հնչեց՝ ի՞նչ տվեց Բոլոնյան համակարգը Հայաստանին: «Տվեց կրթական միջազգային փորձը ուսումնասիրելու և ձեռք բերելու հնարավորություն, մեր երեխաների դիպլոմները դրսում ճանաչելու և համադրելի դարձնելու, քաղաքական հնարավորություններ՝ լինել Բոլոնիայի գործընթացի մասնակից, ինչը նշանակում է լինել մի մեծ քաղաքական պրոյեկտի մաս, չմեկուսանալ»: Դրա հետ մեկտեղ նախարարը չչորացրեց նաև սխալները. «Ոչ մի միջազգային փորձ համարուման չէ մեր ոչ մի խնդրի. անգամ ամենալավ փորձը պետք է բերել, տեղայնացնել», -ինքնաքննադատաբար նշեց նախարարը: «Շատ մեխանիկորեն անցանք Բոլոնիայի ստանդարտներին»: Որպես օրինակ բերեց բակալավոր-մագիստրոս աստիճանները, որից կրթական բովանդակությունը չթարմացվեց. «Նախկին 5 տարվա ծրագիրը ճխտված է 4 տարվա մեջ, իսկ մագիստրատուրայում նոր բան չեն տալիս, անգամ եթե առարկաների անունները փոխում, դարձնում են հնչեղ: Ուսանողը գնում է մագիստրատուրա՝ մտավախություն ունենալով, որ բակալավորից թերի բարձրագույն կրթություն է: Կառուցվածքով համապատասխանում է եվրոպական չափանիշներին՝ կրեդիտներ, հավատարմագրում, ուսանողականները համակարգ, եռաստիճան բարձրագույն կրթություն, բայց բովանդակության մասով չենք հասցնում մեր բարեփոխումները:

Չունենք այդ կարողությունը՝ ամեն ինչ անել միանգամից ու միաժամանակյա», - ասաց Ա. Աշոտյանը, որի կարծիքով՝ կրթության որոշ տեսակների դեպքում (բժշկագիտություն, արվեստ) հնարավոր էր պահպանել նախկին մոդելը: «Պետք էր շտապել ու բոլորին տեղափոխել բակալավոր ու մագիստրատուրական համակարգ: Կոնկրետ բժշկական կրթության դեպքում այս համակարգը չաշխատեց: Տնտեսությունն էլ չի տալիս տարբերակված պահանջարկը կրթական աստիճանների: Այդ խնդիրները գոյություն ունեն, բայց դա չի նշանակում, որ Բոլոնիայից է. դա մեզանից է: Բոլոնիայի գործընթաց կոչվածը հուշում է, բայց չի պարտադրում: Նա մտամաշուն է, թե որոնք են կրթական այն չափանիշները, որոնց պետք է եվրոպական երկրները հավատարիմ լինեն, բայց իրականացնող պատասխանատուն ազգային կառավարություններն են»:

Ա. Աշոտյանն ասաց, որ մենք վաղուց անցել ենք այդ կույր պատճենահանման ժամանակահատվածը. ցանկալի կրկնակի շահեկան վիճակում է (Հայաստանում մեկ տարի աշխատելուց հետո է փորձը վերցնում): Հայաստանը լավ առումով փորձադաշտ է: Արցախը զտման երկու աստիճան ունի, ինչը նվազեցնում է սխալ որոշում կայացնելու հավանականությունը:

Հարցերից մեկը վերաբերում էր նրան, թե Հայաստանի՝ ԵՏՄ-ին միաձուլելուց ինչ կփոխվի կրթական համակարգում:

ԵՏՄ-ն՝ որպես տնտեսական միա

վորում, պարտավոր է տարիների ընթացքում մշակել սեփական կրթական տեսագիծը, քանզի չկա ընդհանուր տնտեսություն, առանց ընդհանուր աշխատաշուկայի, առանց կրթական համակարգի հստակ միասնականության: ԵՏՄ-ին միանալով՝ Հայաստանը այսօր մի քանի կրթական հնարավորություն է ստացել. ԵՏՄ ամրան էրկրները պարտավորվել են մեխանիկորեն ճանաչել միմյանց դիպլոմները՝ բացի բժշկության, մանկավարժության և իրավաբանության, որոնց դեպքում փաստաթղթերը չեն ճանաչվում ինքնաբերաբար, պետք է անցնեն ներպետական ճանաչման ընթացակարգ: Նույնը վերաբերում է գիտական աստիճաններին. դրանք նույնպես պետք է անցնեն ներպետական ընթացակարգ:

Հանդիպման վերջում ԱրԴՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԿԳ նախարարին՝ հերթական այցի համար՝ մշտելով, որ երկու հայկական համալսարանությունների ԿԳ նախարարությունների միջև կնքված համաձայնագիրը լուրջ խթան հանդիսացավ միջբուհական կապի և համագործակցության համար: Պայմանագրերին հետևեցին աշխատանքային ծրագրերը: Նա հավաստիացրեց, որ ԱրԴՀ-ում կա գիտակցում՝ ետ չմնալ աշխարհում տեղի ունեցող զարգացումներից, բայց հայտնի օբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ մշտապես զգալու են հայաստանյան գործընկերների աջակցության կարիքը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ

ԿԱՏԱՐԿԱԾԸ ՔԻՉ ՉԷ, ԱՆԵԼԻՔՆԵՐԸ՝ ՆՈՒՅՆՈՒՄԵՆ

Փետրվարի 24-ից մարտի 6-ը ԼՂՀ ԿՊՏ հանձնաժողովը իրականացրեց համակողմանի ստուգումներ Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում: Ստուգումների ավարտին հետևեց մանկավարժական խորհրդի նիստը, որին ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը: Երկ-շաբաթյա ստուգումների մասին ընդարձակ տեղեկանք ներկայացրեց տեսչապետ Սոս Արզումանյանը: Նա նշեց, որ վերջին տարիներին դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացել է և հնարավոր չէ համեմատել նախորդ ստուգումներին առկա նյութատեխնիկական բազայի հետ՝ սկսած գույքից, տեխնիկական միջոցներից, բայց այն բավարար համարել դեռ չի կարելի: Տեխնիկական հագեցվածության բարելավման առումով նշանակալի էր Հայաստանի ազգային պոլիտեխնիկ համալսարանի կողմից դպրոցին նորագույն համակարգիչներ նվիրելը՝ ուղեկից բոլոր պարագաներով, ինչի շնորհիվ դպրոցում համակարգիչների քանակը 19-ից հասցվել է 33-ի: Դպրոցը միացված է համացանցին, իսկ 1-7-րդ դասարանների բոլոր աշակերտները ընդգրկված են ՆՈՒՒ ծրագրի մեջ. ասել է թե՛ բոլոր աշակերտներն ունեն սեփական համակարգիչ:

Անշուշտ, այս ամենը էական նշանակություն ունի ուսումնադաստիարակչական գործընթացին նոր որակ հաղորդելու, դասագործընթացը ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Որոշակի դրական քայլեր են արվել ուսումնական առարկայական նոր կարիքներին ստեղծման ու երթմանի համալրման ու հարստացման, ինչպես նաև ուսուցման կարիքներին համակարգիչ անցման ուղղությամբ: Եթե 5 տարի առաջ դպրոցում կար 3-4 առարկայական կարիքներ, ապա այսօր առկա են 10 վճարովի կարիքներ՝ չհաշված ՆԶՊ, համակարգչային կարիքները և արհեստանոցը: Միաժամանակ, ինչպես ցույց են տվել ստուգումները, նշված առարկայական կարիքներին միայն 3-ը (հայոց լեզվի, աշխարհագրության և պատմության) կարելի է համարել կայացած, բավարար կախավորվածությամբ, մնացածներում դեռ շատ անելիքներ կան:

Տեսչապետը հատկապես ընդգծեց տարրական դասարանները: Դրանց մեծ մասը կահավորված է բարձր ճաշակով, աչքի են ընկնում ինքնատիպ ձևավորված դասարանական, ԼՂՀ պետականության ու «Ձարթոնք» մանկապատանեկան կազմակերպության անկյուններով, դիտողական ու ինքնաշեն պարագաների առատությամբ և, որ ոչ պակաս կարևոր է, մաքրությանը, իսկ երեխաները՝ իրենց հագ ու կապով, «Ձարթոնքի» տարբերանշաններով:

Դպրոցն ունի բավականաչափ հարուստ գրադարան, որը ակտիվ մասնակցություն է ունենում դպրոցական կյանքին:

Կրթօջախն ունի 114 աշխատող, որից 73-ը մանկավարժական աշխատողներ են: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 13,3 ժամ է: Դպրոցում ստրեսկոբին կար 762 աշակերտ: Տեսչապետի խոսքով՝ դասարան-համակազմերի ձևավորման ժամանակ թույլ են տրվել ոչ ճիշտ մոտեցումներ: Որոշ դասարաններում աշակերտների թվաքանակի շեշտակի տարբերություններ են նկատվում, ինչն էլ իր արտացոլումն է գտել ուսման որակի մեջ:

Տեսչական հանձնաժողովի նա-

խագահի գոհունակությանն արժանացավ տնօրինության և ուսումնական գործընթացի մյուս օղակների պատասխանատուների աշխատանքային պլանները և դրանցից արտածվող՝ ուսուցիչների օրացուցային ու թեմատիկ պլանները:

Տեսչապետը առանձնապես դրական եզրույթ տնօրենի ուսումնական գծով տեղակալ Նուրե Բեգլարյանի աշխատանքը: Նա ունի թղթապանակ, որում տեղ են գտել փոխտնօրենի աշխատանքների հետ առնչվող բոլոր իրավական փաստաթղթերը՝ սկսած «Կրթության մասին օրենքից» մինչև «Ուսուցիչ թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հարցաշարերը»: Այդքանով չբավարարվելով՝ Ն. Բեգլարյանը ձեռնարկել է նաև նախադեպ չունեցող մեկ այլ նախաձեռնություն՝ իր համար կազմելով 5-ամյա (2009-2014 թթ.) ուսումնական աշխատանքների զարգացման ծրագիր, ինչպես նաև՝ ըստ ուղղությունների ծրագրի իրականացման վերլուծություն:

Տնօրինությունը մեծ ուշադրություն է դարձնում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ողջ գործընթացը լուսաբանող պլան-գրաֆիկներին, տարաբնույթ ժամանակացույցների կազմմանը:

Ասվածի վառ ապացույցն է ուսուցչանոցում և միջանցքներում փակցված տարաբնույթ թեմաներով վահանակները: Դրանցից են՝ «Աշխատենք ստեղծագործաբար», «Պատասխանատվություն, օրինակելի աշխատանք, լավագույն արդյունք», «Հրահանգավորում», «Ներդրողական վերահսկողություն», «Ձարթոնքի անկյուն» և այլն:

Ուսումնական գործընթացը բնականոն ընթանալու համար ժամանակին կազմվել, հաստատվել ու ներդրողական վերահսկողության վահանակի վրա փակցվել են պարտավորությունների դասացուցակը, ուստարվա ժամանակացույցը, խմբակային տարապնակների, դաստիարակչական, կազմակերպչական, համադրողական ու համաքաղաքային, ռազմահայրենասիրական միջոցառումների, հեթոսպահության, դասղեկական, ընդօրինակման և համակարգչային դասերի անցկացման և այլ գրաֆիկներ, դժվար դաստիարակվող աշակերտների հետ տարվող աշխատանքների, դասալսումների պլանները, մանկավարժական խորհրդի օրակարգերը և այլն: Այդ ամենը խոսում է այն մասին, որ տնօրինության բոլոր անդամները ձգտում են, որքան հնարավոր է, շատ աշխատանքներ կատարել, ավելացնել ցուցադրական լուսաբանումը, փորձել ոչ մի բաց տեղ չթողնել, ինչը հիմնականում նրանց հաջողվում է:

Ստուգումները ցույց են տվել, որ դպրոցի մանկավարժական հանրույթի, տնօրինության առջև դրված, ինչպես տնօրեն Լաուրա Մարտիրոսյանն է հաճախ սիրում օգտագործել, գերխնդիրներից են եղել ու կան դպրոցում կարգ ու կանոնի, աշխատանքային կարգապահության ամրապնդման ու ներդրողական վերահսկողության հարցերը:

Դասալսումների՝ որպես ներդրողական վերահսկողության և, ինչու չէ, նաև սովորողների գիտելիքների ու կարողությունների, ուսուցիչների աշխատանքի գնահատման հիմնական ձևի ուղղությամբ բավարար աշխատանքներ են տարվել, որը հեշտությամբ հաստատվում են թվերով:

Տնօրինության բոլոր անդամները պահում են դասալսումների հատուկ մատյաններ: Ուրախալի է, որ բոլորի կողմից էլ գրառումները կատարվում են հիմնականում գրա-

գետ, պատշաճ մակարդակով, կան որոշակի բացթողումներ, սակայն դրանք որակ չեն կազմում:

Վերջին 2 տարիների ընթացքում ստուգվել են նաև մի շարք առարկաների, ինչպես նաև արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների դասավանդման դրվածքը: Ստուգումների արդյունքները միշտ էլ դարձել են քննարկման առարկա կամ մանկավարժական խորհրդի, կամ մեթոդխորհրդի, կամ մեթոդիավորումների նիստերում, կամ տնօրենին կից խորհրդակցությունում, սակայն, ըստ տեսչապետի, առանց պահանջվող վերլուծության:

Նման քննարկումները, տեսչապետի համոզմամբ, հազիվ թե ինչ-որ դրական արդյունք ապահովեն: Ինչպես կարելի է միանգամից լսել մայրենիի, հայոց լեզվի, հայ գրականության, ռուսաց լեզվի դասավանդման դրվածքը՝ առանց պահանջվող ձևով քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու: Ընդունվել են կամ շատ կարճ որոշում այս կամ այն առարկայի դրվածքի գնահատման վերաբերյալ, կամ էլ շատ ուռճացված, քննարկվող հարցերի հետ ոչ մի առնչություն չունեցող որոշումներ:

Առաջարկվեց ներքին ստուգումներին նոր որակ հաղորդել այն հաշվով, որ ստուգումը նպաստի ուսուցման և ուսումնառության մակարդակի բարելավմանը և ուսման որակի բարձրացմանը:

Դպրոցում ամեն տարի իրականացվում են նաև արտաքին ստուգումներ ՊԹԿ-ի կողմից: Բոլոր ստուգումների արդյունքները պահվում են փոխտնօրենի Ն. Բեգլարյանի մոտ:

Տեսչապետը նորից շեշտեց փոխտնօրենի գործունեությունը՝ նշելով, որ ներդրողական վերահսկողության ուղղությամբ տարվող աշխատանքների առյուծի բաժինը իրականացվում է նրա կողմից: Նա ունի իր պարտականությունների կատարման հստակ մշակված մեխանիզմներ, սկզբունքներ և առաջնորդվում է դրանցով: Քաջատեղյակ է ամեն ինչին: Պահանջվող ցանկացած վիճակագրական տվյալ ոչ միայն ընթացիկ ուստարվա, այլ նաև իր պաշտոնավարության բոլոր տարիների վերաբերյալ նա կարող է տրամադրել հաշվված թուղթերի ընթացքում: Ուսումնական աշխատանքների գծով տեղակալի համար դա անգնահատելի դրական հատկանիշ է: Եվ պատահական չէ կոլեկտիվում նրա ունեցած բարձր վարկանիշը:

Ընդհանուր առմամբ՝ ողջունելի է, որ տնօրենը, իր շուրջը հավաքելով կարող, բարձր պատասխանատվությամբ ու կատարողական կարգապահությամբ օժտված մարդկանց, կարողացել է ձևավորել ոչ միայն լավ տնօրինական թիմ, այլ նաև առողջ բարոյաինքնազնային մթնոլորտով մանկավարժական հանրույթ:

Մեթոդիավորումների կողմից կատարված աշխատանքների մասին հստակ պատկերացում կազմելու համար տեսչապետը բերեց հետևյալ վիճակագրությունը. բոլորն ունեն կազմած ու մեթոդխորհրդի նախագահի կողմից հաստատված աշխատանքային պլանների: Պարտադիր կերպով ամիսը մեկ անգամ հրավիրվում են մեթոդիավորման նիստեր, ու քննարկում տարաբնույթ հարցեր: Նախագահները կատարում են դասալսումներ, մասնակցում ներքին ստուգումների անցկացման աշխատանքներին, կազմակերպում ընդօրինակման դասեր և այլն: 2013-2014 ուստարում մեթոդիավորման նախագահների կողմից կատարվել

են 324, այս ուսումնականում՝ 282 դասալսում, ինչը շատ լավ ցուցանիշ է: Ուսուցիչների կողմից անցկացվում են փոխադարձ դասալսումներ, պահվում է փոխադարձ դասալսումների հաշվառման մատյան:

Տնօրինությունն ու դպրոցի ուսուցիչները գիտակցում են ուսուցման գործընթացում նոր տեխնոլոգիաների, գնահատման նոր համակարգի ներդրման կարևորությունը և այդ առումով շոշափելի հաջողությունների են հասել: Այսպես՝ դպրոցը հանրապետության հազվագյուտ դպրոցներից է, որտեղ 100 տոկոսով օգտվում են dasaran.am կայքի ընդձեռած հնարավորությունից: Որոշակի ուշադրություն են դարձնում տարբեր առարկաներից ամիսը մեկ անգամ համակարգչային կարիքներում կամ համակարգչի օգտագործմամբ դասերի անցկացմանը, ինչը ուսպլանով նախատեսված կարևոր ծրագրային պահանջներից է:

Գործում է նաև մանկավարժական խորհուրդ՝ որպես բարձրագույն խորհրդատվական մարմին, ինչի դերը դպրոցի կյանքում շատ կարևոր է: Դպրոցում պահվում են մանկավարժական խորհրդի արձանագրությունների բոլոր մատյանները՝ սկսած 1950 թվականից: Դրանցից են dasaran.am և «Նուռ» ծրագրի կենսագործման վերաբերյալ հարցեր, զեկուցումներ «Առողջ բարոյաինքնաբանական մթնոլորտ բոլոր հաջողությունների գրավականն է», «Գնահատման և գնահատականի հոգեբանական ազդեցությունը աշակերտների հուզական աշխարհի վրա», «Իմ անձնային դերն ու առաքելությունը աշխատանքային հանրությունում առողջ բարոյաինքնաբանական մթնոլորտ ապահովելու համար» և այլն:

Ստուգումը ցույց են տվել, որ դպրոցում առանց բացառության առկա են հանրակրթական հաստատությունում մշտական գործածության երաշխավորված բոլոր կարևորագույն և փաստաթղթերը, որոնք պահվում են լրացվում են հիմնականում ճիշտ:

Տնօրինության հսկողության տակ է փաստաթղթերի հետ տարվող աշխատանքը:

Համարյա ամբողջ է վարվում ուսուցիչների կողմից բաց թողնված ու փոխարինված ժամերի հաշվառման մատյանը (ուսման վարձ)՝ Ն. Բեգլարյանը: Համաձայն բաց թողնված և փոխարինված ժամերի հաշվառման մատյանի՝ ուսուցիչների կողմից անհարգելի բացակայություններ չեն լինում, իսկ հարգելի պատճառով բացակայած բոլոր ուսուցիչների ժամերը փոխարինվում են 100 տոկոսով: Ձարթոնքի է, որ 2012-2013, 2013-2014 և 2014-2015 ուստարիների ընթացքում բաց թողնված 1628 ժամը լրիվությամբ փոխարինվել է: Առանց ուսումնական գծով տեղակալ Ն. Բեգլարյանի կողմից տարվող հետամուտ ու նվիրական աշխատանքի՝ հնարավոր չէ նման արդյունքի հասնել: Ողջունելի կարելի է այնպիսի հրամաններ, ինչպիսին են աշակերտների՝ առանց տնօրենի թույլտվության դրամահավաքի, ինչպես նաև բջջային հեռախոսները դպրոց բերելը արգելելու մասին հրամանները: Դրա հետ միասին պետք է նշել, որ համարյա թե չկան խրախուսական ու վարչական տույժեր կիրառելու վերաբերյալ հրամաններ:

Մոտ 2 շաբաթ տևած տքնաջան աշխատանքի շնորհիվ հանձնաժողովին հաջողվել է ստուգել ոչ միայն դպրոցավարության հետ կապված բոլոր հարցերը, այլ նաև, բացի տեխնոլոգիա և կերպարվեստ առարկաներից, մնացած բոլոր

առարկաների դասավանդման դրվածքը 1-9-րդ դասարաններում: ՆԶՊ առարկայի դրվածքը գնահատվել է ռազմահայրենասիրական աշխատանքների մասով «լավ», մնացած բոլոր առարկաների (19) դասավանդման դրվածքը՝ «բավարար»: Ստուգված 60 ուսուցիչ 22-ի աշխատանքը գնահատվել է «լավ», մնացածներից՝ «բավարար», դրանց մեջ կան այնպիսիները, որոնք վերապահումով են «բավարար» գնահատվել:

Դրա հետ միասին ստուգումը ցույց է տվել, որ ավելի քան 70 հոգուց բաղկացած մանկավարժական հանրություն չկան կոչում, տարակարգ ունեցող և կառավարական բարձր պարգևների արժանացած ուսուցիչներ, ինչը մասամբ պայմանավորված է նրանով, որ հանրություն ճանաչում ունեցող ուսուցիչների մի մասը տեղափոխվել է ավագ դպրոցներ:

Արտադասարանական և արտադպրոցական ուսումնական ու դաստիարակչական աշխատանքների ուղղությամբ վերջին տարիներին շարունակվել է նպատակասլաց ու պլանաչափ աշխատանքների իրականացումը դպրոցում, ընդ որում՝ դաստիարակչական աշխատանքներում դպրոցի հաջողությունները շատ ավելի տեսանելի ու շոշափելի են, քան ուսումնական ոլորտում:

Ձեկուցման շուրջ ծավալվեց մտքերի ակտիվ փոխանակում: Ելույթ ունեցան ուսուցիչները, փոխտնօրեններն ու տնօրենը, կրթության պատասխանատուները: Կրթության բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, մատնանշելով դպրոցում կատարված գեղեցիկ աշխատանքները երեխաների դաստիարակության, արտադպրոցական աշխատանքների, դասղեկական և այլ ուղղություններով, նշեց, որ եթե դաստիարակության բնագավառում հաջողությունները շոշափելի են, կան փաստեր, ապա նույնը չի կարելի ասել կրթության բնագավառում: Նրա կարծիքով, այս ստուգման արդյունքները խթան կհանդիսանան կրթական աշխատանքները նորովի կազմակերպելու համար:

Մանկխորհի նիստում ընդարձակ ելույթ ունեցավ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը: Նախարարի ելույթի հիմնական գաղափարը ուսուցիչ նվիրված աշխատանքի, ուսման որակի հարցերն էին: Ուսուցիչի աշխատանքը ամենադժվարներից մեկն է այն առումով, որ այն գնահատվում է վերջնական արդյունքով, որը և ուսման որակն է, և՛ արժանավոր անհատ ձևավորելը: Եվ եթե այս ամենը դեռևս պահանջվող մակարդակով չի ապահովվում, նշանակում է, մեր պետական քաղաքականության այդ պահանջը դեռևս չի կատարվում: Սա բավականին երկար ու բարդ գործընթաց է, որը կախված է մի շարք պայմաններից, բայց ամենակարևորը որակյալ ուսուցչական կազմ ունենալն է, առանց որի հնարավոր չէ այդ գերխնդիրը իրականացնել՝ ինչքան էլ դպրոցի տեխնիկական հագեցվածություն, արտաքին պայմաններ ապահովվեն: Եվ սա է մեզ մտահոգիչը: Նախարարը ցավով նշեց, որ մեր մանկավարժական համակազմը համալրելու խնդիր առաջ եմք կանգնած, և պետք է համատեղ ուժերով աշխատանքները վերակառուցել՝ սկսած նախադպրոցական օղակից:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ավարտվեց ուսուցիչների վերապատրաստման հերթական փուլը:

Մարտի 14-23-ը կայացած դասընթացներին մասնակցում էին մանկավարժներ՝ Արցախի տարբեր բնակավայրերից:

2012 թվականին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պլանով նախատեսվել էր հանրակրթական դպրոցի բոլոր ուսուցիչներին վերապատրաստել, որին կհետևի դասընթացները հաջողությամբ ավարտածների ատեստավորումը: Հարավից էլ էին ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մասնագետները և Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դասախոսները, ովքեր արդեն չորրորդ տարին է՝ գալիս են Արցախ և դպրոցականների գարնանային արձակուրդի օրերին անցկացնում վերապատրաստման դասընթացներ:

ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը տեղեկացրեց, որ առաջին տարում մասնակիցների թիվը 848 էր, իսկ 2013 թվականին վերապատրաստվել է 805, 2014-ին՝ 713, 2015-ին՝ 668 ուսուցիչ: Այս տարվա օգոստոսին կիրականացվի վերապատրաստված ուսուցիչների ատեստավորումը, իսկ եկող տարի՝ 2016-ին, կկայանա վերապատրաստման վերջին 5-րդ փուլը:

Ռայա Մուսայելյանի խոսքով՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու իրավունք ունեն առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչները, ընդ որում՝ վերջին տարին այն դպրոցում, որտեղից երաշխավորվել է վերապատրաստման: Ըստ «Հանրակրթության մասին» օրենքի՝ այն մանկավարժները, ովքեր ունեն բուհական կրթություն և առնվազն հինգ տարի դասավանդում են այլ առարկա, իրավունք ունեն մասնակցելու հենց այդ առարկայի վերապատրաստման դասընթացներին: Բնականաբար, նման դասընթացներին ուսուցիչները ծանոթանում են կրթության բնագավառում եղած նորություններին, նոր տեխնոլոգիաների կիրառմանը:

Ատեստավորմանը հաջողորմ է տարակարգի շնորհման փուլը: Ռայա Մուսայելյանը նշեց, որ արդեն կան ուսուցիչներ, ովքեր օգտվում են տարակարգից:

Ներկայացնում ենք մեր գրույցը դասընթացավարներից մեկի՝ ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի պատմության մասնագետ Աշոտ ՂՈՒՎԱՍՅԱՆԻ հետ:

- Արդեն 4-րդ տարին է, որ մասնակցում են վերապատրաստման դասընթացներին և հույս ունեն, որ գալիք տարի նույնպես այստեղ կլինեն: Ուզում եմ շեշտել, որ Արցախը ինձ անչափ հարազատ է: Առաջներում դասախոսություններով հանդես եմ եկել Արցախի ոչ պետական բուհերում, շաբաթներով մնացել եմ այստեղ, սիրում եմ այս երկրամասը՝ որպես իմ հայրենի օջախի գեղեցիկ անկյուն:

Այս դասընթացները նախատեսված են բնույթ ունեն, և համապատասխան վկայական ստանալով, մանկավարժները հաղթահարում են ատեստավորման առաջին փուլը, ինչն էլ նշանակում է, որ համապատասխանում են զբաղեցրած պաշտոնին: Հինգ տարին մեկ պարտադիր բոլորը պետք է մասնակցեն վերապատրաստմանը: Մենք աշխատում ենք մանկավարժության ասպարեզում եղած և առարկային վերաբերող մասնագիտական նորությունները փոխանցել դասընթացների մասնակից ուսուցիչներին: Ես, օրինակ՝ հիմնական շեշտը դնում եմ գործնականի վրա, որովհետև պատմության ուսուցիչները տեսականը շատ քիչ են կիրառում դասին, իսկ կարևորը պրակտիկան է:

- Պատմություն առարկան գործնական ի՞նչ աշխատանք է ենթադրում:

- Օրինակ՝ տեքստի քարտեզագրում, այսինքն՝ տեսական դրույթը վերածում ենք պատկերի, մոդելավորում ենք: Դա պատմության դասավանդման լավագույն մեթոդներից է:

- Պարոն Ղուկասյան, որքանով են հաջողված այսօր դպրոց մուտք գործած պատմության դասագրքերը: Հարկ է նշել, որ վերջին շրջանում շատ կարող է շրջադարձեր եղան, պատմագիտությունը անհրաժեշտ սրբագրումներ ունեցավ: Պատմության դասագրքերը պարունակում են անհրաժեշտը:

- Շատ տեղին հարց է, ու բավականին դժվար է պատասխանել, որովհետև այսօր մենք չունենք այն մոդելը, որը ժամանակակից դպրոցականին անհրաժեշտ է: Ծնողների մի մասը,

չգիտես ինչու, ինչքան սեղմ է դասագիրքը, այնքան բողոքում են ծավալից: Իմ կարծիքով՝ դասագրքում գրված ամեն ինչ էլ, որ պիտի սովորեն: Այնտեղ կան երկրորդական, երրորդական կարգի փաստեր, որոնք լրացնում են հիմնականը: Իմացությունը ճշտում է չափորոշիչը, և չափորոշիչն է սահմանում գլխավորը, որը պետք է իմանա աշակերտը: Դասագրքերը կատարյալ չեն, բայց կան հաջողվածներ: ՀՀ ԿԳ նախարարությունը հայտարարում է դասագրքերի մրցույթ, բայց դասագրքաստեղծ խմբերի վերահսկողություն չի իրականացվում: Ցանկացողները կարող են խոսք կազմել և դասագիրք ստեղծել: Այլ հարց է, թե այդ մարդիկ որքանով ծանոթ են մանկավարժությանը: Իմ կարծիքով՝ դասագիրքը պետք է դառնա աշակերտի գրուցակիցը, աշխատանքային գործիքը, որը նրան կսովորեցնի մտածել: Այսօր կարևոր ոչ թե տեղեկացված լինելն է, այլ մտածել սովորելը, որովհետև փաստերի առատությունը դառնում է հյուլե, եթե աշակերտը չի կարողանում խորհրդածել այդ ամենի շուրջ, նորը համարել իր իմացածին, դարձնել իր սեփականությունը: Ինքս դասագրքերի հեղինակ եմ: Ուրախությամբ ասեմ, որ Արցախի դպրոցներում 8-րդ, 9-րդ դասարանների «Համաշխարհային պատմություն» դասագրքերը իմ հեղինակածներն են: Անչափ հաճելի է, որ ուսուցիչները գոհունակությամբ են խոսում այդ դասագրքերի մասին: Առաջիկայում մտադիր եմ գալ և դասավանդներ կատարել, որպեսզի հաջորդ հրատարակությունը առավել հղկված և ամբողջական լինի:

- Այսինքն՝ դպրոցներում տարբեր դասագրքեր են օգտագործվում:

- Հայաստանում այլընտրանքային դասագրքեր կան, դպրոցն է ընտրում իր դասագիրքը:

- Եվ իրեն արդարացնում է այդ մեթոդը:

- Նույն ծրագրի շրջանակում են ձևավորվում դասագրքերը: Ռուսաստանում, օրինակ՝ կան տասնյակ այլընտրանքային դասագրքեր, ու-

սուցի հայեցողությամբ հանդերձ՝ դպրոցն իր պայմանները հաշվի առնելով է ընտրություն կատարում: Ասեմ նաև, որ մեր հեղինակած դասագրքերը նախօրոք տեղադրում ենք համակարգչում, և մանկավարժները կարողանում են ծանոթանալ ու ընտրություն կատարել:

- Չնայած այսօր ունեցած լայն հնարավորությանը, առաջվա պես շատ քիչ բան գիտենք մենք մեր մասին: Պատմության դասագրքերը կարողանում են դպրոցականին մոտեցնել իր իսկ ժողովրդի պատմությանը:

- Շատ քիչ է հաջողությունը: Ասեմ՝ ինչու. դասագիրքը պետք է մոտենա իրականությանը, հակառակ դեպքում այն դառնում է տեսություն ինչ-որ հեռավորի ու երևակայականի մասին: Հենց այս դասընթացներին նաև քննարկեցինք պատմության հայեցակարգային դրույթները, ինչպես ամենք, որ պատմությունը մոտենա իրականությանը, կյանքին, ինչպես վերլուծե՞ք ու գնահատե՞ք: Եթե չկարողանանք դա անել, դասագրքի հրամցումը գիտելիքը աշակերտի սեփականությունը չի դառնա:

- Հի արմատավորվի նրա գիտակցության մեջ:

- Այո, որովհետև կյանքը մեկ բան է ասում, դասագիրքը՝ մեկ այլ բան: Պիտի կարողանանք ազգային արժեհամակարգի հենքով իրականությունն ու տեսությունը իրար մոտեցնել:

- Հաճախ ենք ասում և դժվարին պահերին՝ առավել հաճախ, որ պետք է պատմությունից դաս քաղենք՝ սխալներից հնարավորինս խուսափելու համար: Ինչու՞ չենք կարողանում գնահատել պատմության առաջնորդող դերը: Հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը:

- Ճիշտ եք ասում, և քիչ առաջ դասին հենց այդ մասին էինք խոսում: Մեր կարևոր հայեցակարգային դրույթներից է պատմությունից դասեր քաղելը, հակառակ դեպքում պատմությունը պատժում է, և ստիպված ես վերապրել այդ ամբողջը: Հենց պատմությունից դաս չառնելն է, որ չի օգնում մեզ այսօր կարևոր որոշումներ կա-

յացնելու ու կողմնորոշման հարցում ...

Միշտ պետք է ապավինենք սեփական ուժերին, սա ևս դաս է: Պատմությունը բազում վկայություններ ունի, որոնց ուշադրություն չենք դարձնում: Ասեմ մեկը. Հայկական լեռնաշխարհը համարվում է հնդեվրոպական ազգերի հայրենիքը: Այսօր հնդեվրոպացիները հեռացել են իրենց պատմական հայրենիքից և ապրում են մոլորակի տարբեր անկյուններում: Հայերիս համար սա հրաշալի կռվան է, բայց մենք շեշտը դնում ենք քրիստոնեության վրա, որը մեզ չի օգնում մեր ազգային խնդիրների լուծման գործում: Անհրաժեշտ է հայացք հառել ծագումնաբանությանը: Օրինակ՝ ֆրանսիացին եթե տեղեկանա, որ իր նախահայրենիքը գտնվում է Հայկական լեռնաշխարհում, բնականաբար, կկամենա առավել տեղեկանալ իր արմատներին: Թվում, թե այնքան էլ կարևոր հարց չենք քննարկում, բայց, հավատացե՛ք, պատկերը փոխվում է: Պարծենալու իրավունքով ասում ենք՝ առաջին քրիստոնյա երկիրն ենք, բայց Եվրոպային դա չի հետաքրքրում:

- Կրկին անդրադառնանք դասընթացներին, պատմության ուսուցիչները ինչի՞ կարիք ունեն:

- Մեծ է հետաքրքրությունը իմացության հանդեպ, ուզում են շատ բան իմանալ: Պատմության մասնախմբում է մեզ հյուրընկալած Խ.2 դպրոցի տնօրենը, ով, համոզված եմ, առարկայի լավագույն մասնագետների շարքում է, բայց հետաքրքրությամբ լեցուն՝ ուզում է ավելին իմանալ: Ընդհանրապես, արցախցի ուսուցիչը առանձնանում է գիտելիքի նկատմամբ ունեցած սիրով: Այս դասընթացներին ներկայացված պատմություն առարկայի ծրագիրը կազմել ենք՝ ելնելով այն բանից, թե ինչ է պակասում այսօր դպրոցում: Ծրագիրը ներառում է պատմության հայեցակարգային դրույթները, գնահատման համակարգը, հոգեբանության հարցեր և գործնական պարասպունքներ: Կազմել եմ հետաքրքիր դասերի պլաններ և տեսանյութերը տեղադրել համակարգչում:

- Ի՞նչ որակներով պետք է օժտված լինի պատմության ուսուցիչը:

- Ամենից առաջ՝ բանիմացությամբ ու իրավասությամբ: Իմ համոզմամբ՝ իրավասու է այն ուսուցիչը, ով կարող է մասնագիտական և մեթոդական հմտությամբ հաղթահարել դասաարոցեսի թելադրած ցանկացած իրավիճակ: Պատմության դասավանդումը ամեն պահի կարող է նոր իրավիճակներ ստեղծել: Ուսուցիչը պետք է կարողանա թեմատիկ միավորներ կազմել, ինքնուրույն ծրագրեր մշակել, վերլուծել իր դասը՝ պարզելու, թե ինչու ցանկալի արդյունքի չհասավ, որպեսզի հաջորդ անգամ այդ ամենը հաշվի առնի: Պատմության ուսուցիչ լավագույն զենքը կոնկրետությունն ու հստակությունն է ու նաև՝ մոդելներ ստեղծելը:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մ ԹՎԻ ԾՆՈՒՆԸ

«Մաթեմատիկական այնքան լուրջ առարկա է, որ երբեմն կարելի է թույլ տալ մեզ այն զվարճալի դարձնել»

Բ.Պասկալ

Կյանքի առաջընթացի մեջ մեծագույն դերերից մեկը, եթե ոչ մեծագույնը, պատկանում է մաթեմատիկային և մաթեմատիկական կրթությանը:

Ինչպես կազմակերպել կրթության գործընթացը, որտեղ մաթեմատիկական դառնա հետաքրքիր ու մատչելի աշակերտների համար: Եթե աշակերտը պետք է նոր գիտելիք ստանա, ապա այդ նորը ինքը պետք է կառուցի, որի համար անհրաժեշտ է համապատասխան

միջավայր: Ահա թե որն է արդյունավետ ուսուցման հիմնախնդիրը. կարողանալ ստեղծել միջավայր, որտեղ աշակերտը դառնա սովորող:

Կյանքի առաջընթացը կառուցելու և այն տեսնելու համար միայն մաթեմատիկական կրթության լույսը բավարար չէ. անհրաժեշտ է ձևավորել մարդ, որը կարող է ստեղծագործաբար լուծել իր առջև դրված խնդիրները, իսկ դրա համար պետք է ստեղծել համապատասխան միջավայր:

Այդպիսի միջավայր հանդիսացավ Մ թվի ծննդյան օրվան նվիրված միջոցառումը, որն անցկացվեց Ասկերանի շրջանի Խաչենի միջնակարգ դպրոցում:

Մարտի 14-ին աշխարհում նշում

են ամենամստվոր տոներից մեկը՝ Մ թվի ծննդյան օրը: Մ թվը մաթեմատիկական հաստատում է, որը հավասար է շրջանագծի երկարության հարաբերությունը տրամագծին:

Թվային արտահայտությամբ Մ-ն սկսվում է 3,141592-ով և ունի անսահման մաթեմատիկական շարունակություն: Առաջին անգամ այս տոնը նշվել է 1988թ. Սան-Ֆրանցիսկոյի գիտական հանրահայտ էքսպլորատորիում թանգարանում՝ ֆիզիկոս Լարրի Շոյի կողմից, ով առաջինը նկատեց, որ ամսաթվի ամերիկյան գրագրության ընթացքում (ամսաթիվ/օր) մարտի 14 ամսաթիվը՝ 3/14 և ժամը 1:59:26 համընկնում են թվի սկզբում գտնվող

թվերի հետ՝ =3,1415926... Խաչենի միջնակարգ դպրոցի մաթեմատիկասերները առաջին անգամ այս տարի մեծ շուքով նշեցին Մ թվի ծննդյան օրը՝ այն վերածելով իսկական տոնակատարության: Միջոցառումը սկսվեց ժամը 1:59:26-ին: Դահլիճը զարդարված էր. թվի հետ կապված պատահանքներ, մաթեմատիկային նվիրված թևավոր խոսքեր և այլն: Դահլիճի կենտրոնում դրված էր տոնական տորթը (ինչ ծնունդ՝ առանց տոնական տորթի): Աշակերտները պատմեցին Մ թվի ծագման, կիրառությունների, դերի և նշանակության մասին: Արտասանեցին տարբեր լեզուներով բանաստեղծություններ և գովեստի խոսքեր՝ նվիր-

ված Մ թվին: Մ թվի երաժշտության ներքո հանգրվան տորթի մոմերը՝ երազանք պահելով, որ Արցախում միշտ խաղաղություն լինի, ու բոլոր «ծնունդները» հանդիսավոր նշվեն: Միջոցառման երկրորդ փուլը մաթեմատիկական մրցույթ էր: Միջոցառումը եզրափակվեց հյուրասիրությամբ: Աշակերտները ներկայանեցին հյուրասիրեցին իրենց իսկ պատրաստած Պի-ով սկսվող թխվածքներով, ուտեստներով, քաղցրավենիքներով:

Օֆելյա ԳՐԻԳՈՐՅԱՆ Խաչենի միջնակարգ դպրոցի փոխվարժ

ՆԱԽԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՊԱՐԱՊՍՈՒՆՔՆԵՐ՝ ԲԱՑ ԲՈՒՈՐԻ ԱՌՋԵՎ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ-ԴՊՐՈՑ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻՑ ՇԱՅՈՒՄ ԵՆ ԲՈՒՈՐԸ

Մանկավարժական կոլեկտիվներում ունեցած հանդիպումների ժամանակ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, արժարժեքով ուսման որակի բարձրացման հարցը, որը ցածր է հատկապես միջին և բարձր օղակներում, խնդրի լուծման ուղիներից մեկը տեսնում է տարրական օղակում երեխաներին պատշաճ մակարդակով գիտելիքներ տալու մեջ: «Տարրական օղակում գիտելիքներ չունեցող աշակերտից հրաշք չսպասեք, թե նա կարող է լավ գիտելիքներ ունենա բարձրում», - համոզված է նախարարը: Դրանով հանդերձ՝ նա կոչ է անում. «Ես ուզում եմ նախադպրոցականից սկսել: Վերջին երկու տարվա ընթացքում լուրջ ուշադրություն է դարձվում նախադպրոցական կրթությանը, և որի կարևոր խնդիրներից մեկը երեխաներին դպրոցին նախապատրաստելն է: Հիմա այդ խնդիրը դնում ենք դպրոցի առաջ: Նախադպրոցական ավագ խմբի երեխաները հաջորդ տարի լինելու են ձեր առաջին դասարանցիները: Աշխատեք նրանց հետ, նրանց լավ նախապատրաստեք դպրոցին: Մենք այս խնդրի իրականացումն էլ ենք դրել ձեր ձեռքը: Ուրեմն՝ սկսեք այդտեղից»:



կացնում մանկապարտեզում (ինչպես ասացինք՝ կրթության բաժնի կողմից նաև հրավիրելով դպրոցների դաստիարակներին)՝ տարվա մեջ մի քանի անգամ, և հետապնդում են մի քանի նպատակ՝ երեխաների գիտելիքների ստուգում, մանկավարժների փորձի կատարելագործում և փոխանակում, քննարկումների մշակույթի ձևավորում:

Այս մանկապարտեզում աշխատում են ինչպես փորձառու, այնպես էլ սկսնակ

վել են, այլ որպեսզի փորձեն իրենց ուժերը, տեսնեն արդյունքը: Տնօրենի գնահատականով՝ անցյալ, նախանցյալ տարվա համեմատությամբ՝ իր մանկապարտեզի մանկավարժները բավականին շատ բան են կիրառել աշխատանքում իրենց մեթոդիկայից, դարձել են համարձակ, անկաշկանդ:

Վեց օր շարունակ մանկապարտեզի չորս խմբերում բաց պարապմունքներ կազմակերպվեցին: «Ընտանի կենդանիներ» (դաստիարակ՝ Իրինա Հայրապետյան), «Իմ ընտանիքը» (Անահիտ Հակոբյան), «Մի նկարի պատմություն» (Լիանա Ղահրամանյան), «Վայրի կենդանիներ» (Ալյոնա Դավթյան), «Երկրաչափական պատկերներ» (Օքսանա Առստամյան), «Նապաստակին մկեր» (Ինարա Առստամյան) թեմաներ



րով: Դրանցից երեքը միջին խառը խմբեր էին, մեկը՝ մտուրային: Այս վերջինի դեպքում առաջին անգամ եր բաց պարապմունք անցկացվում, բայց ինչպես մյուսները, այնպես էլ այս խմբում դաստիարակչուհին հաջողությամբ իրականացրեց իր առջև դրված խնդիրները: Մենք չենք խոսի խմբասենյակի կահավորվածության, դաստիարակների մանկավարժական տակտի ու վարպետության, երեխաների ակտիվության մասին, որոնք, իրոք, կային: Ասենք միայն, որ բոլոր խմբերում էլ պարապմունքներն անցան հետաքրքիր: Ներկայաներին ուրախություն պատճառեցին երեխաների

ինացությունը, ուսուցչի ծգտումը երեխաների՝ գրական, մաթուր շեշտադրությամբ արտահայտվելու ուղղությամբ: Տարբեր դպրոցներից հյուր եկած սկսնակ դաստիարակները անկեղծ երախտագիտություն հայտնեցին բաց պարապմունքների կազմակերպիչներին՝ փորձ ձեռք բերելու համար, ինչի կարիքը բոլորն էլ զգում են:

Դրանք ոչ միայն մանկավարժների իրարից սովորելու պարապմունքներ էին, այլև կարելի է որակել որպես սեմինար-պարապմունքներ կամ մանկավարժական դասեր, ինչու չէ՞ վերապատրաստման դասընթացներ՝ սկսնակների համար, որ անցկացրեց մանկապարտեզի տնօրեն Իրինա Գրիգորյանը: Բերենք նրա խորհուրդներից մի քանիսը, որ նա քննարկումների ժամանակ տվեց սկսնակ մանկավարժներին.

«Պարապմունքների մեծ մասը խաղերի միջոցով անցկացրեք, որպեսզի երեխաների հետ շատ անմիջական լինեք: Չպետք է գոռալ երեխայի վրա, պատժել: Միայն սիրով կարելի է երեխաներին դաստիարակել: Երբ մանկավարժը սիրում է, երեխան կրկնակի է վարձահատույց լինում իր սիրով: Սերը օգնում է, որ երեխան շուտ ընկալի մանկավարժի տվածը, և ձևավորվի որպես լավ անձնավորություն:

«Կա սկսնակ, որը ոչինչ չգիտի, բայց ասում է՝ ես ամենալավն եմ, ամեն ինչ գիտեմ: Նման անձնավորությունը ոչ մի բանի չի հասնի, որովհետև ամզան ամենավորձառու մանկավարժը սովորելու բան ունի: Միևնույն ժամանակ, մարդու ամենամեծ միտումը ինքն իրեն թերագնահատելն է: Դու, որպես սկսնակ, չպետք է նսեմանալու աստիճանի համեստ լինես, մտածելով, որ ոչինչ անել չես կարող: Դու պետք է զգաս, որ բավականին շատ բան գիտես, կարող ես մատուցել երեխաներին, բայց սովորելու տեղ ունես: Այդպիսի մտեցում

ուներող մանկավարժը ավելի շուտ կաճի, ավելի շատ առաջ կգնա, քան նա, ով ինքնահավան է ու չափից դուրս ինքնավստահ:

«Ես դեմ եմ ձևականությանը: Թող պարապմունքը վատ լինի, բայց ներ-



կայացում չլինի:

«Չվախենաք ոչ դիտողությունից, ոչ առաջարկությունից: Դժվար է դիմացինի առավելությունը կամ թերությունները տեսնել: Պիտի կարողանալ ճիշտ գնահատել: Եթե դիտողություն ես անում, նաև քո առաջարկություն արա՝ իսկ ես ինչպե՞ս կանեի:

«Դու պետք է կարողանաս քո դիտողությունը, առաջարկությունը պաշտպանել, հիմնավորել: Առանց հիմնավորման ոչ մի բան մի ասա:

«Քննարկելն ավելի դժվար է, քան պարապմունք անցկացնելը: Դա էլ է ունակություն:

Կրթության բաժնի գլխավոր մասնագետ, նախադպրոցական կրթությունը համակարգող Անահիտ Մեսրոպյանը խոստովանեց, որ հ. 3 մանկապարտեզի տնօրենի նախաձեռնությունը բաժնին խորհելու տեղիք է տվել, և որոշել են ծրագիրը դարձնել շարունակական: Եվ, իրոք, չանցած մի քանի օր՝ մասնապարապմունքներ, որոնց հրավիրվեցին դպրոցների սկսնակ դաստիարակները, անցկացվեցին նաև հ.2 մանկապարտեզում և կշարունակվեն: Այս նախաձեռնությունը, որը գալիս է ներքևից, յուրատեսակ ներդրում է կրթության համակարգում: Սա համագործակցություն է, որից շահում են բոլորը:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մանկություն: Կյանքի մի շրջան, որն իր յուրահատուկ գույներով է լցնում աշխարհն ու կյանքը դարձնում իմաստալից:

Այո, մանուկները մեր ապագան են և գալիքը կերտողները, ուստի, ըստ իս, տեղին էր և նպատակային մարտի 16-ից 18-ը Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի նախաձեռնությամբ (բաժնի պետ՝ Կ.Մարգարյան և գլխավոր մասնագետ Ա.Մեսրոպյան) անցկացված սեմինար-պարապմունքները, որոնց մասնակցում էին Ստեփանակերտի դպրոցներին կից գործող նախապատրաստական խմբի դաստիարակները:

Սեմինար-պարապմունքներ-դասալսումները ապացուցեցին, որ այսօրվա սերունդը դաստիարակության և կրթության համար ունի ժամանակակից բոլոր հնարավորությունները, իսկ դաստիարակները հնարավորություն ունեցան ծանոթանալու ժամանակակից մեթոդներին:

Եվ ահա մեր առջև իր հյուրընկալ դռները



բացեց Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզը:

Ջերմ ու սրտաբաց ընդունելությունը վկայում էր, որ միշտ էլ կարևոր դեր ունի փորձի փոխանակումը և համագործակցությունը, որն էլ սեմինար-պարապմունքների հիմնական նպատակն էր:

Լինելով նախապատրաստական խմբի դաստիարակ՝ ինձ հետաքրքրում էր մանկա-

պարտեզի առօրյան: Նշեն, որ դպրոցներում գործող նախապատրաստական խմբերում ևս պարապմունքները անց են կացվում շատ հագեցած և բազմաբնույթ: Բայց նորի հետ միասին միշտ էլ ցանկալի է նաև ծանոթանալ փորձառու դաստիարակների մեթոդներին, քանզի նորը պիտի միշտ կառուցվի հնի ու ավանդականի վրա:

Պարապմունքները վարում էին փորձառու դաստիարակները: Յուրաքանչյուր

պարապմունք (խոսքի զարգացում, մայրենի լեզու, մաթեմատիկա, նկարչություն, ծեփ, երաժշտություն...) հագեցած էր, կիրարկվում էին համապատասխան դիտողական պարագաներ, հանելուկներ, շուտասելուկներ, արտահայտիչ արտասանություն, ֆիզկուլտուրա դարձեր:

Դաստիարակները հիմնականում գործածում էին խաղային մեթոդը (խաղ-վարժություններ, խաղ-առաջադրանքներ...) և այս մեթոդների միջոցով ամրապնդում ու խորացնում էին երեխաների պատկերացումներն ու գիտելիքները:

Այս առումով փորձի փոխանակման նպատակով անցկացված դասալսումները, ըստ մասնակիցների, նպատակային, տեղին ու արդյունավետ էին, որի համար էլ հայտնում ենք մեր գոհունակությունը՝ հուսալով, որ դրանք կլինեն շարունակական:

Իննա ՄԱՆԱՍՅԱՆ
Ստեփանակերտի հ.12 հիմնական
դպրոցի նախապատրաստական խմբի
դաստիարակ



ԸՆԴՈՐԻՆԱԿԱՄԱՆ ԴԱՍ

ԱՎԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ԵՆ

Մարտի 7-ին տեղի ունեցավ Շոշի Ա.Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի մեթոդիկների նիստը, որում ընդգրկված են Շոշի, Գարաբաղի, Քասախի միջնակարգ և Դաշուշենի հիմնական դպրոցները: Նիստը վարեց Շոշի մեթոդիկների ղեկավար Գ.Գրիգորյանը: Գիտենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաները ներթափանցել են մեր կյանքի բոլոր բնագավառները, այդ թվում նաև՝ կրթական համակարգ և հեշտացրել ցանկացած առարկայից նոր գիտելիքների ձեռքբերումը, ծանոթանալու նորագույն մեթոդներին և դրանք դասապրոցեստում կիրառելուն: Սակայն անչափ կարևոր են կենդանի շփումները, որոնց ժամանակ հարևան դպրոցների ուսուցիչները պարբերաբար հավաքվում, ընդօրինակման (բաց) դասեր են կազմակերպում, և յուրաքանչյուրն իր առարկայի գծով քննարկում նոր մեթոդների կիրառումը դասապրոցեստում, առաջարկություններ անում, ուրախանում միմյանց հաջողություններով և ուսանելիք ընդօրինակում՝ հետագայում իրենց դասապրոցեստում կիրառելու նպատակով:

Ուսանելի են նաև նորություններով հարուստ, գիտականորեն հագեցած և մշակված մեթոդական ու մասնագիտական զեկուլցունները: «Ռուսաց լեզվի ստեղծագործական դերը դասապրոցեստում» թեմայով զեկուլցունով համոզեց եկավ փորձառու ուսուցչուհի Ա.Պետրոսյանը: Մեթոդիկների նիստը ուներ մեկ նպատակ՝ պահպանել կրթական համակարգի լավագույն ավանդույթները, բարելավել ուսումնական գործը նշված դպրոցներում: Փնջային մեթոդավորման

նպատակն էր նաև դասավանդման նոր մեթոդներն ու եղանակները, կիրառվող առաջավոր փորձը միմյանց հաղորդելը: Շոշի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ չորս ընդօրինակման դաս՝ մայրենիից՝ երկրորդ դասարանում (ուսուցիչ՝ Մ.Յարամիշյան), օտար լեզվից՝ անգլերենից 8-րդ դասարանում (ուսուցիչ՝ Ա.Աղայան), ինֆորմատիկայից՝ 6-րդ դասարանում (ուսուցիչ՝ Գ.Գրիգորյան) և կենսաբանությունից՝ 7-րդ դասարանում (ուսուցիչ՝ Ա.Առաքելյան): Բոլոր դասերն էլ կայացած էին և անցան շատ հետաքրքիր: Հատկապես բոլորին հետաքրքրեց կենսաբանությունից բաց դասը, որն անց էր կացնում սկսնակ ուսուցչուհի Անահիտ Առաքելյանը:

«Եթե դուք կարողանաք ճիշտ ընտրել ձեր մասնագիտությունը, ապա երջանկությունը ինքը կգտնի ձեզ»: Կ.Ուշինկոն այս խոսքերը իրավամբ կարելի է վերագրել սկսնակ ուսուցչուհուն: Դասի թեման էր «Միջատների դասի ընդհանուր բնութագիրը, կառուցվածքային առանձնահատկությունները»:

Դասը սկսվեց «մտազոռիկ» մեթոդի գործադրմամբ: Աշակերտները ակտիվ պատասխանում էին ուսուցչուհու հարցերին: Դասարանը կառավարված էր «Միջատների դասին» վերաբերվող գունավոր պաստառներով, սեղանին կար չորացրած միջատների հավաքածու, գրատախտակին գծված էր խաչբառ, որը լուծելու համար ապահովվեց ամբողջ դասարանի մասնակցությունը, օգտագործվեց ինտերակտիվ մեթոդը, պահպանվեց միջառարկայական կապը, ճիշտ բաշխվեց ժամանակը: Միջատներ-

րի և բույսերի կապը ցուցադրվեց փոքր ներկայացման միջոցով: Աշակերտները միջատների վերաբերյալ ասացին համելուկներ: Բոլորը գնահատվեցին:

Նոր դասի թեման էր՝ «Հողվածոտանիների բազմազանությունը»: Ուսուցչուհին պարզ և մատչելի ձևով բացատրեց նոր նյութը, վերջում հարցերի միջոցով ամփոփեց դասը: Աշակերտների պատասխանները վկայում էին, որ ուսուցչուհին հասել է իր նպատակին: Այնուհետև հանձնարարվեց տնային առաջադրանք: Ուսուցչուհին ինքնավստահ էր, հանգիստ և ժպտեղ: Եվ այդ ամենը նպաստում էին դասի հաջողությանը: Այն հագեցած էր և շատ հետաքրքիր: Հուսով եմ՝ ուսուցչուհու ստեղծագործական եռանդը և լուրջ վերաբերմունքը կարողարացնեն բոլորի ակնկալիքները, և նա կհասնի լուրջ հաջողությունների:

Մեթոդիկների նիստի վերջում դպրոցի աշակերտների ուժերով կազմակերպվեց հանդես՝ նվիրված Կանանց միջազգային օրվան: Աշակերտները հանդես եկան երգով, ասմունքով, հումորով և բեմադրությամբ:

Ինչպես գիտենք՝ ապագան այսօրվա գործն է կերտում: Հուսով եմ՝ մեթոդիկների նիստը յուրաքանչյուր դպրոցի աշխատանք կդնի որակապես նոր մակարդակի վրա:

Այլա ԲԱԲԱՅԱՆ
Շոշի Ա.Աբրահամյանի անվ. միջն. դպրոցի բնագիտամաթեմատիկական առարկայական հանձնաժողովի նախագահ

Շնորհավորանք

ԺՐԱԶԱՆ



Անձ, որն իր մեջ ամփոփում է մարդկային ամենավեճ ու դրվատանքի արժանի որակները, որն ապրում է դիմացինի տրամադրությունը և նեցուկ է յուրաքանչյուրին:

Անձ, որի կերպարում ներդաշնակվում են թե՛ մարդկային, թե՛ մասնագիտական բոլոր արժանիքները:

Կազմակերպչական մեծ ու հմուտ կարողություններով օժտված՝ նա նոր որակ է հաղորդում ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Արդյունքում արժանանում է թե՛ աշակերտների և թե՛ ծնողների սիրուն ու հարգանքին: Նա հետաքրքիր, ուրախ, ջերմ, կենսախիճը բնավորություն ունի: Եվ կարևորն այն է, որ այդ գեղեցիկ բնավորությամբ կարողանում է իր դրական հույզերը և ուրախ գազանդները փոխանցել դիմացինին:

Խոսքը աստվածաշնորհի ու աստվածատուր մեծ կամքով Անահիտ Մետրոսյանի մասին է:

Նա անընդհատ պրպտումների մեջ է: Ձանք ու եռանդ՝ ի խորքը սրտի. սա է նրա գործունեությունը հարստացնող ու փառավորող գործունը:

Մեր սիրելի՛ գործընկերուհի, Ստեփանակերտի բոլոր հանրակրթական դպրոցների մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալները շնորհավորում են Ձեր հոբելյանը, մաղթում արևշատություն, առողջություն, ուժ ու կորով, նոր ձեռքբերումներ, ջերմեռանդ աշխատանք մատաղ սերունդի ուսուցման ու դաստիարակության ազգանվեր ու պատվաբեր գործում:

Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների ՄԿԱԳՏՏ

ԱՆՅԱՆԳԻՍ ՈՒ ՎԱՌՎՈՒՄ ՀՈԳՈՒ ՏԵՐ ՄՈՒՆԵՏԻԿԸ...

Կան մարդիկ, որոնց համար արելը, արարելը սոսկ պարտականություն չէ, այլ հոգու կանչ, մտքի թռիչք, հույզերի ու լույսերի ճախրանք:

Դեռ այդպիսի անհատականություն է Անահիտ Մետրոսյանը, որի 50 տարին բոլորեց վերջերս: Ու երբ մի հետադարձ հայացք ենք ձգում, ի մի բերում նրա անցած ուղին, տեսնում ենք, որ այն այնքան էլ հարթ ու հանգիստ չի եղել: Այսօր արդեն Անահիտը կայացած անձնավորություն է, որի կյանքի իմաստը հենց ժողովրդին ծառայելու, մատաղ սերունդին կրթելու և դաստիարակելու, պատանեկան խանդավառությամբ նվիրվելն է սիրած գործին:

Դիրքավոր ճիշտ է ասված՝ պետք չէ ապրել նրա հետ, ում հետ կարող ես, այլ պիտի ապրես նրա հետ, առանց ում չես կարող ապրել: Այսօր այդ առումով Անահիտը կատարյալ երջանիկ է, քանի որ ապրում է իրեն թանկ ու հարազատ մարդկանցով շրջապատված: Նա սիրասուն մայր է, որ հպարտ է երեք շնորհաշատ ու խելացի զավակներով, հոգատար ու նվիրված դուստր՝ ջերմ սիրով տոգորված, հավատարիմ ու կենսուրախ գործընկեր, ով կարողանում է հույսի ու լույսի շողեր սփռել շուրջբոլորը:

Նա իր մանկավարժական մկրտությունը ստացել է Աշոտ Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցում, որտեղ արդեն բառերով դար է, ինչ կատարում է մանկավարժի վեհ առաքելությունը: Բավական է միայն հիշատակել նրա իսկ ջանքերով ստեղծված գրականության հրաշալի կաթինետը, որը լեցուն է գրական-գեղարվեստական, հայ գրողների շունչն ու ոգին ազդարարող հուշատախտակներով ու պաստառներով: Անմոռանալի են նրա անցկացրած բաց դասերը, գրական-երաժշտական հանդեսները, հանդիպումներն ու թատերական ներկայացումները, որոնք միշտ էլ անցել են գեղագիտական բարձր մակարդակով և հուզել ներկաներին:

Քանի՛ - քանի՛ սերունդներ է նա դաստիարակել հայրենասիրական միջոցառումներով: Լինելով հմուտ ու նախաձեռնող կազմակերպիչ՝ նա իր դասավանդած բոլոր դասարաններում աշակերտների և ուսուցիչների հետ միասին բազմաթիվ ու բազմապիսի էքսկուրսիաներ է կազմակերպել դեպի Արցախի ու Հայաստանի տեսարժան վայրեր, Արևմտյան Հայաստան: Նա անհանգիստ ու վառվառն հոգու տեր, նախաձեռնող, հայրենասեր հայուհի է, որի համար կազմակերպչական աշխատանքը հոգու խրախուսանք է: Մտածում ես՝ որտեղի՞ց այդքան ուժ, կորով ու եռանդ այդ փխրուն կնոջ հոգում, որ չգիտես հանգստանալ, միշտ փնտրտուքների մեջ է, որ ուզում է այդպես ու լույս սփռել ամենուր:

Թող երբեք չսպառվեն քո ուժն ու եռանդը, միշտ լինես շենշող ու ավետաբեր, թող քո գարունները գան ու ջգնան, թող ձախորդ օրերը երբեք այցի չզան քեզ, իսկ եթե անգամ գան, թող ձոռան փափուկ ձյան պես սահեն ու անցնեն աննկատ...

Ստեփանակերտի Ա.Դուլյանի անվան հ.2 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՋՈՒՐԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Իր պատմության ողջ ընթացքում մարդկությունը, օգտվելով մայր բնության բարիքներից, մշտապես վնաս է հասցրել իրեն կերակրողին: Դարերի ընթացքում, ինչքան զարգացել է գիտությունը, ավելացել է մարդկանց քանակը, ավելացել են բնությունից օգտվելու կարիքները, այնքան տուժել է Մայր բնությունը: Եվ այսօր ավելի, քան երբևէ, մարդը պետք է զգաստանա, մտածի իր ու սերունդների մասին: Վաղը ուշ կլինի: Այս մասին էր Քաշաբաղի շրջկենտրոն Բերձորի Վ. Թեքեյանի անվ. հ. 1 միջն. դպրոցում կազմակերպված բաց դասը կենսաբանություն առարկայից: Ուսուցչուհի Վարդուհի Հովհաննիսյանն ուրբերող դասարանի աշակերտների հետ մի դասաժամում հարուստ տեղեկություն տվեց ջրի կարևորության մասին: «Ջուր, դու կյանք ես» վերնագիրն էր կրում դասը, որին ներկա էին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ, բնագիտական առարկաների գծով տեսուչ Ալվարդ Սարգսյանը, դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, այլ առարկաների մասնագետներ, ինչպես նաև՝ քաղաքի թիվ 2, Քարեզահի, Սուսի միջնակարգ դպրոցների կենսաբանության ուսուցիչներ: Դասը սկսելով՝ Վ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ դասի նպատակն է՝ երեխաներին տալ էկոլոգիական դաստիարակություն, էկոլոգիական մտածելակերպ, որ տեր կանգնեն բնությանը, քանի որ այսօր երկիր-մոլորակի վրա կա բնապահպանական լուրջ խնդիր՝ կապված նաև ջրի բնության մեջ ամենակարևոր ռեսուրսի աղտոտության և անխնա օգտագործման հետ: Կարևորելով ջրի դերը մարդու կյանքում ուսուցչուհին անդրադարձավ անվանի գիտնականներից մի քանիսի փորձերին, ըստ որի՝ ջուրն ունի հիշողություն, ազդեցություն է կրում իրեն շրջապատող ձայներից, նույնիսկ՝ մտքերից: Ցուցադրվեց տեսաֆիլմ, որ-

տեղ նկարագրված է, թե ինչպես են ջրի մոլեկուլները փոփոխություն կրում բարի ու չար խոսքերից, աղբյուրներից ու անեծքներից, նույնիսկ պատմությանը հայտնի մարդկանց անուններից: Բեթհովենի, Բախի, Մոցարտի երաժշտության տակ մոլեկուլները կարգավորվում էին, ընդունում գեղեցիկ տեսք: Իսկ, ահա, ծանր ռոք երաժշտությունը բացասաբար էր անդրադառնում, և մոլեկուլները ընդունում էին տձև տեսք, մնալ գույն: Այնուհետև ջրի դերին անդրադարձան աշակերտները՝ նշելով, որ մարդկությունը, չարաշահելով իր առավելությունը,



որպես Աստծո կողմից ստեղծված կատարյալ էակ, կործանման է հասցնելու երկիրը: Մարմնավորեցին նաև բնության երևույթները: Մի կողմ էին կանգնած մարդու պատճառով տուժածները՝ «Օզոնային շերտը», «Հին Հռոմը», «Ֆոտոսինթեզը» և «Ջրի աղտոտումը», մյուս կողմում՝ «Թթվային անձրևը»: Առաջինները գանգատվեցին «Թթվային անձրևից», որ նրա պատճառով պակասում է օզոնային շերտը, որի կործանումը երկիր-մոլորակի կործանումն է, «Ֆոտոսինթեզը» դժգոհեց, որ «Թթվային անձրևի» պատճառով ինքը լիարժեք չի գործում, իսկ «Ջրի աղտոտումը» խնդրեց «Թթվային անձրևին»՝ իրեն քիչ անհանգստացնի: Իսկ ահա «Հին Հռոմը» ողբում էր իր կործանումը, քանի որ

ժամանակին մարդիկ առանց գիտակցելու արձե՛ն խողովակ ու ամաններ են օգտագործել և թունավորվել: «Թթվային անձրևը» պատասխանեց, որ ինքը չէ մեղավոր, այլ ամենակարող մարդը, ով հսկա գործարաններ ու ատոմակայաններ է ստեղծել, միլիոնավոր տոննաներով նավթ է թափում համաշխարհային օվկիանոսի մեջ, այլ վնասներ հասցնում բնությանը, որից էլ ծնվել է ինքը՝ «Թթվային անձրևը»: Այնուհետև ուսուցչուհին կատարեց գործնական աշխատանք: Սեղանին դրված 4 սրվակներում տարբեր տեղերից վերցրած ջուր կար: Սրվակներից մեկում Արծաթաջուր էր: Նշվեց, որ այս ջուրն ունի բուժիչ հատկություն: Մյուսում Օրինված ջուր էր. Օրինվել է Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցում: Երրորդ սրվակի ջուրը հանվել է 100 մ խորությունից: Ջրի մեջ կար հավիթի չափ սառույց: Վ. Հովհաննիսյանն ասաց, որ սառույցն իր մեջ է հավաքել վնասակար նյութերը, ու մնացած ջուրը մաքուր է և նպաստում է մարդու երկարակեցությանը: Վերջին սրվակի ջուրը անցկացրեց ցանցվեց կտորով, որի վրա մնաց դեղնավուն հետք: Պարզվեց՝ ձմալքի ջուր է, որն իր մեջ հավաքել է օդում եղած վնասակար նյութերը: Ավարտելով դասը՝ ուսուցչուհին ու աշակերտները կարևորեցին այն, որ մարդը պետք է մաքուր պահի բնությունը, խնայողաբար օգտագործի ջուրը, հնարավորինս քիչ աղտոտի այն, այլապես ջուրը վրեժխնդիր կլինի: Այս առումով խոսվեց նաև համաշխարհային ջրի հեղեղի մասին, որը մարդկության գործած մեղքերի պատճառով կատարվեց: Վերջում Վ. Հովհաննիսյանն արտասանեց իր գրած 39 տողանոց և այբբենական կարգով բանաստեղծությունը՝ ծոնված ջրին: Դասը գնահատվեց ներկա ուսուցիչների կողմից, եղան հարցադրումներ:

Ջոհրաբ ԸՈՒՑՅԱՆ

ԱՐԺԵՔՆԵՐ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐԿԱԾ Է



Տ ու մ ի ն ՝ ծննդավայրս վեհանիստ, ա ն վ ա ն ի մարդիկ շատ է տվել: Ունեցել է գիտնականներ, բանաստեղծներ, բժիշկներ, արվեստագետներ ու բանինաց մանկավարժներ: Տուճու ծոցից է ելել նաև ականավոր լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանը: Գիտական բազմաթիվ հոդվածների, հայոց լեզվի դասագրքերի, գիտահետազոտական աշխատությունների հեղինակ, գյուտարար-լեզվաբան Ս.Աբրահամյանն իր բազմաթիվ աշխատանքներում և թողել հայոց լեզվի զարգացման ու հարստացման գործում: Հայրենասեր լեզվաբանն իր հոգու թելերով ամուր կապված էր իր ծննդավայրին: Ինչպես և ամբողջությամբ նվիրվել էր հայրենի գյուղի դպրոցի հոգսերին: Երկու տարի, գերազանցությամբ պատճառով նրան չէր հաջողվում համախառն ալյուրից ցրտից օգնություն ստանալ: Բայց հայրենի գյուղից հեռավորվելուց հետո, սակայն միշտ հարցուփորձ էր անում ծանոթ-բարեկամներից՝ այդպես առնելով իր՝ հայրենի եզերքի հանդեպ ունեցած կարոտը: 2015 թվականը հորեյանական տարի է հայտարարված մեծ գիտնականի համար: Ուստի պատահական չէ, որ հորեյանական

այդ միջոցառումների մեկնարկը տրվեց հենց իր ծննդավայրից՝ հայրենի գյուղի դպրոցից: Ի դեպ, տասնչորս տարի առաջ կրթօջախը անվանակոչվել է ակադեմիկոսի անունով: Նախաձեռնությունը ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնին էր: Հորեյանական միջոցառման կազմակերպման ու հավուր պատշաճի անցկացման հարցերով զբաղվել են շահագրգիռ կողմերը: Այն գտնվում էր Հայրուրի շրջվարչակազմի ղեկավար Վ.Գևորգյանի, վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Է.Պետրոսյանի ու շաղկապի կենտրոնում: Միջոցառման անցկացման պատասխանատվությունը դպրոցում հանձն էր առել հայոց լեզվի և գրականության մեթոդավարուհի, ինչն էլ գտնվում էր դպրոցի տնօրեն Լ. Ավագյանի ու շաղկապի կենտրոնում: Նախապես թարմացվել է հայոց լեզվի կարիքները ունեցած ակադեմիկոսին նվիրված ամսյունը, սաներին համընթաց արվել գեղեցիկ արտասանություններ ու երգեր: Բոլոր դասարաններում դասողեկական պարապմունքները նվիրվեցին մեծ հորեյանի կյանքին ու գործունեությանը: Հորեյանական միջոցառումը տեղի ունեցավ մարտի 14-ին: Տուճու դպրոց էին ժամանել Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի մի շարք դասախոսներ, ովքեր եղել են լեզվաբանի ասպիրանտներ: Միջոցառումն իր ներկայությամբ պատվել էր նաև ԼՂՀ ԿԳ փոխնախարար, լեզվի պատմու-

թյան հնուտ գիտակ, արցախյան համ ու հոտով բարբառի ուսումնասիրման ակունքներում կանգնած այրերից մեկը՝ Արմեն Սարգսյանը: Վերջինիս ելույթով էլ բացվեց միջոցառումը: Ա.Սարգսյանը բովանդակալից ներկայացրեց մեծ լեզվաբանի կյանքի ու գործունեության դրվագները՝ նշելով նրա թողած

րում մեծարեցին դասախոսներ Հ.Ղազարյանը, Ս.Մինասյանը, ովքեր պատմեցին նաև լեզվաբանի հետ իրենց հանդիպումների մասին: Ելույթներով հանդես եկան նաև շրջանի կրթության բաժնի վարիչ Է.Պետրոսյանը, դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդավարուհի Նաիրա Աբրահամյանը: Նրանք իրենց խոսքում արժևորեցին մեծ հայրենակցի ու ազնիվ հայրենասերի նվիրումն ու թողած ավանդը: Միջոցառումն իր հետաքրքիր վերջաբանին հասավ, երբ խոսքը տրվեց ակադեմիկոսի անունը կրող հաստատության սաներին: Գեղեցիկ արտասանություններն ու հոգեթով երգերը հուզեցին ներկայից: Սաները քաջ գիտակցում էին միջոցառման դերն ու նշանակությունը իրենց կյանքում: Սա մի լավագույն առիթ էր ևս մեկ անգամ անդրադառնալու և գալիք սերունդներին իրազեկելու մեր մեծերի մասին: Հայոց լեզվի ամբիոնը մշակի մեծարման երեկոյի մասնակիցները մեծ բավականություն ստացան: Հորեյանական միջոցառումների վերջնական հանգրվանը կլինի Երևանում, որտեղ տեղի ու իր կյանքի մեծագույն մասը անց է կացրել ակադեմիկոսը: Այնտեղ մեծ շուքով կնշվի անվանի լեզվաբանի 90-ամյակը: Դե ինչ, մեկնարկը տրված է, բարի շարունակություն, և վերստին շնորհավոր ծնունդդ, մեր մեծ տունեցի:



հոգևոր ժառանգության դերի ու նշանակության կարևորությունը: Ս.Աբրահամյան անհատականությունը հեղաշրջում կատարեց հայոց լեզվի բնագավառում, փոփոխությունների ենթարկեց ձևաբանությունն ու շարահյուսությունը՝ առավել ուշադրություն դարձնելով բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության կառուցվածքային ու շարահյուսական առանձնահատկություններին, կոփեց լեզվի ուսումնասիրման բաժինները՝ ոչ մի բացթողում չհանելով այդ բանգավառում: Ականավոր լեզվաբանին իրենց ելույթներում մեծարեցին դասախոսներ Հ.Ղազարյանը, Ս.Մինասյանը, ովքեր պատմեցին նաև լեզվաբանի հետ իրենց հանդիպումների մասին: Ելույթներով հանդես եկան նաև շրջանի կրթության բաժնի վարիչ Է.Պետրոսյանը, դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդավարուհի Նաիրա Աբրահամյանը: Նրանք իրենց խոսքում արժևորեցին մեծ հայրենակցի ու ազնիվ հայրենասերի նվիրումն ու թողած ավանդը: Միջոցառումն իր հետաքրքիր վերջաբանին հասավ, երբ խոսքը տրվեց ակադեմիկոսի անունը կրող հաստատության սաներին: Գեղեցիկ արտասանություններն ու հոգեթով երգերը հուզեցին ներկայից: Սաները քաջ գիտակցում էին միջոցառման դերն ու նշանակությունը իրենց կյանքում: Սա մի լավագույն առիթ էր ևս մեկ անգամ անդրադառնալու և գալիք սերունդներին իրազեկելու մեր մեծերի մասին: Հայոց լեզվի ամբիոնը մշակի մեծարման երեկոյի մասնակիցները մեծ բավականություն ստացան: Հորեյանական միջոցառումների վերջնական հանգրվանը կլինի Երևանում, որտեղ տեղի ու իր կյանքի մեծագույն մասը անց է կացրել ակադեմիկոսը: Այնտեղ մեծ շուքով կնշվի անվանի լեզվաբանի 90-ամյակը: Դե ինչ, մեկնարկը տրված է, բարի շարունակություն, և վերստին շնորհավոր ծնունդդ, մեր մեծ տունեցի:

Քննություն ՍԱՐԿԻՍԻ
Տուճու միջև. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԱՉԵՐԻՆԵՐԸ ԺԻՏՈՒՄ ԵՆ ԵՎ ԱՏՈՒՄ, ԽԱԶՔԱՐԵՐԸ ՀԱՌՆՈՒՄ ԵՆ ԵՎ ՓԱՍՏՈՒՄ

1993 թվականին մասնակցել եմ ներկայիս Շահումյանի շրջանի ազատագրական մարտերին, 2004-ից ընտանիքով տեղափոխվել ենք ապրելու շրջանի Նոր Մանաշիղ համայնքում: Ութ տարի առաջ էր: Դպրոցից տուն էի վերադառնում: Ծանապարհս անցնում էր մի կիսավեր տան մոտով: Հայացքս ընկավ տան վերևի անկյունաքարի ընկած տեղին, որտեղ ցեմենտի շաղախի վրա արտատպվել էր խաչքարի գեղեցիկ զարդանախշ: Մոտեցա՝ մտածելով, որ խաչքարը մոտերքում կլինի: Այստեղի փնտրել պատից թափված քարերի մեջ և, հուրախություն ինձ, գտա խաչքարի մասունքը: Խաչքարի հետևի մասում փորագրված էր «1964 թվական» ու «—աստղի նշան—» և դիմային մասով դրվել շաղախի մեջ: Բարբարոս թուրքի կողմից ավերվել, մասնատվել և բզկտված վերջնականապես գերվել հենց այդ թվականին: Վերջինի խաչքարի այդ կտորը, որն արդեն մոտավոր պատկերացում էր տալիս խաչքարի պատկերի և ձևի մասին, բերեցի տուն: Բնականաբար, համայնքի բնակիչները իմացան այդ մասին, շատերն այցելեցին, մոտեր վառեցին, մատաղ արեցին: Անցան օրեր: Աշակերտների հետ շաբաթօրյակի ժամանակ դպրոցին կից կիսակառույցի մոտ թափված քարերի կույտի մեջ աչքի զարնեց ևս մի խաչքարի եզրի զարդանախշի կտոր: Խոսեց հազարավոր խաչքարերի ևս մի մասունք, խոսեց հայեցի:

Այդ կտորը նույնպես «տուն» բերեցի: Քայլում էի անտառի արահետով և հանկարծ նկատեցի մոտ երկու մետրանոց բազալտե սալաքար, որի վրա փորվածքներ կային: Մոտեցա. դարավոր խաչքարը գլորվել, դեմ էր առել դարավոր կաղնու: Թուրքը չէր կարողացել սպանել խաչքարը: Հետո նորից ուրախ ավետիս. գյուղի բնակիչ, Քարվաճառի երգի համույթի երաժիշտ Արա Խառատյանը տեղեկացրեց, որ մառանի վերակառուցման ժամանակ հողի տակից դուրս է բերել մի մեծ խաչքար: Էլի մի խաչքար ազատվեց գերությունից: Ուրախանում ենք, որովհետև յուրաքանչյուր խաչքարի վերագտնումն ընկալում ենք որպես երեխայի ծննդյան ավետիս: Հէ՞ որ փյունիկի նման հառնող այդ մասունքները մեր ինքնությունն են, մեր պատմու-

թյունը: Որոշել էի տնտեսությանս նոր շինություն ավելացնել: Այս տողերը գրելուց մի քանի ժամ առաջ, երբ հողից մաքրում և միաժամանակ հողի տակից դուրս եկող քարերով քարապատում էի հատակը՝ ցեմենտե շաղախով սվաղելու համար, հերթական քարը վերցնելիս նկատեցի, որ ձեռքիս խաչքարի կտոր է, շուրջն ու հոգին, որոնք արդեն 23 տարի նորից թևածում են պատմական Արցախի այս գողտրիկ անկյունում, և ինչպես փյունիկ, կամացկամաց հառնում են գերությունից և խոսում. այո, այո, չգարմանաք, նրանք խոսում են, խոսում են հայեցի, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի լեզվով, խոսում ու պատմում թուրք ազդեցության բարբարոսությունների մասին: Եղեռնի միլիոնավոր զոհերի ոգիների նման նրանք ի ցույց են դնում իրենց բզկտված մասունքներն ու պահանջում վերականգնել պատմական անարդարությունը: Ես կրկին հանդգնում եմ, որ այս տարածքի ազատագրումը, որին մասնակից եղա, սուրբ գործ էր: Չարմանալի, հրաշք բաղադրություն ունի մեր գեներ՝ ճկուն ու միաժամանակ կարծր, հանդուրժող ու համար: Արյան հիշողությունն օգնում է մեզ արագ արմատներ ձգել վերաբնակեցումից հետո, ստեղծել կրթօջախ, սրբատեղի ու նոր տարածք մեր սերունդների համար դարձնել ծննդավայր, մեծ հայրենիքի լիիրավ անդամ: Այդ պատճառով էլ լիահույս եմ, որ օրերից մի օր բիբլիական Արարատի հայացքի տակ հայկական լեռնաշխարհի ևս մի չքնաղ տարածքում՝ Նախիջևանում, վերաբնակված հայ մշակը ցորեն, խաղող և այլ բարիքներ արարելու ժամանակ հողի տակից դուրս կբերի համաշխարհային մշակութային արժեք ներկայացնող հազարամյա խաչքարեր և մեծ բերկրանքով, սրբելով ճակատի քրտինքը, խաչքարի վրայի հողն ու

փոշին, հոգով կթեթևանա՝ հասկանալով, որ ապրում և արարում է իր պապերի բնօրրանում: Հ.Գ. Օգոստոսին մինչև ատամները զինված ադրբեջանցի դիվերսանտները անամոթաբար հայտարարում էին, որ եկել էին իրենց հարազատների շիրիմներին այցելության: Ինչպե՞ս կարող է երեխա սպանողը, սրբությունն ու մշակույթը բարբարոսաբար պղծողն ու ոչնչացնողը սրբություն ունենալ, որի համար մինչև ատամները զինված հատեր արցախա-ադրբեջանական սահմանը: Վերջերս Շահումյանի շրջվարչակազմի ղեկավարից տեղեկացանք, որ Քարվաճառը երկուների մեջ է, ծնունդ է առնելու ևս մի խաչքար-հուշարձան՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակի 100-ամյա տարելիցին, և պատվավոր տեղ է գտնելու Արցախյան գոյապայքարի նահատակների հուշակոթողի հարևանությամբ: Հուշակոթողի ծննդին հանգանակություններով իրենց մասնակցությունն են բերել նաև Շահումյանի շրջանի բոլոր դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները:

Արայիկ ՂԱԶԱՐՅԱՆ
ԼՂՀ Շահումյանի շրջանի Նոր Մանաշիղի հիմն. դպրոցի զինղեկ



ՓՈՐՁԻ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ

ՂԱՍ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԿԻՐԱՌՄԱՍԲ

Օրերս Քաշաթաղի շրջանի Բերձորի հ. 2 միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի մաթեմատիկայի «Կոտորակներ» թեմայով դասը անցկացրի համակարգչային դասարանում:

Ոչ ստանդարտ դասը՝ որպես ակտիվ ուսուցման ձև, «Թվային մոդուլների տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը» իր փորձից «Կոտորակներ» թեմայով խտասկավառակը տրամադրել էր կրթության բաժնի առաջատար մասնագետ, տարրական դասարանների գծով տեսուչ Սիրվարդ Թամազյանը:

Փորձի փոխանակման դասն սկսված էր:

Ուսուցչուհու բացատրական խոսքին համընթաց փոխվում էին սլայդները, և հետաքրքիր իրավիճակներ ստեղծվելով՝ սեր և հետաքրքրություն էր առաջանում առարկայի նկատմամբ: Տեսական գիտելիքները տեսանելի էին, ինչի միջոցով էլ ուսուցչուհին իրականացրել էր դասի ուսուցանող, զարգացնող և դաստիարակող նպատակները: Դասը կառուցված էր պետական չափորոշիչի և ծրագրի պահանջներին համապատասխան: Այն նպաստեց աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, շրջապատող աշխարհը հասկանալու և գնահատելու, գեղեցիկը տեսնելու, ինքնուրույն աշխատելու կարողության զարգացմանը: Համակարգչային տարաբնույթ առաջադրանքները սովորողների մոտ ամրապնդեցին ամբողջի, մասերի և դրանց միջև կապի մասին ունեցած գիտելիքները, կարողացան ամբողջը բաժանել մասերի և դրանք արտահայտել կոտորակի տեսքով: Սովորողները պատկերացում ունեցան «համարիչ», «հայտարար», «կոտորակի գիծ» հասկացությունների մասին, կարողացան լուծել խնդիրներ, կատարել չափումներ և եզրահանգումներ՝ աշակերտակենտրոն դրույթների կիրառմամբ: Դասը զարգացրեց սովորողների ուշադրությունը, դիտողականությունը, տարածական տրամաբանական և վերլուծական մտածողությունը, երևակայությունը, ինչպես նաև համագործակցելու և խմբով աշխատելու կարողությունը:


Տիկին Թամազյանը դասը կառուցել էր նորովի՝ օգտագործելով ժամանակակից մեթոդներ և հնարներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Մեկը մյուսին հաջորդող խնդիրների և վարժությունների ձևավորված սլայդները առավել հստակ և մատչելի էին դարձնում դասաընթացը՝ ապահովելով միջառարկայական և ներառարկայական կապը մայրենի, երաժշտություն, տեխնոլոգիա առարկաների հետ: Ուսուցչուհին հաշվի էր առել նաև աշխատանքի բնույթի փոփոխումը, որպեսզի երեխաների աշխատունակությունը պահպանվի ամբողջ դասի ընթացքում:

Դասի մուտքը գրավիչ էր Ս. Թամազյանի՝ ժամ-ժակ Ռուսոյից բերված թևավոր արտահայտությամբ. «Մարդը կոտորակի նման է. համարիչն այն է, ինչ նա կա, իսկ հայտարարը՝ ինչ նա մտածում է իր մասին: Որքան մեծ է հայտարարը, այնքան փոքր է կոտորակը»:

Այնուհետև հանդես է գալիս դասի հերոսը՝ Պոյ-պոյ մկնիկը՝ իր երգով և պառկում կոկոսի ծառի տակ:

Ասելով, որ ինքը՝ Պոյպոյ Մկնիկյանը, այսքան տարի ապրելով կոկոս ծառի ծակում, (բացատրվում է «ծակում» բառի իմաստը՝ ծակ, անցք, ճեղք), խմելով կոկոսի ան-

մահական հյութը, վերականգնել է հիշողությունը. առավոտյան խմել է կոկոսի հյութի 1/2 մասը, կեսօրին՝ մնացածի 1/3-ը, ամբողջ հյութը կազմում է 12 լիտր, հարցնում է երեխաներին, թե քանի լիտր հյութ մնաց կոկոսում: Լիլիթը կարողացավ հեշտությամբ կատարել մկնիկի առաջադրանքը և լուծել խնդիրը: Մկնիկի օգնությամբ երեխաները վերհիշում են նաև միանիշ թվերը, թվանշանները, երկնիշ, եռանիշ և բազմանիշ թվերը՝ մինչև միլիոն: Ավելացնում են նաև, որ մեկ միլիոնից հետո էլ թվերը կարող են անսահման շարունակվել՝ ցանկացած թվին գումարելով 1 և ստանալ ավելի մեծ թիվ: Արայիկը գիտեր, որ նշված թվերը, բացի 0-ից, կոչվում են բնական թվեր: Ուսուցչուհին ավելացնում է նաև, որ բնական թվերից բացի կան այլ թվեր, որոնք ստացվում են չափումներով, հատվածների մասերով, բաժանումով: Խաչիկը ավելացրեց, որ այդպիսի թվերը կոչվում են մասեր, կոտորակներ: Նա հիշեց, թե ինչպես է ուսուցչուհին իր և Սոսի միջև մեկ խնձորը բաժանել երկու հավասար մասերի և իրենցից յուրաքանչյուրին սովել 1/2 մասը:



Ուսուցչուհին բացատրում է, որ ամբողջի մասերը նշանակելու համար օգտագործվում են հատուկ կոտորակային թվեր: Ընդունված է բաժանման նշանի փոխարեն գիծ օգտագործել:

Այնուհետև ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով՝ հանդես են գալիս կոտորակի գիծը, համարիչն ու հայտարարը:

- Ես, օրինակ՝ կոտորակի գիծն եմ, Փոխարինում եմ բաժանման նշանին, Նաև կապարե մանրագնդակ եմ, Որով որսորդները կենդանիներ ու թռչուններ են որսում:



- Ես հայտարարն եմ կոտորակի, Բնակվում եմ գծից ներքև, Ցույց եմ տալիս, հայտնի դարձնում, Թե քանի հավասար մասի է բաժանվում մեկ ամբողջը:

- Իսկ ես կոտորակի համարիչն եմ, Բնակվում եմ գծից վերև, Համրում եմ, հաշվում, թե քանի բաժինն է վերցված բաժանված մասերից:

Շատ կարևոր է մաթեմատիկայի ուսուցումը մշտապես կապել կյանքի հետ: Դասագրքում զետեղված առաջադրանքները՝ պահանջների փոփոխմամբ ու հարցադրումների ավելացմամբ, ուսուցչուհին հյուսել էր տրամաբանական այլ առաջադրանքներ՝ ելնելով կոնկրետ նպատակներից, հեշտությամբ իրականացրել շերտավորված ուսուցում:

ա) Հայաստանի դրոշի գույների ո՞ր մասն է կազմում ծիրանագույնը: Ո՞ր մասը կարմիր չէ:




Հայաստանի դրոշի գույների ո՞ր մասն է կազմում ծիրանագույնը: Ո՞ր մասը կարմիր չէ:

Անճան լուծել է մաթեմատիկայի դասագրքի 155 խնդիրների 3/5 մասը:



բ) Բերձոր քաղաքի Սուրբ Համբարձման եկեղեցու մոտից ավտոբուսը մինչև 1-ին դպրոց պետք է անցներ 3 կմ ճանապարհ: Ճանապարհի 5/6 մասն անցնելուց հետո շրջադարձում կանգ առավ: Քանի՞ կիլոմետր կմնա նրան դեռ անցնելու:



Աշակերտները նայելով սլայդներին՝ հիշում և համեմատում էին կենցաղում հանդիպած մանրատիպ դեպքերը:

Հովհաննեսը պատրաստվում է 35կգ կարտոֆիլի 3/7 մասը հայրիկի հետ ցանել հողամասում:


Իսկ Արմանն էլ ուրախ-ուրախ պատմում էր, որ պապիկը խաղողից 320 լիտր գինի էր պատրաստել և դրա 6/8 մասը ուղարկել երևան՝ բարեկամներին:

35 կգ-ի 3/7 մասը 15 կգ

320 լ-ի 6/8 մասը 240 լ

- 35 կգ-ի 3/7 մասը
- 480 մ-ի 5/10 մասը
- 480 դրամի 5/6 մասը
- 320 լ-ի 6/8 մասը
- 45 դ-ի 1/9 մասը

Կշռադատման փուլ Սովորողների՝ նյութի յուրացման մակարդակը ստուգելու նպատակով կատարվում է թեստային աշխատանք:




Կատարել գնահատում, խրախուսում:

Տնային հանձնարարություն (գործնական աշխատանք). բացատրել և ամփոփել:

Վերցնել 2մ երկարությամբ թել, այն ծալել այնպես, որ ստացվեն 4 հավասար մասեր: Չափել այդ մասերից մեկի, երկուսի, երեքի երկարությունները: Չափման արդյունքները գրանցել արդյունակում: Հաշվարկները կատարել զուտ մաթեմատիկորեն: Հաշվել 2 մետրի 1/4, 2/4 և 3/4 մասերը, գրանցել արդյունակներում և համեմատել արդյունքների հետ: Չմոռանալով՝ 2 մետրը 4 հավասար մասերի չենք կարող բաժանել, ուստի 2 մետրը պետք է դարձնենք սմ, իսկ 2մ-ը հավասար է 200սմ-ի, այս դեպքում հեշտությամբ կարող ենք 4 հավասար մասերի բաժանել, ինչը կհաստատենք փորձով (կատարում են ծալումները): Թելերի հավասար ծալումով՝ կստանանք 50 սմ երկարությամբ 4 հավասար մասեր: Այնուհետև սովորողները ծանոթանում են արդյունակին, որը պետք է գծեն տանը և լրացնեն մաթեմատիկորեն:

Դասն ուսանելի է և ընդօրինակման արժանի:

Ուսուցչուհին իր խոսքում ասաց. «Կարևորում եմ՝ ավելի շատ գործ, ավելի քիչ՝ խոսք. դաստիարակում են ոչ թե խոսքերը, այլ՝ գործերը: Աշխատում եմ աշակերտին գնահատել ոչ թե՛ ինչքան է նա խելոք, այլ՝ ինչով է նա խելոք չափանիշով, և սովորողների համար ստեղծվում են սովորելու հավասար պայմաններ, աշակերտները հնարավորություն են ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը, ինչի ընթացքում ստեղծվում է ինքնակրթության միջավայր, ձևավորվում է աշակերտների արժեհամակարգը:



Անուշ ԱՌՈՒՍԱՄՅԱՆ Բերձորի հ. 2 միջն. դպրոցի դասվար, փորրական դասարանների մեթոդավարման նախագահ



ԽՆԴԻՐ

ՀԱՆՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՎԻ

«Լավագույն ժամանակությունը լավ դաստիարակությունն է»: Այս խոսքերն, իրավամբ, խորհմաստ են: Ասկայն էթե բոլորս գիտենք՝ ինչ է լավ դաստիարակությունը (կամ էլ մեզ թվում է, թե գիտենք), ապա «ի՞նչ է ճիշտ դաստիարակությունը» հարցի մասին յուրաքանչյուրս ունենք մեր համոզմունքները: Մենք՝ ծնողներս, դպրոց ենք ուղարկում մեր երեխաներին՝ ակնկալելով ոչ միայն տարեցտարի նրանց կողմից նորանոր գիտելիքների ձեռքբերում, այլև այնպիսի դաստիարակություն, որն ինքներս, ելնելով մի շարք հանգամանքներից, չենք կարող տալ մենակ՝ չհամագործակցելով մանկավարժների հետ: Մեր ծնողների ակտիվությունն այս առումով միայն ու միայն դրավատանքի է արժանի, երբ երեխան դեռ տարրական դպրոցում է: Երեխայի աճին զուգընթաց հետադարձ է ապրում «ծնող-ուսուցիչ» կապը՝ սահմանափակվելով երեխայի բացակայելու դեպքում անխուսափելի հեռախոսազանգերով, ուսուցչի հետ պատահական հանդիպումներով կամ էլ տարին 1-2 անգամ իրավիճակը ծնողական ժողովներով, որոնց, ցավոք, ներկայացնում են ոչ բոլոր ծնողները: Խոսքս ոչ մի քննադատական չի հետապնդում: Ճիշտ հակառակը, ինքս էլ մշտապես մտորումների մեջ եմ, ինքս էլ շահագրգռված եմ որևէ լուծում գտնել այս խնդրի վերաբերյալ: Իսկ խնդիրն, իսկապես, գոյություն ունի: Կարծես երկուստեք՝ թե՛ ծնողները, թե՛ ուսուցիչները, առօրյա գոյապայքարի մրցակազմում մտադրված են ընդհանուր շահի մասին. այն է՝ համատեղ կրթել ու դաստիարակել այնպիսի երեխաներ, ովքեր ապագայում կդառնան հասարակության լիարժեք անդամներ՝ առողջ հոգեբանությամբ ու կայուն գիտելիքներով գինված: Երբեմն ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, որ թվում է՝ ծնողն ու ուսուցիչը կանգնած են բարիկաղների հակառակ կողմերում: Թվում է՝ կա ծնողների մի հոծ զանգված, որն ավելի շատ շահագրգռված է երեխայի բարձր գնահատական, քան խոր գիտելիքներ ձեռք բերելու մեջ (ուրախ կլինեի, եթե դա իմ միայն թվար): Հուսով եմ՝ եթե ոչ առերես, ապա

գոնե՛ ձեր հոգու ամենամակերթ անկյունում կհամաձայնեք, որ վերոհիշյալ խնդիրը, իրոք, գոյություն ունի: Դե, ուրեմն, մենակ մնալով ձեր խոհերի հետ հենց այդ անկյունում՝ փորձեք ծանրութեթեանեղ և պատասխանել այս հարցին. ձեր երեխայի ինչի՞նչ է պետք առանց կայուն գիտելիքների բարձր գնահատականը: Բուհ ընդունվելու հարցում դա վաղուց ոչ մի դեր չի խաղում (և ընդհանրապես, ցանկության դեպքում հիմա բուհ ընդունվում են բոլորը): Այլ հարց է՝ վճարովի, թե՛ անվճար): Այ, հենց այստեղ էլ բախվում ենք գիտելիքի բացակայությունից ծնված առաջին լուրջ խնդրին: Ձեր երեխան՝ այդ պահի դրությամբ տասնութամյա ուսանողը, ում կենսական պահանջները բավարարելու համար ձեզ գրեթե աստղաբաշխական գումարներ են պետք, հայտնվել է վճարովի համակարգում: Դե, հիմա կարող եք ձեր «խորին շնորհակալությունը» հայտնել այն ուսուցչին, ով ձեր սրտի ուզած բարձր գնահատականը նվիրել է երեխային՝ տարիներ շարունակ շոյելով ձեր փառասիրությունը: Եթե անգամ վճարովի համակարգում ուսանող ունենալու հեռանկարը ձեզ չի անհանգստացնում, ապա գուցե անհանգստանաք ոչ արհեստավարժ մասնագետի համբավով, որն անխուսափելիորեն կվաստակի ձեր դուստրը կամ որդին, եթե դուք չսթափվեք և վերջ չտաք ուսման գործի հանդեպ ձեր անտարբերությանը, եթե չսկսեք մանկավարժների հետ համատեղ ուղիներ որոնել բոլորիս կողմից հաճախակի շահարկվող «ճիշտ դաստիարակությունը» իրականացնելու համար: Պետք է դադարել «իմնու՛ն է ցածր ստացել» հարցի ենթատեքստում ուսուցչին մեղադրանք ներկայացնելուց, այլ, այդ հարցին ի պատասխան, ակնկալել պարզաբանում, թե ինչու է թերաճում երեխան, և ինչպես շտկել դա:

Փորձեք չզվաճալ և օգտագործել բոլոր հնարավոր միջոցները՝ հաջողության հասնելու համար: Խորհրդակցեք դասավանդող ուսուցիչների հետ, հետևողական եղեք հաջորդ օրվա դասերին նախապատրաստվելու հարցում, օգնեք երեխային տեղին, ժամանակին և նպատակային օգտվելու

համացանցի ընձեռած հնարավորություններին, այլ ոչ թե ժամերով մխրձվել սոցկայքերում, ունկնդիր եղեք նաև երեխայի հոգու կանչին. նրա վզին մի փաթաթեք մասնագիտություն, որը կզրկի նրան ինքնադրսևորման հնարավորությունից: Վերջիվերջո, խոսքը ձեր երեխայի բարեկեցիկ ապագայի համար հիմք ստեղծող առաջին քայլի մասին է...

Մեր ազգը միշտ էլ կրթության հարգն իմացող ազգ է եղել: «Անահիտ» հեքիաթում ՂԱՂԱՅԱՆը չի թաքցնում իր պարծանքը՝ իր իմաստուն հերոսուհու շուրթերով պատմելով, որ «հովիվներն էլ գիտեն կարդալ և միմյանց սովորեցնում են իրանց հոտն արածեցնելիս: ...Մեր բերդերի պարիսպները, ժայռերի ճակատները ածխազերով լցրել են: ...Ահա այսպես սար ու ձոր լցվել է գրերով»: Գուցե ասեք՝ սա ընդամենը հեքիաթ է (թեև Աղայանի այս գործը ես ոչ թե հեքիաթ կանվանեի, այլ հայ կնոջ իմաստությունը նվիրված գրական կոթող): Ցավոք, հեքիաթ չէ մյուս օրինակս, որ պատրաստվում են բերել: Ես հենց այն սերնդի ներկայացուցիչն եմ, ով դպրոց է հաճախել՝ անտեսելով թշնամուց ամեն պահ սպասվող հրետանային զարկերն ու օդային հարձակումները: Այո, անգամ այդ դժուրային պայմաններում հայն աչքաթող չարեց կրթության նվիրական գործը, քանզի պատմությունը բազմիցս ապացուցել է, որ մեր ժողովրդի հարատևման գաղտնիքը նրա գրի ու գրականությանն, հայ մտավոր ներուժի մեջ է եղել:

Քանի որ երեխաների ուսման հետ կապված բոլոր հարցերով մեզ մոտ ավանդաբար մայրերն են զբաղվում (հազվադեպ բացառություններով), ապա խոսքս հենց նրանց է ուղղվում եմ:

«Հայոց մայրեր» երգում հեղինակը մեզ կոչում է «արևածին հայոց մայրեր»: Համաձայնե՛ք՝ վեհ կոչում է: Ուրեմն, եկեք տքնենք այսօր, որ վաղը վայելենք մեր գավակների արևոտ ապագան: Սա կլինի մեր թողած լավագույն ժամանակությունը նրանց համար:

Մեդիա ՄԵՇԼՈՒՄՅԱՆ
Խնայարի միջնակարգ դպրոց

ԿԵՆՂԱՆԻ ՕՐԻՆԱԿԸ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Ինձ համար միշտ նտահոգիչ է եղել այն, որ այսօրվա հասարակությունն իր գարգացման ժողովրդավարական միտումներով բոլորովին այլ պահանջներ է ներկայացնում կրթական համակարգին՝ կարևորելով ինքնուրույն, նախաձեռնող, հանրութող, համագործակցող անձնավորության ձևավորման անհրաժեշտությունը:

Աշխատելով երեխաների հետ՝ իմ խորին համոզմունքն է, որ նրանց մոտ առաջնային են դառնում ոչ այնքան յուրաքանչյուրի իմացական կարողությունները, որքան միմյանց լսելու, համագործակցելու, փոխհարաբերություններ հաստատելու ցանկությունը: Այն, ինչ վերը ցեցի, ամփոփված է բարոյական դաստիարակության մեջ, որը դպրոցականի անձնավորության կազմման կարևորագույն միջոց է և երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հիմնական խնդիրներից մեկը: Այդ տարիքում կարևորվում է համագործակցելու կարողությունների ձևավորումը: Համագործակցության շնորհիվ երեխան ձեռք է բերում այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են փոխզիջումը, համբերատարությունը, զսպվածությունը, ինքնաճանաչումն ու ինքնատիրապետումը, և որոնք իրականացվում են խաղի, աշխատանքի և ուսուցման ձևերով:

Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են երեխայի հիմնական պահանջները՝ ինքնուրույնության, ինքնադրսևորման, հաղորդակցման, մեծահասակի կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու և այլ առումներով: Խաղը ապահովում է հուզականությանը հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ: Դասավանդող առարկաները ավելի արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է համատեղել խաղը ուսումնառության հետ. օրինակ՝ 2-րդ դասարանում կերպարվեստի ժամին կարելի է խաղալ «Պատրաստում ենք գարուն», որի ժամանակ ուսուցիչը հանձնարարում է գարունը բնութագրող երևույթներ թվարկել (ամառ, ծաղիկ, արև, կանաչ դաշտեր, ծաղկած ծառեր, թռչունների վերադարձ, մանուշակ և այլն), և միասին քննարկում են առաջարկությունները, գալիս ընդհանուր եզրակացության: Զմռանալու համար կարելի է գրել գրատախտակի, հետո հանձնարարում է թվարկվածները հնարավորինս պատրաստել պլաստիլինով կամ խմորով: Երեխաները խաղում են, ուսուցիչ օգնությամբ պատրաստում են, այնուհետև հավաքում մի ուրիշ թղթի կամ դասարանի որևէ անկյունում:

«Ես և շրջակա աշխարհը» (3-րդ դաս.) առարկայի «Ես և իմ շրջապատի

մարդիկ» բեմայի ժամանակ կարելի է կազմակերպել «Ընկերություն» խաղը: Երեխաները փոխհամաձայնությամբ գալով որոշում են դերերը, համապատասխան հանձնարարություններ տալիս միմյանց և հետևում դրանց կատարմանը: Կամ «Հիվանդանոցում» խաղը սկսելիս երեխաները նախապես որոշում են ձեռք են բերում այն պարագաները, որոնք անհրաժեշտ են խաղին: Նրանք դասավորում են դրանք՝ ստեղծելով համապատասխան միջավայր, միասին որոշում՝ ինչ անել, որպեսզի «հիվանդը» շուտ ապաքինվի: Այս տիպի խաղերը երեխային տալիս են առօրյա կյանքը ճանաչելու բոլոր նախադրյալները, ինքնուրույն մտածելու հնարավորություն:

Աշխատանքը՝ իբրև մարդկային կարևորագույն գործունեություն, ձևավորվում է նախադրոցական և դպրոցական տարիքում: Աշխատանքային գործունեության միջոցով երեխան փորձում է ինքնահաստատվել, մտերմանում է մեծահասակների հետ, ճանաչում սեփական հնարավորությունները, համագործակցում հասակակիցների հետ, սովորում վերահսկել սեփական գործողությունները: Աշխատանքի բնույթին համապատասխան՝ երեխան համագործակցում է թե՛ հասակակիցների, թե՛ մեծահասակների հետ, ծանաչում սեփական հնարավորությունները, համագործակցում հասակակիցների հետ, սովորում վերահսկել սեփական գործողությունները: Աշխատանքի բնույթին համապատասխան՝ երեխան համագործակցում է թե՛ հասակակիցների, թե՛ մեծահասակների հետ, Արդյունքում ձեռք է բերում մի շարք բարոյական հատկություններ՝ աշխատասիրություն, համբերատարություն, ազնվություն, փոխօգնության հասնելու, փոխզիջման գնալու որակներ:

Օրինակ, կենցաղային աշխատանքներում հաճախ երեխաներն օգնում են ծնողներին: Միասին կարգի են բերում մեջքաանը, հյուրասենյակը, աշխատում սեփական տան բակում և այլն, իսկ դպրոցում երեխաներն ինքնուրույն համակարգում են «բնության անկյունում» տարվող աշխատանքը. մեկը ջրում է ծաղիկները, մյուսը՝ մաքրում տերևները: Տղաներից մեկը փրկեցնում է հողը, մի աղջիկ հեռացնում է չորացած տերևները, նույն ձևով մաքրում դասասենյակը և այլն: Երեխաների աշխատանքային համագործակցության արդյունքում «բնության անկյունը», դասասենյակը մաքուր է, գեղեցիկ, հաճելի:

Ուսուցման հիմնական ձևը տարբեր պարամունքներն են, որոնց ընթացքում իրականացվում է երեխա-երեխա, երեխա-ուսուցիչ համագործակցությունը, որը նպատակադր պայմաններ է ստեղծում երեխաների անձնավորության ձևավորման գործում:

Անուշ ԶԱՄԼԱՆ
Զարահունչի հիմն. դպրոցի դասվար

Երախտագիտություն

Մարդն ապրում ու արարում է առանց հատուկ գնահատանքի արժանանալու ակնկալիքի:

Բայց որքան հաճելի է, երբ մարդու ապրած կյանքն ու գործունեությունն իր մեջ կրում է այն պայծառն ու լուսավորը, որը չնկատելն ու չզննահատելն անկարելի է, առավել ևս, որ մարդն այդ մանկավարժ է՝ իր եռությամբ ու կոչումով:

Իմ առաջին ուսուցչուհի Ռեմա (Վիկտորիա) Հարությունյանը ծնվել է 1932թ. փետրվարի 24-ին Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում: Ավարտել է Ղազանչիի թերի միջնակարգ դպրոցը, իսկ 8-ից մինչև 11-րդ դասարանը սովորել է Վանք գյուղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը: Ուսումը շարունակել է բարձրագույն ուսումնական հաստատությունում: Նա 16 տարի աշխատել է Կիչանի 8-ամյա դպրոցում, այնուհետև՝ Ասկերանում, որտեղից 1960թ. տեղափոխվել է Ղազանչի գյուղ և Արցախյան պատերազմից հետո վերաբնակվել է Նոր Ղազանչի գյուղում, նորից աշխատել որպես դասվար արդեն Կիչանի և Ղազանչիի միջնակարգ դպրոցում: Ունեցել է 4 զավակ՝ 2 տղա և 2 աղջիկ:

Ռեմա Հարությունյանը սիրառատ մայր է և հմուտ մանկավարժ: Նրա սաները ուսուցիչ-

ԻՄ ՈՒՄՈՒՑԻՉ, ԽՈՆԱՐԿՎՈՒՄ ԵՄ ԶՈ ԱՊԱԶ

Մեր են, դատավորներ և մեծատառով հայորդիներ: Նա Արցախի աշխարհին տվել է իսկական հերոս, ով իր կյանքի յուրաքանչյուր



վայրկյանը նվիրել է հայրենիքին: Այդ հերոսը թելմանն է՝ հանրահայտ հայ գործիչը, ում բախտ չլիճակվեց վայելելու հայրենիքի վերականգնման, բարգավաճման բերկրանքը: Մի դրվագ բավական է նրա հերոսական արարքից, որ պատկերացնենք, թե ով էր նա՝ կենդանի լեգենդը, ով առաջինը Ստեփանա-

կերտի կառավարական շենքի տանիքից պատռելով դեմ մետեց ազգերիցների դրոշը և տեղում ամրացրեց հայոց եռագույնը: Ով հանդգնեց բաց դուրս գալ ազերական գարշահոտ ապարտի դեմ: Բայց, ավա՛ղ, նրա սիրտը չդիմացավ, չկարողացավ տանել Արցախյան գոյապայքարում հայ ժողովրդի պանծալի զավակների կորստյան լուրերը: 2008թ. մայիսի 18-ին կնքեց իր մահկանացուն. զանգ միանալու մեր նահատակների հոգիների աստղաբաշխում: Ռեմա մայրիկը մի կերպ տարավ որդու կարտը, նրան սփոփեցին միայն որդու մասին պատմվող լեգենդները:

Մեր սիրելի մանկավարժը հիմա էլ ապրում է հարազատ Ղազանչի գյուղում և վայելում է իր վաստակած հանգիստը: Նրա առաջ դրված է թելմանի նկարը՝ միշտ զարդարված

թարմ ծաղիկներով, ով կարծես միշտ նայում է սիրելի մորը, իսկ մայրը՝ որդուն, ու այդպես՝ ամեն օր:

Սիրելի մանկավարժին ուրախացնելու և նրան մեծարելու նպատակով նրա ծննդյան օրը այցելության գնացին Կիչանի և Ղազանչիի Կարեն Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Կ.Արիսյանը, փոխտնօրեն Գ.Հակոբյանը, կազմակերպիչներ Վ.Զաքարյանն ու Զ.Սարուխանյանը և նրա սան՝ տղերիս հեղինակը, ում առաջին դասարանում դասավանդել է ուսուցչուհին:

Անբացատրելի սրտահույզ տեսարան էր. ինչպիսի՞ ուրախություն էր տիրում սեփական հարկի տակ. մշել ծննդյան օրը գործընկերների և սաների հետ: Իսկ ուսուցչուհի Անահիտ Բաբայանն իր ընտանիքով ամեն կերպ աշխատում էր օրը համեմել խինդ ու ծիծաղով ու գեղեցիկ հյուրասիրությամբ: Այդ օրը երկար կմնա մեր հուշերում: Մեր վաստակաշատ մանկավարժի ուրախությունն ու խանդավառությունը ոգևորել էր մեզ:

Մեր պարտքն է հարգել և պատվել մեր մեծերին:

Իմ ուսուցիչ, խոնարհվում եմ քո առաջ:

Ջորայր ԱՐԲԱՍՄՅԱՆ
Կիչանի եւ Ղազանչիի Կ.Առաքելյանի անվան միջն. դպրոցի ուսուցիչ

ՎՈՒՇ-ԵՐԵՎԱՆ ԱՆՑԱՎ, ԲԱՅՑ... ԶԳՆԱՑ




Արցախի մշակութային կյանքում իր ուրույն տեղն ունի «Արցախի բալետներ» վոկալ-պարային համույթը: Արցախյան շարժման ծնունդ այս համույթն իր նպաստն է բերում մատաղ սերունդի գեղագիտական, հայեցի դաստիարակության գործին: Համույթը հիմնադրել և իր շուրջը հարյուրավոր պատանիների է համախմբել ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ, երջանկահիշատակ Սերգեյ Չարությունյանը, որին նվիրված հուշ-երեկո էր կազմակերպել Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը:

Դահլիճում էին ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը, Ս. Չարությունյանի ճանապարհը շարունակող սաները, նրա հարազատները, պարզապես քաղաքացիներ, որոնք արժևորում են նրա դերը Արցախի մշակույթի զարգացման գործում:

Բեմի կենտրոնում Ս. Չարությունյանի լուսանկարն էր, դաշնամուրին՝ նրա ակորդեոնը, և չնայած թախծալից սփռվող Գուսան Շահենի «Անցար, գնացիր» երգի՝ ներկաները զգում էին արժանավոր երաժիշտ-մանկավարժի կենդանի ներկայությունը:

Երեկոն ներածական խոսքով բացեց կենտրոնի տնօրեն Արմեն Զովսեփյանը: Նրա խոսքը շարունակում է հաղորդավարը՝ պատկերավոր ներկայացնելով Ս. Չարությունյանի գործունեությունը, նա մասն էր այն ծաղկին, որից մեղուն ենկտար է քաղում, մեղր սարքում,

բայց որի քաղցրությունը ոչ թե րուպեական ազդեցություն է թողնում, այլ ամբարվել է նրա սաների մեջ: Այսօր հայ երգարվեստում փայլող երգիչներ Անդրեյ, Ռազմիկ Ամյանը, Վարդան Բաղայանը դեպի մեծ արվեստ տանող ճանապարհի առաջին քայլերը կատարել են իրենց երախտավոր ուսուցչի՝ Ս. Չարությունյանի մոտ: Հայտնի բան է՝ ուսուցչի անենալավ գնահատողն իր սաներն են: Եվ բնական է, որ երեկոյին առաջինը խոսեց Ս. Չարությունյանի սան Ալյոնա Հայրապետյանը, որի համար դժվար է արտահայտվել մի մարդու մասին, որը փոխանցել է արժեքներ, բայց և՛ հեշտ է, որովհետև նրա ֆիզիկական բացակայությունը լրացվում է հոգևոր ներկայությամբ: Նա Ս. Չարությունյանի հետ միասին է եղել «Արցախի բալետների» ստեղծման օրից: Սանուհին հուզմունքով վերհիշեց իր ուսուցչի պահանջկոտությունը, նվիրված ծնունդը, անգամ ըմբակոտությունների տակ իր երաժշտական ժառանգության անմնացորդ փոխանցումը աշակերտներին և հպարտությամբ նշեց, որ այսօր ինքն է փորձում այդ նույնն անել իր սաների համար:



Նրա խմբավարությամբ երգչախումբը կատարեց Ս. Չարությունյանի ծննդյան 60-ամյակին նվիրված իր հեղինակած երգը:

Սերգեյ Չարությունյանը ծնվել է 1949թ. Ստեփանակերտում: Դեռ մանկուց զգացվում էր նրա հակումը երաժշտության նկատմամբ, և բոլորը նրա ապագան տեսնում էին արվեստի բնագավառում: Սովորել է Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում, այնուհետև ավարտել Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը: Արցախի այն տարիների քիչ արվեստագետներից է, որոնք իրենց կրթությունը ստացել են Երևանում, տոգորվել հայրենասիրական գաղափարներով: Ինչ-

պես ծնողները, այնպես էլ ճանաչողները համոզված էին, որ նա լավ երաժիշտ՝ ակորդեոնիստ կդառնար, սակայն նրա մեջ ի վերուստ նստած էր մանկավարժը, և գնաց ճակատագրով իր համար բացված ճանապարհով:

Շարունակության մասին ներկաների հուշերն են պատմում: Ստեփանակերտի հ.1 հիմնական դպրոցի տնօրեն Ռոմելա Դադայանը Ս. Չարությունյանին ճանաչել է 1980-ականների սկզբից, երբ նա աշխատում էր երաժշտական դպրոցում և հ.8 միջնակարգում: Եկավ իր մոտ և առաջարկեց համագործակ-

Հարությունյանը, մինչև պրոֆեսիոնալ մասնագետի համար կարողացավ կացարան հայթայթել: Այդպես կարող է վարվել միայն լավ մարդը, նորից եզրահանգում է դպրոցի տնօրենը: «Արցախի բալետներ» համույթը դեռևս անուն չունի, միայն երգչախումբ էր և հայրենասիրական երգեր էր երգում օմնի քթի տակ, հիշում է Ռ. Դադայանը: Քանի՞ անգամ են Ս. Չարությունյանին սաստել, որ չերգեն, սակայն չէր լսում ոչ մեկին, երգում էին և ոգեշնչում ժողովրդին: Երգում էին նաև պատերազմի տարիներին՝ զորամասերում, և նրանց երգը ջերմացնում էր զինվորներին: Ս. Չարությունյանը ռուսախոս էր, բայց առաջիններից մեկն էր, որ սկսեց համառոտ խոսել գրական հայերենով: «Ս. Չարությունյանը չի անցել գնացել, նա միշտ մեր կոլեկտիվում է: Նա այն մարդկանցից է, որ ծնվում են՝ հավերժ մնալու համար», վստահեցրեց Ռ. Դադայանը:

ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը գնահատեց Ս. Չարությունյանի ներդրումն այն առումով, որ հայկական երգ-երաժշտություն է սովորեցրել երեխաներին, իսկ մեծ սերունդը չի կարող հայրենասեր չլինել, կապված չլինել իր հողին: «Նա ցույց է տվել ճիշտ ճանապարհը, նա իր չներկայությամբ շարունակում է մնալ մեզ հետ», ասաց նա:

Ս. Չարությունյանն անընդհատ կատարելագործել է իր մասնագիտական-մանկավարժական հմտությունները: Մի քանի անգամ վերապատրաստումներ է անցել Մոսկվայում և այլ քաղաքներում, համագործակցել երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղագիտական ամբիոնի հետ, ծրագրային գրականությամբ հարստացրել դպրոցը, ավարտել նաև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ համալրելով իր մանկավարժական գիտելիքները:

«Արցախի բալետներ» համույթը սկզբում գոյատևում էր բարեգործական միջոցներով, հետո ստացավ պետական կարգավիճակ, որը Ս. Չարությունյանի երազանքն էր: Նրա հետ աշխատած խմբավար Գայանե Չարությունյանը հուզմունքով հիշեց ուսուցչի հետ աշխատած տարիները, և երդման պես հնչեց նրա խոսքը՝ կշարունակի Ս. Չարությունյանի գործը:

ԼՂՀ ժողովրդական արտիստուհի Նաիրուհի Ալավերդյանը երանությամբ հիշեց հրադադարից անմիջապես հետո կազմակերպված Արցախի մշակույթի օրերը Մոսկվայում, որտեղ 150 հոգանոց խումբը ներկայացնում էր Արցախի տարբեր համույթներ, այդ թվում՝ «Արցախի բալետները»: Այնքան կենսուրախ էին երեխաները, որ ոչ մեկը չէր հավատում, որ պատերազմի գոտուց եկածներ են:

«Արցախի բալետների» մեթոդիստ Կարինե Մարտիրոսյանը վստահեցրեց, որ այսօր էլ համույթն առաջնորդվում է Ս. Չարությունյանի կարգախոսով՝ «Մշակույթը հայ ազգի դեմքն է», և ձգտում են անխաթար պահել այն:


Ներկաները Ս. Չարությունյանի գործունեությանը ծանոթացան նաև ցուցադրված տեսաֆիլմից, որում դրվագներ ներկայացվեցին պատերազմի տարիներին զորամասերում կազմակերպած նրա համերգներից:

Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Ա. Զովսեփյանը կատարեց Սերգեյ Չարությունյանի վերջին պարզապարտումը, որը պետք է տեղի ունենար անցյալ տարվա մայիսին՝ հաշվետու համերգի ժամանակ, սակայն վերահաս մահը խանգարել էր: Կենտրոնի պատվոգիրը հանձնվեց Ս. Չարությունյանի որդուն՝ ՊԲ սպա Վլադիմիր Չարությունյանին: Վերջինիս խոսքը նույնպես հուզառատ էր. իր հոր և ուսուցչի գործը կշարունակվի այնքան ժամանակ, որքան ինքը լինելու է Արցախի աշխարհի պաշտպանը, իսկ մանուկները պարելու են հայկական պարեր:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիշում են և պահանջում

«ԱՄԱՌ ԱՌԱՆՑ ԱՅԳԱԲԱՑԻ». ՎԵՊ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Ընթերցասերները Հայոց ցեղասպանության 100-ամյակի օրերին զգալիորեն արժանանում են հարգանքի և հիշատակի:

Գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանը խոսեց հայության՝ աշխարհի քաղաքակրթության մեջ ունեցած մեծ դերի մասին:

Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Մելանյա Բալայանը պատմական անդրադարձ կատարեց՝ պատասխանելու իր իսկ հարցադրմանը՝ հնարավոր էր, որ հայ ժողովուրդը խուսափեր Ցեղասպանությունից: Հայոց ցեղասպանությունն ավելի խոր արձատներ ուներ, այն չի սկսվել 1915 թվականից, երիտթուրքերից, այլ այն ժամանակներից, երբ թուրքը հայտնվեց Մերձավոր Արևելքում: Հայերից ազատվելու միակ միջոցը Ցեղասպանությունն էր: Դա դժվար չէր նախ և առաջ այն պատճառով, որ հայերն իրենց պատմական հայրենիքում գրկվել էին պետականությունից: Արդու Համիդը հայերի առաջին զանգվածային ջարդերը կազմակերպեց, երիտթուրքերը Ցեղասպանություն կատարեցին, Քեմալական Թուրքիան շարունակեց ջարդերը: Հայերի ցեղասպանությունը թուրքական պետական քաղաքականության մաս է կազմում: Պանթուրքիզմը այսօր էլ շարունակում է իր գաղափարա-

խոսությունն իրագործել: Այն դարձել է մարդկության թարախապալարը և մեծ վտանգ է ներկայացնում քաղաքակիրթ աշխարհի համար: Պանթուրքիզմի չարորակ գոյության մասին երկար կարելի է խոսել, աշխարհը պետք է հասկանա, որ հայ ժողովուրդը միայնակ էտ է մղում պանթուրքիզմի նկրտումները, կանգնի նրա կողքին: Բայց այսօր դեռ հասկանալի է մի պարզ ճշմարտություն. մենք ինքներս ենք մեր պաշտպանը, և նրա հզոր մալու միակ միջոցը ազգի համախմբումն է ու պատմության դասերը կյանքի ուղեմիջ դարձնելը:

«Ամառ առանց այգաբացի» վեպի ընդարձակ վերլուծությամբ հանդես եկավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Արթուր Բաբայանը: Հարկ է նշել, որ նա գրականագիտական մեծ աշխատանք է կատարել: Գրքի հեղինակները Հայոց ցեղասպանությունը գեղարվեստորեն ներկայացրել են Վարդանի և Մարտի ընտանիքի և նրանց հետ հարաբերվող անձերի միջոցով: Մյուսին դրամատիկ է, դատելով ընթերցողների կարծիքից՝ այն ընթերցվում է մեկ շնչում: Գրքի առաջին էջում կարդում ենք հայ և օտարազգի հեղինակների բարձր կարծիքը վեպի մասին. «Մուսա լեռան քառասուն օրը» գրքից հետո այն երկրորդ մեծակտավ

ստեղծագործությունն է Հայոց եղեռնի մասին:

Երեկոյին իրենց տավարությունները արտահայտեցին հ. 8 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռուզան Աբրահամյանը, ըստ որի՝ վերջին տարիների իր կարդացած միակ գիրքն է, որը նրան անբուրն գիշերներ է պարզել, և ԱրՊՀ մագիստրանտ Ամժելիկա Ջաբարյանը:

Թոշկառու ուսուցչուհի Նաիրա Թամրազյանը երախտագիտություն հայտնեց երեկոյի կազմակերպիչներին, միաժամանակ իր ցավագին տավարությունները ներկայացրեց երկու տարի առաջ մեր կորուսյալ հայրենիք իր կատարած ճանփորդությունից, պատգամեց բանուկ պահել հայրենիքից հայրենիք ձգվող ճանապարհը:

Քաղաքային գրադարանի ակտիվ ընթերցողներ, դպրոցականներ Ասպրամն ու Սուրենը արտասանեցին եղեռնազարկ բանաստեղծների ստեղծագործություններից: Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի սաները կատարեցին «Կիլիկիա» և «Աղանայի ողբը» պարերը:

Ներկաները հեռացան երեկոյից՝ հոգում վերծանելով Պարույր Սևակի բանաձևումը՝ Ողբան մեռելոց, բեկանեն շանթեր, կոչեն սպորողաց...

Սեֆ. լրատվություն

ԴՊՐՈՑԸ՝ ՆԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՐԱՆ

Դպրոցն է այն դարձնողը, ուր հղկվում ու հասակ է առնում մեր ապագա սերունդը: Այստեղ են ձևավորվում մեր վաղվա գիտնականը, դիվանագետը, լավագույն մարզիկը, մանկավարժը, բժիշկը և, վերջապես, հայրենասեր զինվորը: Կրթության առաջին ու շատ կարևոր խնդիրը եղել է մտնել է բարոյական վեհ նկարագիր ունեցող սերունդ դաստիարակելը ու նոր միայն գիտելիք մատուցողի առաքելությունը: Առավելագույն գիտելիք յուրացնողները դպրոցում քիչ տոկոս են կազմում, որոնց հետ էլ մենք կապում ենք գիտության վաղվա նվաճումներն ու ձեռքբերումները: Այս հանգամանքից ելնելով՝ երբեմն մենք ավելի շատ ուշադրության կենտրոնում ենք պահում նրանց (թող սա ոչ մի դպրոցի համար բացառություն չլինի), որովհետև վաղը նրանք են հաղթելու տարաբնույթ մրցույթներում ու օլիմպիադաներում՝ բարձր պահելով և դպրոցի, և՛ մանկավարժների անունները: Ու այսպես միջակ ու թույլ աշակերտները հայտնվում են իհարկե ոչ մեծ ուշադրության կենտրոնում:

Կյանքը, սակայն, ունի իր գրված ու չգրված օրենքները ու երբեմն-երբեմն տհաճ անակնկալներ էլ կարող է մատուցել: Այն սովորողները, որոնցով մենք ժամանակին հպարտացել ենք և որոնց մեջ պարզապես չենք ցանկացել տեսնել բնավորության այս կամ այն վատ դրսևորումը, հետագայում փառքի ետևից ընկնելով, երբեմն մեծամտամուն են ու մոռանում իրենց արմատների և ակունքների մասին (խոսքս բոլորի մասին չէ), իսկ, ահա, այն աշակերտները, որոնց գուցե ժամանակին լավ չենք ընկալել իրենց չարածիժությունների կամ չսովորելու պատճառով, հենց նրանք են հետագայում պատշաճ հարգանքի արժանացնում իրենց ուսուցիչներին ու տարբեր բնագավառներում դրսևորում իրենց բարոյական բարձր կերպարը:

Արցախյան հերոսամարտում մեր տարած բազում հաղթանակները պայմանավորված էին ոչ միայն մեր խելացի աշակերտներով, նրանց վարպետությամբ, այլև բազում այն խենթ հերոսներով, որոնք, արհամարհելով ահ ու սարսափ, չմտածելով հետևանքների մասին, նետվել են մահվան

երախը, վտանգավոր գործողությունների հեղինակներ դարձել ու մեզ նվիրել այս խաղաղ ու երջանիկ օրերը:

Ու երբ նման տեսանկյունից են քննարկում հարցը, շատ ավելի է տեսանելի դառնում այն իրողությունը, որ այդ թույլ ու միջակ սովորողներից յուրաքանչյուրի հոգում գաղտնագրված է հերոսության մի պատահիկ, որ անհրաժեշտ պահին պոռթկում է ու դառնում ճակատագրական:

Այդպիսի մի խիզախ արարքի հեղինակ է դարձել 19-ամյա ժամկետային զինծառայող Մեխակ Գրիգորյանը:

Ծնվել է 1995թ. Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում՝ Միքայել և Նարինե Գրիգորյանների ընտանիքում: Չորս տարեկանում ընտանիքով տեղափոխվում են հնամաշտ (մայրը խնամապատի է): Եղբոր՝ Մխիթարի հետ միասին էին սովորում նույն դասարանում: Ուսման մեջ չէին փայլում, բայց արտադասարանական աշխատանքների ժամանակ ցուցաբերում էին մեծ աշխատասիրություն: Պատրաստական էին բոլոր հանձնարարությունները կատարելիս, միայն թե դաս չսովորեին (կարողությունները պակաս էին):

9-ամյա կրթություն ստանալով՝ թողնեցին դպրոցը և սկսեցին աշխատել Ասկերանի զինու գործարանում («Արցախբերդի կոմպանի» ՓԲԸ)՝ որպես բանվոր:

2012-2013-ին եղբայրները զորակոչվեցին Արցախի ՊԲ շարքերը, մեկը՝ մի քիչ շուտ, մյուսը՝ ուշ: Ավագ եղբայրը՝ Մխիթարը, զորացրվել է արդեն, իսկ Մեխակը շարունակում է ծառայությունը Ն գորամասում:

Ու ահա մի օր՝ ինժեներական աշխատանքներ կատարելիս, ուշադիր զինվորը, գննելով ոչ միայն դիմացի (հակառակորդի) դիրքերը, այլև թիկունքը, նկատում է, որ թշնամին ականներ է տեղադրում իրենց թիկունքում գտնվող ճանապարհի վրա՝ խաչմերուկում, որտեղով որ պիտի անցներ հերթափոխը տեղափոխող մեքենան:

Իսկույն հայտնում է հրամանատարին:

Հաջորդ օրը ոստիք երևի վայրկյաններ էր հաշվում՝ փայփայելով այն հույսը, որ շուտով հռոյուններ կսվեն, ու կցնծան իրենք, քանի որ դրանք բազում հայ զինվորների կյանք խլեցին:

Սպասելիքները հոգս ցնդեցին, բայց վրեժի ծարավը չհագեցավ...

Հաջորդ օրը կրկնեցին գործողությունը:

Մեխակը հաջորդ գիշերն էլ նկատեց և որոշեց 2 ընկերոջ հետ պատժել թշնամուն: Երբ տեղ հասան, գիշերային հրձիգներն անհետացել էին: Մեխակն իր ընկերներով բռնեց նրանց հետքը: Հասան նրանց բլինդաժիմ, մի 2 նռնակներ «ընծայելով» ոսոխին՝ վերադարձան դիրքեր:

Իր հանդուգն արարքի համար Մեխակը հրամանատարության կողմից խրախուսվեց պատվոգրով և երկու օրվա արձակուրդով: Նույն խրախուսանքին արժանացան նաև նրա երկու ընկերները:

Հպարտ են Մեխակի ընտանիքի անդամները, հպարտ են նաև ուսուցիչները, որոնք այսուհետ ամենաթույլ աշակերտի մեջ կտեսնեն մեր վաղվա հերոսին, հմուտ արհեստավորին, ի վերջո, բարձր նկարագրով մարդու:

Ընտանիքում չէին էլ կարող կասկածել Մեխակի արարքի մասին, քանի որ նա զինվոր էր և զինվորական գաղտնիքն իրավունք չուներ բացահայտելու, սակայն մարտական դիրքերից եկող հոփերը շրշում էին այդ մասին: Եվ երբ ընտանիքի անդամներն իմացան այդ մասին, հպարտանալով հանդերձ՝ երջանկության արցունքներ հոսեցին նրանց աչքերից:

Շուտով կգորացրվի Մեխակը (փոքր եղբայրն էլ արդեն ծառայում է բանակում). տանը նրան անհամբեր սպասում են մայրը, հայրը, զորացրված եղբայրը, միևնույն քույրիկը և մյուս հարազատները:

Բազուկներիդ առավել մեծ գործություն, հայ զինվոր: Հիշիր՝ քո աշակերտությունից է կախված շատերի կյանքը:

Քո բազում զրկանքների գնով շարունակիր Արցախի հզորացման գործընթացը: Դա քո պապերի, պապերի պապերի սուրբ հողն է՝ բյուր նահատակների արյամբ քաղցրացած ու սրբացած, և դու իրավունք չունես այն կորցնելու:

Անփորձանք ծառայություն ու բարի վերադարձ քեզ, հայ զինվոր:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՎԱԿՈՒՆԻՍՈՒՄ

Սա Հայաստան է, և՛ վերջ...
Լեոնիդ Ազգալոյան

Վակունիս և Խաչինտափ գյուղերը կազմում են մեկ համայնք, որտեղ 1996 թվականից գործում է դպրոցը, որն այժմ գտնվում է Վակունիս գյուղում և կոչվում է նահատակ ազատամարտիկ Վուրգ Ոսկանյանի անունով: Յուրաքանչյուր տարի՝ մարտի 31-ին, Վակունիսում կայանում է ոգեկոչման արարողություն՝ նվիրված այստեղ զոհված 11 ազատամարտիկների հիշատակին: Ինչպես միշտ, այս



անգամ էլ դպրոցում կայացավ միջոցառում, որը նվիրված էր նաև Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին: Բացի համայնքի բնակիչներից, ներկա էին հերոսների մարտական ընկերները, նահատակ ազատամարտիկ Վուրգյան Կարապետյանի Գոռ և Սկրտիչ զինվորական որդիները, շրջվարչակազմի աշխատակազմի վերաբնակեցման վարչության պետ Ռոբերտ Մաթևոսյանը, կրթության բաժնի ներկայացուցիչներ, հյուրեր: Միջոցառումն սկսվեց հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով: Վերանորոգման գործընթացում գտնվող դպրոցի միջանցքում ընդհանուր 21 աշակերտները՝ ուսուցչուհի Դիանա Ավետիսյանի ղեկավարությամբ, հանդես եկան՝ ներկայացնելով մեր ժողովրդի անցած ուղին: Հայոց թագավորական տները մարմնավորած աշակերտաշակերտուհիները, «մարտնչելով» ասպատակողների դեմ, հասան մեր օրերը: Այնուհետև ներկայացրին հատվածներ Պ. Ձեթունցյանի «Մեծ լույսը» պիեսից՝ մարմնավորելով Սիամանթոյին, Վարուժանին, Ռուբեն Սևակին, նրանց դեպի նահատակության տանող փառաքին ու ոստիկաններին: Կոմիտասի դերում հանդես եկավ գյուղի բնակիչներից Սևակ Գրիգորյանը: Անդրադարձ եղավ «Նեմեսիս»-ին, աշակերտները երգեցին «Գինի լից...» երգը: Զմռանցվեց Արցախյան գոյամարտը, և վերջապես՝ պանծալի ու երկար սպասված հաղթանակն ու խաղաղությունը, Հայոց 2 անկախ պետությունների հռչակումը: Ծածանվեցին հայոց Եռագույնները, հնչեցին օրհներգերը: Արդեն ազգային տարագով հայոց ազգագրական ու ռազմական պարերով հանդես եկան դպրոցի պարի խմբակի սաները, ովքեր վերջերս Ստեփանակերտում «Մշակութային խաչմերուկ» մրցույթ-փառատոնի անվանակարգում ճանաչվեցին հաղթող և արժանացան առաջին մրցանակի: Իրենց ավագ ընկերների հետ հանդես եկան նաև խաղաղացական երեխաները: Հանդիսատեսը՝ աշակերտների ծնողները, ուսուցիչները, հյուրերը, հուզված էին:

Նահատակ տղաների մարտական ընկեր Մ. Ջավադյանը շնորհակալություն հայտնեց, որ 7 սարի հետևում գտնվող ու ընդամենը 20 տարվա պատմություն ունեցող այս գյուղի անշուք դպրոցում նման երեխաներ են դաստիարակվում ու կրթվում: Շնորհակալություն հայտնեց համայնքի բնակիչներին, ուսուցիչներին, մանուկներին, որ շենացնում են իր մարտական ընկերների արյամբ ազատագրված ու սրբացած բնակավայրը: Մաղթեց, որ յուրաքանչյուր տարի ավելի շատ երեխաներ մասնակցեն նման միջոցառումների, բարի ծառայություն ցանկացավ դպրոցի շրջանավարտ Կարեն Հարությունյանին, ով այս պահին հայրենի սահմանն է պահում: Նահատակազատամարտիկի որդին՝ Գոռը, նշեց, որ արդեն 5-րդ անգամ է յուրաքանչյուր անգամ նոր ձեռքբերումներ է տեսնում: Շնորհակալություն հայտնեց վակունիսցիներին, որ այստեղ են բնակվում:

Ձինվորական եղբայրներ, Սիսիանի մարտական ջոկատի ազատամարտիկներ ժորա և Սկրտիչ Դիլանյանները, ովքեր ամեն տարի կազմակերպում են այցը դեպի Վակունիս, ասացին, որ լավ են զգում, որ կա առաջընթաց, հպարտ են տեղի բնակիչներով, ովքեր շարունակում են տղաների գործը:

- Ձուկվելը հեշտ է, - ասաց ժորան, - ազատագրած երկիրը պահել ու շենացնելն է դժվար:

Երախտագիտություն հայտնեց դպրոցականներին, նրանց ուսուցչուհուն՝ դպրոցի նախկին շրջանավարտ Դիանա Ալեքսանյանին, որ կարողացան այդ կարճ ժամանակում ներկայացնել Հայոց ողջ պատմությունը:

Դպրոցի տնօրեն Հեղինե Բախչյանը նույնպես շնորհակալ եղավ իր սաներից ու դուստր ուսուցչուհուց: Կարևորեց Վուրգի ու նրա ընկերների սխրանքը, ողջ մնացած տղաների նվիրվածությունը տարածքին, որը դարձել է սրբատեղի: Վակունիսի համայնքապետ Էդուարդ Ջաքարյանը նշեց, որ դպրոցն է համայնքի հիմքը, և կարևորեց նման միջոցառումները, մարտիրոս-ազատամարտիկների մարտական ընկերների այցը տարածք: Շրջվարչակազմի ներկայացուցիչները հյուրերի այցը կարևորեցին՝ նշելով, որ մեր դպրոցներում դաստիարակվում ու կրթվում է հայրենասեր ու մաքուր սերունդ, և պատահական չէ, որ հայրենի հողը հերոսաբար պաշտպանելիս մարտիրոսվեց Աղածոր գյուղի 19-ամյա Հակոբ Խաչատրյանը:

Ջրուցում են աշակերտների հետ, ովքեր մարմնավորել էին մեր թագավորություններն ու Ձեթունցյանի հերոսներին: Բոլորն էլ հավաստիացրին, որ տեր են կանգնելու Վուրգի ու նրա ընկերների՝ կյանքի գնով ազատագրված հողին, լավ են սովորելու, որ հետագայում մեծ օգուտ տան իրենց բնաշխարհին՝ տանը:

Ջոիրաբ ԸՈՔՈՅԱՆ

Շնորհավորանք

ԽՂԺԻ ՄՏՈՔ



Երկար տարիների դասվար է նա: Շուշիի ազատագրումից Վեր աշխատում է Խաչատուր Աբովյանի անվան կրթօջախում: Խստապահանջ է ու բարեխիղճ, գործի նվիրյալ ու արդարամիտ: Նրա գերագույն նպատակը սաներին ուսուցանելն է: Դպրոցը նրա կյանքի բաղկացուցիչ մասն է: Անչափ սիրում է մաքրությունը և հետևողականությունը: Նրա բոլոր աշակերտները աչքի են ընկնում կարգապահությամբ ու կազմակերպվածությամբ: Երբ բարձր դասարաններից մեկում որևէ մեկ ուսուցիչ է աշխատում, իսկույն ասում է՝

երևում է, թե ում դաստիարակած սաներն են: Գոհար Ասրյան: Այս անունն ասում է, որ կրթօջախն ունի բարեխիղճ ուսուցչուհի, մարդ, որի անձնային որակներն ուղղված են մատաղ սերունդի դաստիարակությանը: Շուշի 23 տարի Գոհար Ասրյանն աշխատում է մի մեծ ու համերաշխ կոլեկտիվում և վայելում կոլեկտիվի հարգանքը: Նրա խոսքը գործ է, երբեք չի անաչառ, գործելակերպը նպատակային: Այն, ինչ ինքն է տվել սաներին, մեծ վաստակ է: Եվ ամբողջ կյանքի ընթացքում, որտեղ էլ որ աշխատել է, մեծ նվիրումով է գործունեություն ծավալել, խղճի մտքը:

Լրացել է բարեխիղճ մանկավարժի ծննդյան 60-ամյակը, և գործընկերները սրտանց շնորհավորում են նրա հոբելյանը, իսկ աշակերտներն ու ծնողները շնորհակալական խոսքեր են ասում նրա վաստակի ու գործունեության համար:

Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՐՑԱՆՅԱՆ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԱԾ ԿՅԱՆՔԸ՝ ԴԱՐԻ ՄԱՆՐԱԿԵՐՏ



Նայում եմ Սաթեմիկ մայրիկի՝ բարու-
թյամբ ժպտացող աչքերին ու դժվարանում եմ
հավատալ, որ իմ առջև 100-ամյակը հետևում
թողած կին է: Հիշում եմ: «Ի՞նչ արդթք գի-
տեք»,- քանզի համոզված եմ՝ մեր օրերում
միայն Բարձրյալի հետ համապագ հաղորդ-
ակցվող մարդը կարող է հասնել այդ պատ-
կանելի տարիքին, և չեմ սխալվում: Ծիշտ է,
նրա «Հայր մերը» մի քիչ տարբեր է մեր իմա-
ցածից, բայց երևի թե Տերը գոհությամբ է
լսում մի քիչ մտերմիկ, բայց առավել անանձ-
նական այդ աղոթք-աղերսը, որով նա դիմա-
վորում է ամեն նորաբաց օր. «Աստված, ես
քեզ մատաղ, տանդ-դանդ մատաղ. Քեզա-
մից ոչ ոսկի եմ ուզում, ոչ հարստություն, ոչ
մի բան չեմ ուզում, մենակ թե այնպես արդ՝ էլ
կոչվի չլինի աշխարհում: Ինչքան ջախել կս,
բոլորին պահիր Քո շվաքում, բոլորին պահիր-
պահպանիր, ես ինչ ունեմ՝ նրանց էլ հետը»...
Իսկ գիշերները, գլուխը բարձր դնելուց
առաջ, դարձյալ նույն խոսքերն են մըմնջում
նրա շուրթերը: Նա հավատում է, որ Արարիչն է
տնօրինում մարդու կյանքը, և մարդ պետք է
կարողանա դիմանալ թե՛ լավ ու վատ օրերին,
թե՛ նեղություններին, թե՛ «լեն ու բուլ» կյան-
քին: Եվ որպես բարեպաշտ հավատացյալ՝ չի
մոռանում աղոթքից առաջ անպայման թողու-
թյուն հայցել կամա-ակամա գործած իր մեղ-
քերի համար:

Մանկության ամենավաղ հուշն էլ կապ-
ված է Աստծո տան հետ, երբ ինքը՝ երեք տա-
րեկան թուրքում մի աղջնակ, մոր հետ գնում էր
եկեղեցի, ափի մեջ գզուշությամբ պահած
ծուն տալով քահանային, փոխարենը՝ նշխար
կամ, ինչպես ինքն է ասում, «մասնը» ստա-
նալու: Վարուց չկա իրենց գյուղի եկեղեցին,
որի գանգերի դողանքը առավելունեմ ու երե-
կոներն աղոթքի էր կանչում բարեպաշտ
ծխականներին, և որի մկրտության ավագա-
նում ծնողները կնքել են իրենց վերջին՝ տաս-
ներորդ գավակին՝ Սաթեմիկ Իսայի Իսրայել-
յանին:

Ծնվել է խնամախոսում, 1914թ. աշնանը,
թե՛ որ ամսի որ օրը, չգիտեմ. մայրն ասում էր,
թե լոբին «չորուկեծ» անելու ժամանակ է ծն-
վել, երկի թե ամառվա վերջին կամ աշնանը,
մի քանի անգամ քննարկելով ստանալիս տարիքը
փոքրացրել են մի քանի ամսով և գրել 1915թ.
հունվարի 7, ըստ որի էլ, այս տարվա հունվա-
րի 7-ին, մեծ շուքով, հարագատներով ու բա-
րեկաններով նշել են Սաթեմիկ մայրիկի փա-
ռահեղ իրերյանը՝ 100-ամյակը: Դժվար է
հավատալ, որ լույս ու բարություն ճառագող
այդ կնոջ թիկունքում մի ամբողջ դար է պահ-
ված, այն էլ ինչպիսի դար՝ փոթորկուն ու վայ-
րիվերուններով լի մի ահեղ ժամանակաշր-
ջան: Իսկ ամենագարմանալիս այն է, որ դա-
րաշափ այդ կյանքն իր կանաչ- կարմիր տա-
րիներով, կորուստներով ու ձեռքբերումնե-
րով, իր բոլոր օրերով ապրում է նրա հուշե-
րում: Հակառակ սպասածի՝ աշխույժ գրույց
ծավալվեց մեր միջև. նա հիացրեց ինձ մարդ-
կային իր տեսակով, ազնվությամբ, պայծա-
ռամտությամբ, հունդով, կենսախնդրությամբ,
անսահման բարությամբ: Տարիքի համեմատ
լավ պահպանված, մաքուր ու կոկիկ Սաթե-
միկ մայրիկը Թունանյան ու բանախոսական
գոհարներ է արտասանում, երգում ու համով-
հոտով գրուցում և զարմանալիորեն չի բողո-
քում առողջությունից: Միայն ասում է, որ աչ-
քերի լույսն է նվազել: Իսկ երբ ծանոթ-բարե-
կամ զարմանում ու հիանում են նրա առույգ
տեսքով, կատակով վրա է բերում. «Բա, աղջ-
կա պահած եմ է՛, հարսի պահած չեմ»:

Ծնողները ո՛չ հարուստ էին, ո՛չ աղքատ.
իրենց ճակատի քրտինքով ապրող մարդիկ
էին. արևը դեռ չծագած արդեն ոտքի վրա էին
և միջև մութը ընկնելը անվերջ բանում էին:
Մեծ այգի ունեին, որի բարիքները ոչ միայն
իրենք էին վայելում, այլև հեռու-մոտ բարե-
կամներն ու հարևանները: Սաթեմիկը հիշում
է, որ երբ վրա էր հասնում այգեկուրթի ժամա-
նակը, հայրը լուր էր տալիս խնամքի ստանում և
հարևան գյուղերում ապրող իրենց ազգա-
կաններին, որոնք գալիս էին էշով ու խուրջի-
ներով, ձիով ու սայլով՝ տիրոջ սրտի պես մեծ
այգուց իրենց բաժինը տանելու: Չորս տարե-
կան էր, երբ հայրը երկարատև բացակայու-
թյունից տուն էր վերադարձել, և ամբողջ գյու-
ղը եկել էր տեսության: Հայրը պատմեց իր գլ-
խով անցածը, և այդ տխուր պատմություն-
ները դարձան Սաթեմիկի մանկության ուղե-
կիցները: Ընտանիքի առաջնեկը՝ Սաթեմիկի
մեծ եղբայրը, Առաջին համաշխարհային պա-
տերազմի ժամանակ ցարակամ բանակի գն-
վոր էր: Հեղափոխությունից հետո, տունդար-
ծի ճանապարհին, կանգ էր առել Գրոգիի քա-
ղաքում՝ մի քիչ փող վաստակելու, որպեսզի
ծնունդնայն չվերադառնա հարագատների
մոտ: Շուտով հայրը լուր է ստանում, թե որ-
դու խարդախությամբ սպանել են: Հայրա-
կան վերջին պարտականությունը նրան
հասցնում է օտար ափեր՝ գտնելու և խոնարհ-
վելու որդու շիրիմին: Տունդարձի ճանապար-
հին որոշում է տեսակցել Բաբյուն ամուսնա-
ցած աղջկան, բայց այստեղ էլ մի նոր վիշտ ու
փորձանքի մեջ է ընկնում: Բաբու է հասնում
այն օրերին, երբ քաղաքում մոլեգուն էին
հայկական ջարդերը: Փեսան տնից դուրս էր
եկել հաց գնելու և արդեն երրորդ օրն էր՝
չկար: Աղջիկը նորածնի հետ մնացել էր տա-
նը՝ մեծակ ու անօգնական: 1905թ. կոտորած-
ներից հետո, 1918թ. սեպտեմբերին եռօրյա
եղեռնը Բաբյի փողոցները նորից ներկեց հա-
յի արյունով: Բախտի չար կամոք, ուրիշ 72
տարի անց՝ հունվարին, նույն Բաբյուն, որ
տասնամյակներ շարունակ համարվել է
Անդրկովկասում սոցիալիստական հեղափո-
խության հեղակետ և ազգամիջյան եղբա-
րության կիզակետ, 7 օր ու գիշեր վայրենի
թուրքը նոր եղեռն ու նախնի սանձազերծեց:
Սաթեմիկի մանկության հուշերն արյունոտվե-
ցին հոր պատմածներից: Կարծես դա քիչ էր,
մի քանի ամիս անց, հավաքող ընկնում է գյու-
ղը, թե թուրք խուժանը շարժվում է դեպի հայ-
կական գյուղերը՝ սպանության ու կողոպու-
տի նպատակով: Միջև Ասկերանի բերդ հա-
սած թուրքերին հայերը հետ են մղում: 1919-ի
ուշ աշունն էր. մի քանի ժամվա ընթացքում
դատարկվեցին խնամախոսում ու մերձակա
գյուղերը: Իրենց հետ վերցնելով առաջին
անդամաշտության իրերն ու անասուններն
առաջն արած՝ գյուղացիները թաքնվեցին մո-
տակա անտառներում, որտեղ մնացին շուրջ
վեց ամիս: Հետո, ինչպես Սաթեմիկի մայրիկն է
ասում, «ռուս սաղաթը եկավ, ասացին՝ խա-
ղաղություն է, զնացրեք ձեր տները»:

Տաղ տարեկան էր, երբ սկսեց հաճախել
դպրոց: Ուսուցիչն իրենց հարևան Արտաշես
Ավանեսյանն էր, ով գյուղի երեխաներին սո-
վորեցնում էր մայրենի լեզվով գրել-կարդալ,
թվաբանություն և ռուսերեն տառերը: Սաթե-
միկն այնքան ընդունակ էր, որ առանց դասա-
գրքի, ուսուցչի պատմածով լիովին գոհաց-
նում էր իր գիտելիքներով: Գյուղական աղջ-
նակը, սակայն, ուսումը պիտի համատեղեր
առտնին հոգս ու կարիքի հետ. «Դպրոցից
գալիս էի, թորբաս վերցնում ու գնում մեր
այգու տանձն ու խնձորը, հոնը, մյուս բերքն
ու բարիքը հավաքելու»: Հիմա ամենից շատ
կյանքի այդ շրջանն է կարոտում, երբ իր խոս-
քով՝ «Ժըռըրեն պտկավմա իլալ շուր կյալիս»: Զնայած տանն ու դրսում մոր ու քույրերի օգ-
նակամ էր, այնուամենայնիվ, ուսումը չտու-
ժեց, ավելին՝ երրորդ դասարանի կեսից ու-
սուցիչը նրան փոխադրեց քրորորդ դասա-
րան, ինչի արդյունքում քառամյա դպրոցն
ավարտեց երեք տարում: Բայց անցած դարի
քսանակամները մեր երկրամասում հեռու էին
ուսման ու գիտելիքի համար բարենպաստ
ժամանակաշրջան լինելուց: Հակառակ ու-
սուցչի հորդորների՝ ծնողները չկարողացան
հոգալ նրա հետագա կրթությունը, բայց այ-

սօր էլ նա հիացնում է չափածո խոսքի հետ իր
մտերմությամբ, հայ երգի իմացությամբ, սրա-
միտ ու կենսափորձով իմաստնացած խոս-
քով:
...Ի՞նչ հրաշք ու երկնային պարզև կարող
է համեմատվել մոր հետ, նրա սիրող սրտի
հետ. նա միակ սրբությունն է, որի մասին
առանց հուզմունքի չի կարողանում պատմել
անգամ կյանքում շատ բան տեսած, 100-
ամյակը հետևում թողած դուստրը: Մի լուսա-
վոր թափի է պարուրում դեմքը, և երանու-
թյան շնչով են ջերմանում բառերը, որոնցով
նա փորձում է ներկայացնել մորը: Բադարա
գյուղից հարս գալով խնամիստան՝ Կատին-
կա մայրը տասը զավակ է լույս աշխարհ բե-
րել: Արցախից մամիկի տարագրված, օջախին
իր նվիրվածությամբ, աշխատասիրությամբ
ու առատաձեռնությամբ է մնացել նա դատեր
հուշերում. «Կլոր տարին մենք թացան ունե-
ինք. ամենապակաս տարին անգամ երեք-
չորս գոնջակով էինք կթում ու շաբաթը երկու
անգամ խնոցի հարում»: Հատկանշական է,
որ գյուղական առօրյայի համար սովորական
այդ գործը բարեպաշտ հայուհին վերածել էր
բարեգործական ծեսի. բերում, իրար կողքի
շարում էր 4-5 աման, որոնք թանով լցնելուց
հետո զարդարում էր մի-մի գունդ յուղով և բա-
ժանում դրկից-բարեկամի, ովքեր կբան չու-
նեին: Սաթեմիկ մայրիկն էլ մոր նման հյուրա-
սեր ու առատաձեռն տանտիրուհու համբավ
ունի:
Ինչո՞ւ ենք այսքան հանգամանորեն անդ-
րադառնում այս հայուհու կյանքի պատմու-
թյանը... Քանզի համոզված ենք, որ Սաթեմիկ
մայրիկի ապրած կյանքն ասես վերջին հար-
մանամյակում մեր ժողովրդի պատմության
մանրակերտը լինի, խնամկար՝ հյուսված դա-
րի պատմական նշանակալից իրադարձու-
թյուններով, որոնք չորսանցեցին մեր փոքրիկ
երկրամասն ու այնտեղ ապրող-արարող ժո-
ղովրդին: Նրա կյանքի պատմությունն
անխափսփոտ կապված է իրեն ծնող ժողո-
վրդի անցած ուղուն և, ճանաչելով նրան, ճա-
նաչում ենք ինքներս մեզ ու մեր արածը:
...15 տարեկան էր Սաթեմիկը, երբ Ստե-
փանակերտից մարդիկ են գալիս խնամիս-
տան և շրջակա գյուղերը՝ հավաքազերելու
14-15 տարեկան պատանիներին, խոստանա-
լով նրանց տանել քաղաք, ուսում տալ, հագ-
ուստով ու ուտելիքով ապահովել: Դժվար ժա-
մանակներ էին, և գյուղաբնակ շատ երիտա-
սարդների համար գայթակղիչ այդ առաջար-
կը, ինչպես ասում են, կոտրեց մեր գյուղերի
մեջը: Տարիներ անց այդպիսի մի սամում էլ
մեր գյուղերը ջախտաբախ արեց տխրահե-
շակ Սոււնգայիթի կառուցման համար: Սաթե-
միկի՝ Ստեփանակերտում ուսումը շարունա-
կելու հույսերն ի դերն եղան, երբ հասկացավ,
որ իրենց բերել են արհեստ սովորեցնելու: Այն
տարիներին ԵՊԿ-ը տեղակայված էր ներկա-
յիս Մարտունի փողոցի երկհարկան մի շեն-
քում, որի բակում փաթաթման փոքրիկ ար-
տադրամաս կար: Այստեղ աղջիկները ստա-
ցան փաթաթող կամավորուհու որակավորում:
Շուտով նրանց կացարան են հատկացնում
քաղաքի «բանվորական» կոչվող շենքերում:
Սաթեմիկն ու մյուսները տեղափոխվում են
աշխատելու մետաքսագործական ֆաբրիկա-
յում: Շուտով նա աչքի ընկավ որպես առաջա-
վոր բանվորուհի, աշխատել է նաև հրահան-
գիչ, բայց նախընտրել է երկու հաստոց պա-
հել, քանի որ բանվորուհու վաստակով ավելի
հեշտ էր աճող ընտանիքի կարիքները հոգալ:
1932թ. Սաթեմիկն ամուսնացել է եղիչե
Գրիգորյանի հետ, և նորաստեղծ ընտանիքին
մի սենյակ են հատկացրել հանրակացարա-
նում: Ամուսինը Ռե գյուղից էր. միջև խորի-
դային կարգերի հաստատումը ունկտր գեր-
դաստանի զավակ էր, բայց հետո ամեն ինչ
կորցրել են և հայտնվել չքավորության շեմին:
Իսկ հարսանիքն էլ այն ժամանակների հա-
մար արտասովոր մի հյուրասիրություն եղավ,
որը կարելի է համարել հետագայում «կոմե-
դիական» կոչվող հարսանիքների նախա-
տիպը: Իրենց զբաղեցրած մեկ սենյակում
հագիվ էին տեղավորվում նորապսակների
հարագատները, իսկ հյուրերն այնքան շատ
էին, որ երաժիշտների հետ նրանց ուղարկել
են ակումբ, որտեղ հարսանքավորները մի

կուշտ պարել են ու ցրվել իրենց տները:
Օժիտն էլ մի ձեռք անկողին էր, երկու բարձ,
մեկ սավան: Նորաստեղծ ընտանիքին սենյակ
հատկացնելիս հետն էլ կտրոն են տվել, որով
երկու գոյալ, երկու ափսե և մի կաթսա են գնել:
Վերջինս, ինչպես կատակով Սաթեմիկ մայ-
րիկն է ասում, «35 թվից մինչև հիմա բարեխ-
ճորեն ծառայում է ու դեռ մի անգամ քեֆիս
կպած չկա»: Ամուսիններն աշխատասեր մար-
դիկ էին: Տարիների հետ իրենց ճակատի քր-
տինքով տունուտեղ են դրել, կահ-կարասի
գնել, իրենց երեխաներին սեփազանցել: Զնայած
քաղաքաբնակ էին, բայց հողի հետ կապը եր-
բեք չէին կորցրել: Քաղաքի մերձակայքում
միշտ հողամաս են ունեցել, վարել-ցանել են,
ծնենովա պաշար հոգացել:
Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազ-
մը, եղիչեն մեկնեց ռազմաճակատ. ծառայու-
թյունն սկսել է Իրանում, որտեղ ծանր վիրա-
վորվելուց հետո բուժվել է տարբեր հոսպի-
տալներում, ապա հիվանդության պատճա-
ռով գորացրվել: Սաթեմիկի երկու եղբայրը,
երկու տեգրը, քրոջ տղան, քրոջ ամուսինը
գոհվել են Մեծ հայրենականում՝ հետպատե-
րագյան դառն ու դժնդակ տարիներին հա-
վելելով կորուստների կսկիծը: Ութ զավակ է
լույս աշխարհ բերել Սաթեմիկ մայրիկը, որոն-
ցից հինգը մահացել են փոքր հասակում: Պա-
տերազմից հետո ծնված նրանց երեք դուստ-
րերը՝ ենման, Մելիքան և ժասմենը, դարձան
ընտանեկան երջանկության ամուր պատվա-
րը: Հանապազօրյա իր աղոթքներում նա չի
մոռանում Տիրոջը շնորհակալ լինել իրեն բա-
ժին հասած մայրական երջանկության հա-
մար: Արդեն 44 տարի Սաթեմիկ մայրիկն ապ-
րում է այսօր արդեն թոշակառու մանկավարժ
դատեր՝ ժասմենի հետ, ով քաղաքում անգլե-
րենի լավագույն մասնագետներից է: Աղջիկ-
ները մոր մասին անթաքույց հպարտությամբ
են պատմում: Նրա առատաձեռնության,
առասպելական հյուրասիրության, ազնվու-
թյան, աշխատասիրության և անսահման բա-
րության մասին այնքան ասելիք ունեն, որ
պատմելով չի հատնի: Ծիծաղելով վերադիչե-
ցին, թե հյուր ընդունելիս մայրն ինչպես էր ձե-
ռուտ ընկնում, տան եղած-չեղածն հանում,
դնում սեղանին: Հապա ո՞նց էր համոզում աղ-
ջիկներին, որ հյուրի համար մորթած հավից
գոհանան իրենց բաժին հասած կտորներով.
ժասմենին ասում էր. «Վիզը քեզ, որ վիզ եր-
կար ու գեղեցիկ լինի», ենմային՝ «Մոտեղը
քեզ, որ քայլերդ ամուր ու հաստատ լինեն»,
Մելիքային՝ «Թեք քեզ, որ աշխատելիս թևերդ
չիզգեն», իսկ հավի ընտիր մասերը բնակա-
նաբար հյուրերին են էին: Միջև այսօր էլ մորից
սովորելու և ընդօրինակելու շատ բան ունեն:
ժասմենը կատակով ասում է, որ համախակի
հյուրերի պատճառով գրեթե միշտ հատակին
էր քնում և միայն բուրուս սովորելիս, հանրա-
կացարանում է վայելել մահճակալին քնելու
հաճությամբ: Աղջիկները խոստովանում են՝
միջև այսօր էլ մայրիկի խոսքն օրենք է իրենց
համար: Հետաքրքիր մի դրվագ վերաբերեց են-
ման, երբ իր հարսանիքի հաջորդ օրը տնից բե-
րած հագուստեղենի ճամպուրկում մի քար
հայտնաբերեց: Նա անակնկալի եկավ, բայց
չբարձրաձայնեց գտածոյի մասին: Ավելի ուշ,
մորից իմացավ այդ քարի խորհուրդը՝ քարի
պես պինդ ու ամուր լինի, դիմանա ընտանե-
կան կյանքի բոլոր փորձություններին, նաև
քարից լռել սովորի և հեռու մնա քամաքսան-
քից:
Մեծի ունց տոհմածառի մի ճյուղն է Սաթե-
միկ Իսրայելյանը, որի երեք շիվերը նոր ընծ-
յուղներ են տվել: Ութ թոռներից մեկն այսօր,
ցավոք, չկա, 18 ծոռ ունի, 6 թոռան թոռ, շու-
տով կծնվի 7-րդը: Հրաժեշտից առաջ իմ վեր-
ջին հարցին՝ ո՞րն է մարդու կյանքում ամենա-
թանկ բանը, Սաթեմիկ մայրիկը հարցով պա-
տասխանեց՝ կյանքը... Ապա մի քանի վայրկ-
յան լռելուց հետո, հաստատուն շեշտով հա-
վելեց՝ երեխաները... Այդ պահին հարյուր
տարվա կանացի նրա կենսափորձն էր խո-
սում. ասել է թե՛ կնոջ կոչումը և երջանկու-
թյունը մայրությունն է, չէ՞ որ երկրի վրա
Աստված կնոջն է վերապահել աղամորդու
արարման երկունքը:

ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

ՀՈՎԱՏՓՅԱՆՆԵՐԻ ԳԵՐՊԱՍԱՆԸ



Ժողովրդական իմաստությունը հուշում է մեզ, որ միայն լավ արժանատիներից է լավ ծառ կայանում և անուշահամ պտուղներ տալիս:

Ռ. Հովսեփյանը ծնվել է 1921թ. Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղում: 1928 թ. մտնելով գյուղական 7-ամյա դպրոց՝ սովորել է գերագանց և վերջացրել է նրա 2-րդ դասարանը: 1930 թ. նրա հայրը՝ Սեդրակը, ընտանիքով տեղափոխվում է մարզկենտրոն Ստեփանակերտ և բնակություն հաստատում շուկայի թաղամասի 25-րդ տանը: Տանտերը համագյուղացի լինելով, տան վարձը չենք էր վերցնում՝ մտնելով Սեդրակ Հովսեփյանի դրույթան մեջ, քանի որ նա տան միակ աշխատողն էր (աշխատում էր շինվարչությունում): Սկսելով հասարակ բանվորից՝ հասել էր վարպետ որմնադիրի աստիճանի, իսկ 1960-ականներին նրան բարեխիղճ աշխատանքի համար վարչության ղեկավարությունը նշանակել էր հ.2 շինարարական բրիգադի բրիգադապար: Սեդրակը երեք զավակների հայր էր, որոնցից ավագը Գուրգենն էր, միջնեկը՝ Ռուբենը, իսկ կրտսերը դուստր Վարդուշն էր: Սեդրակի արու զավակները Ստեփանակերտում ուսումը շարունակեցին հ.2 հայկական միջնակարգ դպրոցում, Գուրգենը՝ 7-րդ դասարանից, իսկ Ռուբենը՝ երրորդից, դուստր Վարդուշն ուսումը սկսեց հ.1 հայկական միջնակարգ դպրոցում: Նրանք երեքն էլ ավարտեցին միջնակարգը, սակայն երեխաների մեջ Ռուբենը տարբերվում էր ուսման նկատմամբ մեծ սիրով: Նա յուրահատուկ անձնավորություն էր, տաղանդավոր և շնորհքով ի ծնե: Մայրը՝ Ելենան, որը տնային տնտեսուհի էր, հատուկ սեր ու մոտեցում ուներ Ռուբենի նկատմամբ: Նա զգում էր Ռուբենի առանձնահատուկ սերը ծնողների նկատմամբ, այդ իսկ պատճառով մինչև կյանքի վերջ նրանք ապրեցին Ռուբենի կողքին: Ուսման տարիներին Ռ. Հովսեփյանը շատ ընդունակ և պարտաճանաչ աշակերտ էր, չկար մի առարկա, որ նա չսիրեր, բայց հատուկ սիրով էր լցված ռուսաց լեզվի և գրականության ու նկարչության նկատմամբ: Նա շատ շնորհալի էր, դեռ մանկուց սիրում էր զբաղվել նկարչությամբ և երաժշտությամբ: 13 տարեկանում նա ազատ նվագում էր մանդոլին և

կիթառ, հետո էլ՝ մենթրոն: Դպրոցական տարիներին նրա նկարները ցուցադրվում էին ցուցահանդեսներում, ինչպես դպրոցում, այնպես էլ քաղաքում: Նրա նկարների հերոսները հասարակ մարդիկ էին և Արցախ աշխարհի հիասքանչ բնությունը: Նա միշտ մրցանակների էր արժանանում և խրախուսվում: 1940 թ. Ստեփանակերտի պետական թատրոնի հիմնադիր, տնօրեն և ռեժիսոր, հանրապետության ժողովրդական դերասան Կ. Ալվարյանը, լսելով շնորհալի երիտասարդ նկարիչ Ռ. Հովսեփյանի մասին, նրան հրավիրում է աշխատելու թատրոնում՝ որպես գեղանկարիչ: Նա ընդունում է հրավերը և աշխատում նշված հաստիքում 1940թ. հուլիսից մինչև 1941թվականի սեպտեմբերի 15-ը: Սակայն լինելով հայրենասեր և զգալով այն մեծ վտանգը, որը կախված էր խորհրդային ժողովուրդների վրա, որոշում է չսպասել զորակոչին, այլ կամավոր զինվորագրվում է՝ ասելով, որ ինքն ավելի շատ պետք է ռազմաճակատին, այլ ոչ թե թատրոնին՝ մտածելով, որ իրեն կարող է փոխարինել մի շնորհալի ծերուկ: Ռուբենը, 1941 թ. սեպտեմբերի 20-ին կամավոր ներկայանալով մարզային զինկոմիսարիատ, զինվորագրվում է հայրենիքին: Նրան Ստեփանակերտից ուղեկցում են Բիլաջար կայարան, որտեղ նորակոչիկներին բաժանում էին զորամասերին, Ռուբենին իր տասնուհինգ հայ ընկերների հետ Բիլաջարից չորս սպաներ ուղեկցում են Գյումրի Կովկասի Գրոգնի քաղաքի հետևակային ուսումնական գունդ, որտեղ և սկսվում է նրա ծառայությունը: Նա, սեղմ ժամկետում անցնելով երիտասարդ կարմիրբանակայինի դասընթացները, աչքի է ընկնում իր ընդունակություններով, տիրապետում ոչ միայն անձնական զենքի տեսակներին, այլ նաև գնդաջրին: Քննությունները հանձնելուց հետո նրան ուղարկում են հետագա ծառայության Կովկասյան ռազմաճակատում գործող Հայկական 89-րդ դիվիզիայի հատուկ հարվածային զնդում, և հենց այդտեղից էլ սկսվում է Ռուբեն Հովսեփյանի մարտական ուղին, որը հասնում է մինչև Բեռլին, որի մատույցներից մեկի գրավման համար ծավալված թեժ մարտերից մեկում 1945թ. մայիսի 6 -ին Ռ. Հովսեփյանը ծանր վիրավորվում է. աջ ոտը թշնամի համարյա շարքից հանել էր: Ռուբենին բժիշկները երկար են բուժել, բայց լրիվությամբ բուժել և վերականգնել ոտքի նորմալ աշխատանքը՝ նրանց չի հաջողվում, որի պատճառով 1946 թ. սեպտեմբերին զորացվում է բանակի շարքերից՝ որպես Հայրենական պատերազմի II կարգի պատերազմի հաշմանդամի՝ լեյտենանտ զինվորական կոչումով:

Ռուբենը վերադառնում է հայրենիք: Ստեփանակերտի շրջանի ղեկավարության որոշմամբ՝ նա, որպես գրագետ, ռուսաց լեզվի գիտակ, նշանակվում է Ասկերանի 7-ամյա դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ, մեծ պատասխանատվությամբ սկսում է իր գործունեությունը, դասավանդում է 4 տարի՝ մինչև 1950 թվականը՝ արժանանալով մեծ հարգանքի դպրոցի տնօրինության, ուսուցչական կոլեկտիվի և աշակերտների կողմից: 1950-1952 թթ. նա ընդունվում է ավարտում է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը և ընդմիջտ իրեն նվիրում Արցախի մանուկների դաստիարակության և ուսուցման պատվավոր ու պատասխանատու գործին: 1952-1954թթ. ուսումնական տարեկանը հետո նա ռուսաց լեզու էր դասավանդում Հադրուքի շրջանի Եղիու գյուղում, իսկ նույն տարվա վերջին նրա խնդրանքով տեղափոխում են Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղի միջնակարգ դպրոց, որտեղից մեկ տարի անց՝ 1955 թ., նրան տեղափոխում են իր մշտական բնակության վայր՝ մարզկենտրոն Ստեփանակերտ, և նշանակում քաղաքային բաներիտ հ.1 դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչի հաստիքում: Նշված դպրոցում նա դասավանդեց մինչև 1959 թվականը: 1959թ. նրան փոխադրում են հ.1 միջնակարգ դպրոց որտեղ նա դասավանդում է ավելի քան 15 տարի: Նա անփոխարինելի ռուսաց լեզվի ուսուցիչ էր, սակայն 1977 թ. նրան առաջարկում են դասավանդել հ.7 միջնակարգ դպրոցում: Որտեղ էլ նա աշխատել է, նվիրված էր իր մասնագիտությանը և երեխաներին, նա հարգված է եղել միշտ բոլոր կոլեկտիվներում, որովհետև նա շատ ընկերասեր էր, մարդամոտ ու ազնիվ: Նա սիրում էր կարգապահությունը, խիստ և պահանջկոտ էր դասի ժամանակ, իսկ դասերից դուրս նա ուղղակի ընկեր էր իր աշակերտների համար: Վերջին աշխատատեղում նա դասավանդեց մինչև 1982 թվականը, որտեղից էլ անցավ թոշակի: Նա իր կյանքի 36 լավագույն տարիները նվիրել է Արցախի մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Նրա սաներից շատերը հետագայում հասնում են բարձունքների ինչպես Արցախում, այդպես էլ նրա սահմաններից դուրս, և հաճախ էին գալիս տեսության սիրելի ուսուցչին:

Ռ. Հովսեփյանը 1960 թ. ամուսնանում է իր շրջանի ներքին Դոնաթալ գյուղի բնակչուհի Հասմիկ Հայրապետի Բազիյանի հետ, որի ընտանիքը շատ հանրահայտ էր գյուղում: Շնորհիվ ծնողների քրտնաջան դաստիարակչական աշխատանքի՝ գերդաստանի չորս տղաներն ու երեք աղջիկները, լինելով ուսման սիրահարներ, բոլորն էլ ստացել են բարձրագույն, այն էլ՝ բժշկական կրթություն Մոսկվայում, երևանում, Բաքվում և Աշխաբադում: Գերդաստանի որդիներից Ռուբենը, որը Մարտակերտ ավանի հիվանդանոցի հիմնադիրն էր, մատուցած ծառայությունների համար հետմահու արժանացավ մեծ հարգանքի: Ներկայումս Մարտակերտի քաղաքային հիվանդանոցը կոչվում է Ռուբեն Բազիյանի անվամբ: Ծակատագրի բերումով Ռուբենի կինը՝ Հասմիկը, ընդունվելով 1941թ. Բաքվի բժշկական ինստիտուտ, 3-րդ կուրսից առողջության պատճառով թողեց ուսումը, վերադարձավ հայրենիք: 1943-1946 թթ. աշխատեց Շուշիի հոսպիտալում որպես բուժքույր: Բուժում էր վիրավոր կարմիրբանակայիններին և նրանց շարք վերադարձնում՝ կատարելով ևս հայրենամարտի գործ: 1946-1950թթ. նա ընդունվում է ավարտում է Երևանի բժշկական ինստիտուտի ստոմատոլոգիայի բաժինը: Վերադառնալով հայրենիք՝ մինչ ամուսնությունը 1 տարի աշխատում է Ադրբեյջանի Միրբաշիր քաղաքում, իսկ 1952-1954 թթ. նա աշխատում է Լեհիստանի բուժկետում՝ որպես ատամնաբույժ, որոշ ժամանակ անց նրան փոխադրում են Հաթերքի բուժկետ: Նա այստեղ աշխատել է մինչև 1954 թվականը: 1954 թ. վերջին Հասմիկ Բազիյանը վեջապես հաստատվեց Մարտակերտում: Նա Մարտակերտի ատամնաբուժական կլինիկայում ստոմատոլոգ էր: Աշխատեց մինչև 1960 թվականը: 1960թ. ամուսնանալով՝ նա փոխադրվում է Ստեփանակերտի ատամնաբուժական պոլիկլինիկա, որտեղ էլ նա շարունակեց իր աշխատանքային գործունեությունը մինչև թոշակի անցնելը: Նա մեծ հարգանք էր վայելում բնակչության շրջանում իր հոգատար և ուշադիր վերաբերմունքի համար: Նա ակտիվ թղթակցել է «Սովետական Ղարաբաղ» թերթին, հոդվածներն ամբողջությամբ նվիրված էին մարդու ատամնապահության խնդիրներին: Հասմիկ Բազիյանի 90 տարին արդեն լրացել է, նա թևակոխել է իր 91-ամյակը: Չնայած պատկառելի տարիքին և առողջական ոչ այնքան լավ վիճակին՝ նա կենսունակ, խելացի և գրագետ անձնավորություն է, հետաքրքիր գրուցակից: Նա ամուսնուց միայն լավ հուշեր է պատմում անվերջ, ինչից երևում է, որ ընտանիքում իշխում էին միշտ միասնությունը և սերը: Այժմ նրա միակ թշնամին հիվանդությունն է, որի հիմնական պատճառը հենց ծերությունն է: Նրան ուժ ու եռանդ են տալիս որդին՝ Արմենն ու նրա երկու զավակները, որոնցից ավագը կրում է սիրելի տատիկի անունը, իսկ կրտսերը՝ երջանակահիշատակ Ռուբեն պապիկի անունը: Հազար ափսոս, որ անփոխարինելի հայրը, պապիկը չմիթարվեց իր թոռնիկներով՝ կնքելով իր մահկանացուն 1984 թվականին, երբ ընդամենը 63 տարեկան էր, բայց մարդու կյանքում կատարած գործն է կարևոր, այլ ոչ թե ապրած տարիները: Հայրենիքը Հովսեփյան ամուսինների կատարած բարձր է գնահատել: Ռուբենը պարզաստորվել էր 8 մեդալներով, իսկ Հասմիկ Բազիյանը՝ 2 մեդալով և բազմաթիվ պատվոգրերով: Նրանք երկուսն էլ աշխատանքի վետերան էին, ազգի նվիրյալներ: Հովսեփյանների՝ հայրենիքին մատուցած ծառայությունները հայրենասիրության վառ օրինակ են ինչպես ներկա, այնպես էլ ապագա սերունդների համար:

ՍԻՐՈՎ ԵՎ ԵՐԱՆՏԱՎԻՏՈՒԹ



Ավելի քան չորս տասնամյակ է՝ ավարտել են դպրոցը: Չնայած ինքս էլ երկար տարիներ ուսուցիչ եմ աշխատել, սակայն իմ հիշողությունից երբեք չեն անցնում դպրոցական տարիներս և դա՝ շնորհիվ իմ սիրելի ուսուցչուհի, դասուցի Գրետա Ավետիսյանի: Ասեմ, որ սիրելով նրան՝ ընտրել եմ նաև նրա մասնագիտությունը՝ քիմիա-կենսաբանությունը: Նա մեզ համար եղել է ոչ միայն դասուցի, այլև հոգատար մայր: Չկար մի աշակերտ, որը բացակայեր դասից, և ընկեր Ավետիսյանը չհետաքրքրվեր նրանով, չիմանար բացակայության պատճառը, չլուծեր նրա պրոբլեմները:

Ընկեր Ավետիսյանը խստապահանք, ճշտապահ, արդարամիտ և հոգատար դասուցի էր: Ավարտական դասարանում քսաներեք աշակերտ էին, բոլորն էլ առանց որևէ մեկի աջակցության ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Եվ այսօր թե՛ ինչ-որ հաջողությունների ենք հասել, դրանում մեծ դեր է խաղացել մեր դասուցիկը՝ հարգաբեման Գրետա Ավետիսյանը: Նա կարողացավ նրա յուրաքանչյուր աշակերտի մեջ վստահություն առաջացնել իր ուժերի նկատմամբ, բացահայտել նրանց ներուժը և առավելագույն չափով ուղղորդել դեպի ուսումը: Նրա դասերին բոլորն ուշադիր էին, կարգապահ: Ահա քեզ հաջողության կեսը, որ մենք ձեռք էինք բերում նրա դասերին: Մյուս մասն էլ պահանջկոտությունն էր, հետևողականությունը, սկզբունքայնությունը: Եվ արդյունքում՝ 10-րդ «ա»-ի ֆիզիկայի թեքումով մեր դասարանի բոլոր աշակերտները մրցում էին դաս պատասխանելու համար, թե լրացուցիչ գրականությունից ով ավելի շատ քիմիայի խնդիրներ կլուծի: Այդպիսին էր մեր սիրելի ընկեր Ավետիսյան Գրետան, որի վաստակը ամբողջացնում են «Ժողովրդական գերագանցիկ» կոթքանշանը, «Աշխատանքի վետերան», «Աշխատանքային գերագանցության համար» մեդալները, «Ուսուցիչ-մեթոդիստ», «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ» կոչումները: Մեր դասարանի շրջանավարտները լիազորվել են ինձ «Լուսարար»-ի միջոցով Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ շնորհավորել մեր սիրելի դասուցի Գրետա Ավետիսյանին, մաղթել նրան քաջառողջություն, երկար տարիների երջանակ կյանք: Մենք միշտ սիրով և երախտագիտությամբ ենք հիշում Ձեզ, ընկեր Ավետիսյան:

Վիկտորյա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ստեփանակերտի հ. 7 դպրոցի
1973-1974 ուսարվա
շրջանավարտ

Վահագն ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՌՆԱՂԵՏ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ
ՀԱՅ ԲՆԱԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ գրականությունը մի մշտաբաց գիրք է, որի մեջ դրսևորվում է ազգի ճակատագիրը: Այն մեր վշտերի ու կեղեքումների արտացոլումն է, մեր հաղթանակների ու ձեռքբերումների իրական պատկերահամբ: Հայ գրականությունը այն բուրան է, որ դարեր շարունակ մշտաբորբոք է պահել հայության պայքարի բոցը: Ոսկեդարից սկսած ինչքան հարուստ նյութեր են ամբարվել մեր գրականության էջերում, որոնցում ցուցանում են պատմության այն դասերը, որոնք սերունդների դաստիարակության ազդարարն են հանդիսացել: Մերը հնչել են որպես շեփորականչ՝ արթնության կոչելով հայրության քաջերին, մերը կեղեքումների ու բռնակալների դեմ պայքարող հայ ժողովրդի պատմությունը արտացոլել:

Լինելով իրականության ու պատմության զգայուն տարեգիրը՝ հայ գրականությունը պատկերել է տարբեր դարաշրջանների ազատագրական պայքարն ու մարտնչող ժողովրդի ազատության իղձը: Միաժամանակ այն արտացոլել է ստեղծագործ աշխատանքն ու փթթող կյանքի փառաբանումը:

Սակայն 19-20-րդ դարերի հայության դեմ գործված ոճիրները՝ թուրքերի կողմից հրահրված հայերի կոտորածներն ու ջարդերը, սև եղեռնագրությունն ընդդեմ հայերի իսպառ բնաջնջման, էականորեն փոխեցին գրականության թեմատիկան: Հայ ժողովրդի ցավատանջ ճիչը իր դրոշմը դրեց հայ գրականության էջերում: 1915 թվականի ապրիլի 24-ին սկսված և հետագա տարիներին շարունակված նախճիրը՝ հայության ահագնացած վշտի արտացոլմամբ, դարձավ գրականության հիմնական թեմատիկայի մեկը:

Մինչ այդ 1894-96թթ. Արևմտյան Հայաստանում Սուլթան Համիդի՝ այսուայնս եղ հրահրած ջարդերը, այնուհետև 1909թ. երիտթուրքերի հրահրած Ադանայի կոտորածները ինչպիսի, ցավով պատկերվեցին արևմտահայ տաղանդավոր բանաստեղծների՝ մեծն Սիամանյոյի, Վարուժանի, Պեշկոպաշյանի և այլոց ստեղծագործություններում: Այդ ցավատանջ օրերի ու տրամադրությունների արտացոլում է հանրահռչակ «Ադանայի ողբը», որը 30 000 հայերի կոտորածների ցավատանջ արձագանքն է. «Անապատ դարձավ շքեղ Ադանան...»:

...Դեռևս 19-րդ դարի 50-ական թթ. Ղևոնդ Ալիշանը՝ հայ գրականության Նահապետը, գրում է «Ողբան գրեզ, հայոց աշխարհ» բանաստեղծությունը՝ արտացոլելով Հայաստանի թշվառ վիճակը, բազում կոտորածները թշնամուց. «Ըզբյուր հազար ցավերդ ողբամ, աշխարհի Հայոց, Ձոր թշնամիքդ ետուն ու միտք կուրացելոց»:

Հայրենիքի հառաչանքներից է խոսում արևմտահայ հայրենասեր բանաստեղծ Մկրտիչ Պեշկոպաշյանը: Բանաստեղծի սրտում տեղ չեն գտնում այն ամենը, ինչերը Հայրենիքը չեն, և թեպետ թռչնիկն ու հովը ավերակաց վրա են թռչում, և պղտոր վտակը հայոց նոճիներն մեջ է սողում, «Նոքա հառաչք են Հայրենիք, Նոքա չերթան սրտես ի բաց»:

Այնուհետև բանաստեղծը, Ջեյթունի ազատագրական պայքարի մարտիկների հիշատակը հավերժացնելով, տալիս է հայ քաջորդու կերպարը, որն անվարան պահանջում է վառող ու գնդակների և նետվում մարտադաշտ: Իսկ արմաքան ընկնելով՝ հորդորում է մորը չլալ. «Թրքաց մայրեր թող լան, ու դուն Ուրախ լուրեր տար ի Ջեյթուն...»: Հայ քաջորդու սխրանքին է միանում և հայ քաջուհին. եվ «բազմամբոխ թրքին բանակ, Սևափրփուր շունչն արձըկե, Ջեյթունցիին ոտքերուն տակ»: Սակայն դեռ «արցունք թափե Հայաստան...»:

Նահապետ Ռուսինյանը Կիլիկյան հիշատակներ է խոսում իր հանրահայտ բանաստեղծության մեջ: Չքնաղ է երկիրն Արմենիո, և բանաստեղծը բուռն ցանկություն ունի տեսնելու Կիլիկիան, քանզի լինելով ամենուր, տեսնելով դաշտերը Սիրիայի, Լիբանանի լեռներն ու անտառները մայրի, Իտալիան ու Վենետիկը, բանաստեղծը տենչանքով ասում է, որ որևէ վայր չի կարող հասնել Կիլիկիային. «Եվ ոչ մեկ վայր է արդարև, Գեղեցիկ քան զին Կիլիկիա»: Բանաստեղծի իղձը՝ «Երթան նմա չեմ Կիլիկիա, աշխարհ, որ ինձ ետուր արև», մնում է անկատար, քանզի Հայկական այդ հարուստ թագավորությունը կործանվել է դեռևս 1375 թվականին՝ թողնելով միայն գոյատևած բեկորներ, որոնք էլ փշովեցին նախորդ տարվա Քեսաբի ավեր-կոտորածների ժամանակ, և մնում են միայն փշուրներ...

Հայության վշտերն է արտացոլել դեռափթիք բանաստեղծ Պետրոս Դուրյանը, որի պոեզիան թաթախում է հայրենիքի ճակատագրի հանդեպ ունեցած մորմոռներով. «Փոխանակ քաղցր օրորներու, հայրենիք, օրորանիս թով մայրիկս ըզբեզ միշտ ողբաց»: Վաղամեռիկ բանաստեղծը «Իղձք առ Հայաստան» բանաստեղծության մեջ իր մեծ իղձն է արտահայտում. այն է՝ վերջապես ազատ տեսնել հային. «Թեև ըլլամ ես մեռել, Դամբանես դուրս կնետվիմ ազատ Հայն տեսնել»: Ինչու՞ էր այդքան մեծ բանաստեղծի իղձը, քանզի տեսնում էր միայն «Երկաթ, շղթա, գնդան, ամուրներ ու վիեր, ամպրոպ ու շամբ, մահվան զանգակ ու ջահեր...»:

Հայրենիքի ճակատագրի հանդեպ զգայուն բանաստեղծը, շարունակելով թեման, նկարագրում է այն «նոր, սև օրերը», որ սպասում էր հայությանը. մի կողմից թուրքը, մյուս կողմից քուրդը կոտորում էին հայերին: Եվ բանաստեղծի ցավը «հեզ մարդկության մեկ ուստը գոս» թշվառ հայրենիքին չօգնած լինելն է, քանզի հանգչում էր ծաղիկ հասակում...

Ուշագրավ է Արշակ Չոպանյանի «Օրոր Մայր Հայաստանին» ստեղծագործությունը, որտեղ նկարագրելով Հայաստանի փառավոր անցյալն ու անվառունակ ներկան, բանաստեղծը «հերիք է» ասում լաց ու կոծիկ և ժողովրդին պայքարի կոչում՝ ընդդեմ ժամտ դահիճների ու մեր երկիրը քանդողների: Բանաստեղծը կոչ է անում ժողովրդին՝ ճանաչելու ինքն իրեն, ժողովելու իր ցիրուցան ավյունը: Իսկ եթե ժողովուրդը ելնե. «Պիտի քանդի բռնության սև խորանը, և Մայր Հայաստանի ծոցին մեջ հայոց աշխարհը կը խլրտա...»: Բանաստեղծը միաժամանակ պատկերել է հեռու ափերում գտնվող հայ տարագիր ցավակներին սպասող Մայր Հայաստանի վիշտը: Թուրքական բռնությունների ներքո գտնվող հայրենիքը վերածվում էր բանտի, և տարագրվում էր հայությունը, ու ազատության կարոտ ալևոր Հայաստանը սպասում է տարագիր ցավակների վերադարձին, որոնք պիտի հետ դառնան, շենքերեն հայության տուն ու ոստանը ելնելով կենցաղ պայքարի...

Եվակ դյուցազմորեն երգելու և հայությանը պայքարի ու արթնության կոչելու ժամանակը: Դա Սիամանյոյի ժամանակն էր, մաքառումների ժամանակը, որպեսզի վերջապես « երկվարները փոթորկանման հաղթանակին կատարներուն վրա արձանանան...»: Եվ սկսվեց ըմբոստացողներու աստվածացումը», որոնք դեպի Նպատակն էին գնում սրբազան... Բանաստեղծը ճանաչում էր նրանց հոգիները իրենց ճակատների բոցից, և երջանկորեն մտիկ էր անում հայ ցեղի արյունի՝ նրանց մեջ եռալը՝ իմանալով և նրանց ցավը «բոլոր ճիչերն ու հոժոյուններն Աննեղներու անագրույն կոտորածին...»:

Նա բոլոր «ըմբոստացումի արյունաբիր զավակներուն» գոչում էր՝ Հառաջ՝ գիտենալով, որ հաղթանակի վերադարձին ցնծությունով պիտի երգեն: Բանաստեղծի գրչի տակ դյուցազմական կերպար են ստանում անգամ վիրավորները, որոնք մղվում են հաղթանակի մահվան, կամքով գորավորները բարձրանում են դեպի «Ազատության հորիզոնը»՝ եղեռնի ծովատարած տաք արյունը հոտոտելու, ուր մեկը նրանցից հանգրվանի վրա, բոլոր նահատակներին դիմելով, ասում է, որ անձնվեր ճակատներն այդ պահին «հաղթանակին հոտերովը կաղամանովին...», որոնց արյունոտ դաստակները հայրենի հողի համար սրբագործվող ալիքների մեջ են մաքրվում:

Մեծը՝ արցախցիներս, մարտնչող ժողովուրդ ենք, և մեր զինվորներն էլ նույնպիսի քաջությամբ մարտնչում են ընդդեմ թշնամու, անգամ վիրավոր ետ մղում անօրեն ախտյանի ներխուժումները:

Բանաստեղծը հողի ձայնն է հասցնում իր ժողովրդին. «Եթե կուզեք, որ ձեր վաղմջական ազգը դեռ տևե... ինձի հասեք... մոլեգնաբար և գունդ առ գունդ...»:

Սիամանյոյի անկրկնելի ու շռայլ պատկերները ոգի են հաղորդում կռվի ելածներին, պայքարի կոչն են թեժացնում: Անդրանիկին նվիրված քերթվածքում մեր մեծ գորավարը պատկերանում է «հողին փրկությանը սիրովը հրաշացած եղբոր մը նման», որի բառերը «խիստ էին և քաղցր, և ճշմարիտ, և քինսահույզ, և առնական... Նա բարձրացնում է հայ վրեժի ու արյան աղաղակը: Եվ եթե հայի հոգու մեջ ազատության որևէ կայծ վառ է, և բազուկները քաջություն ունեն թշնամիներից հարվածելու, և եթե նրա մեջ հայ քաջազուն թագավորաց հաղթանակող զորությունից շունչ կա, ոտքի ելնի ու մրկվի ողջ հայության հետ: Եվ հերոսի ձայնին ունկնդիր՝ հայրորդները իրենց գրոհներն են ձեռնարկում, իսկ բանաստեղծը երկուդաժորեն համբուրում է իր հերոսի քայլերի հետքերը...»

Նույնպիսի տոգորումով բանաստեղծը բացահայտում է Աղբյուր-Սերոբ-Վարդանյանի սխրանքը՝ անվանելով նրան «մարտնչուններու և զորության արքայակերպ հսկա», որ տարիներով «սարսափանքը եղավ թշնամիի խուժաններուն»: Բանաստեղծն այստեղ խոսում է և հերոսի կնոջ՝ Սոսեի ու նրանց որդիների մասին, որոնք հերոսի հետ հավասարապես մարտնչել են թուրքերի դեմ:

Բանաստեղծը «Հոգեվարքի և հույսի ջահեր»-ում պատկերում է մահվան տեսիլքը հայոց ազգի՝ կոտորած կոտորածի ետևից, որով բարբարոսներն էին խրախճանում արյունոտ բերաններով: Եվ սարսափի ու արյունի օրերը մոխրացնում էին ամեն ինչ: Հայի վաստակը, շեն տները կուլ էին գնում կոտորածների սրին: Ու բանաստեղծի հոգին իր տան ավերակների վրա՝ որպես մի տարագիր տատրակ, իր՝ դժբախտի արցունքը պիտի լար: Սակայն անկատար մնաց ավերակված հայրենի տան համար բանաստեղծի վերջին իղձն ու հույսը. դառնալով զոհ եղեռնի ճանապարհին՝ հայրենի տան մոխիրը չխառնվեց իր՝ հայրենիքը երգողի աճյունին: Սակայն ինքը արյունվելով խառնվեց կորուսյալ հայրենիքի հողին...

Ամենուր արյուն էր, որ տեսնում էր բանաստեղծը, որը թափում էր համիրյան կառավարությունը, ու բանաստեղծը երգելով էլ մեռնում է արյունաքամ հայրենիքի ճամփեքին, որի ամեն քարը, թուփը, հանգրվանը եղեռնում էր յաթաղանող թուրքը:

Բանաստեղծը տեսնում էր հայության այն քաջազուններին, որոնց աչքերի կայծը երկնքի աստղերից էր ծորում, և որոնց ճակատին ցավի ծաղիկներն էին գունավառվում: Խոսում են իրար հետ հայրենիքի բանաստեղծն ու զինվորը, որ հերոսատիպ ու հպարտ գնում էր իր նախնյաց վրեժը լուծելու, իսկ Սիամանյոն «ցեղին ցավը ու ցեղին ուժն էր բանաստեղծում»՝ իր երգերից մեկը ծոնելով «փրկության ու տառապանքի» զինվորին:

Անանձնական քնարի բանաստեղծը նկարագրեց հավերժացման պահը. իրար հանդիպած հայրենիքի զինվորն ու բանաստեղծը երկուսն էլ երգելով ընկան՝ արյունելով հայոց անդաստանը՝ կիզված ու ավեր:

Բայց պետք էր նահատակումից առաջ Սիամանյոն տար թուրքի քստմենլի ոճիրը, մոխրակույտի վերածված հայոց քաղաքի՝ մինչև ծառերի կատարները դիզված դիակների նկարագրով: Խուժանն անտառվում էր և ոռնալով հայ կամանցից պահանջում մերկ պարել մահվան պարը, որոնք, սակայն, ընդդիմանալով՝ քարյուղով ողողվում են և այրվում, և բանաստեղծը խարազանում է անմարդկային ոճիրը. «Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»: Ի՞նչ իմանար բանաստեղծը, որ դեռ հաջորդելու է դարի ոճիրը, և ինքն էլ դառնալու է նրա առաջին զոհերից մեկը...

Աստիճանաբար ազգային ազատագրության գաղափարը լայն թափով է արտահայտվում, մեծ կտավով արտացոլվում, թեմատիկ առումով մեծ ծավալներ ընդգրկում ու արծարծվում ավելի պարզորոշ ու հստակորեն: Երիտթուրքերի հռչակած «ժողովրդավարական» սահմանադրությունը շուտ է գալիս հայության գլխին, ու հայի ճակատագիրը դառնում է օրհասական...

Հայրենիքը՝ մի սուրբ հանգրվան, ոռոգվում է հայոց արյամբ, բայց չի խամրում ոչ մի երգ: Հնչում է մեծագույն բանաստեղծի ձայնը: Ասպարեզի վրա է Դանիել Վարուժանը՝ արևմտահայ գրականության աստղը: Դարձյալ հայրենիքի դառնալետ ճակատագիրն է մորմոռում բանաստեղծին. այրվում է հյուղը, ու հայ մարդու հույսի ոչնչացումն է գծվում. «Կմորմոռքի ընտանիքն իր ջանքերուն սին փոշիին հանդիման...»: Բանաստեղծը հարցում է ամուս Տիրոջից, թե երբ պիտի գա «Եղբայրությունն մարդկության»:

Բանաստեղծի գրչից եղեգան փողն է ելանում, ցեղի սիրտն է բաբախում իր կրծքի տակ: Բաբախում է ու մորմոռում, որ մարում են հայոց օջախները. Կյանքը, որ խլրտում էր օջախում, այսօր մարած է, և կային միայն «կոտորած դռան արյան չորցած կաթիլներ»: Այսօր այդ տան ներսում լսվում են ձայներ ազգավի, իսկ դրսում՝ մլավյուններ միայն. գոնե հողը փորող լինեք, և այդ օջախը բանտ կամ գերեզման լինեք, ու այդ հողը ոսկորներ փոսեցներ... այնինչ անթաղ էր անգամ տանտերը. մորթվել են այրերը, լլկվել են հարսնեքը, և միայն գորշ կատուն է մլավում, և ագռավների երամն էր աղմկոտ ավարի վրա հարձակվում...

Այսպես խոշտանգվում էին բազմաթիվ հայեր: Իսկ ինչպե՞ս էին գոյատևում ապրող հայերը. ամենավատթար պայմաններում, ստորացումների ու սարսափի մեջ: Եվ ամեն քայլափոխի կյանքից զրկվում են «Վաղվան բողբոջները», ու բանաստեղծը ցատումով արտահայտվում է, «որ մինչև երբ իր արյամբ հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե»: Ընկնում է հայ գյուղացին, իր «ջուլիտ որդիներն են ընկնում, ու վաղամահ հույսի մեջ հեծկլտանքներն են խեղդվում »:

Վարուժանը 1895-96թթ. հայոց ջարդերի մասին գրած բանաստեղծությունների մեջ նկարագրում է, թե ինչպես են մահակների ու խարազանների տակ ընկնում, հատու յաթաղաններով ու դահիճների կացիներով սպանվում հայերը: Հրաման էր պոռթկում «Ելըզք Քյոշկի» սուլթանական զանգից, ու կոտորածի ջարդից ոչնչանում է հայոց ազգը:

Լա՛ց, Հայաստան, ով թշվառ կին, ու փետե Վարսերդ , այդ զըլխուղ վրա դըրժված Ցանե տաք-տաք մոխիրներ:

ԴԱՆԹԵԱԿԱՆ

Ու Յամիրի հրամանը դառնում է հայերի տապալանագիրը...

Եվ սակայն դեռ օտարների ուղերթը այրում են կիլիկյան մոխիրները...

Բարձրանում է հայ դուրախների կերպարը, որի սուրը դուրս քաշելիս «ամպին ծոցեն սրլացող կայծակի պես կը փառփի»...

Այնուհետև Կարուժանը դիմում է մարդկության տառապած Փրկչին՝ Զիսուսին...

Արևմտահայ գրական անդամատանի փայլուն աստղերից մեկը՝ Ռուբեն Սևակը, որ իր բոլորանվեր ուժերով, բանաստեղծի ծիրանով...

Ով դու՞ն, ով դժբախտ երկիր հայրենի, Որ արյունի տաք շամանդաղի մեջ...

Լսվում է վայուն հայրենի երկրից, այդ կույսերի վայունն է՝ «պիղծ յաթաղանով ընդկիսված հանդ»...

Իր «Կիլիկյան երգեր» շարքում բանաստեղծը ցատում է արդարության խոսքն է հնչեցնում...

Հայ գրականության անզուգական էջերից

մեկը հանդիսացող Պարույր Սևակի «Անլուրի գանգալատուն» պոեմում համապատկերային կտավով տրվում է վայ-գուլունը՝ հայու-թյան օրհաս Մեծ եղեռնը...

Ռով մարդկային արդարություն, Թող որ ես թքեմ ճակատին քո բաց...

Մթագունմի վարագույր է իջնում հայոց վարդապետի մտքին...

Յնչում է «եռածայն անմեղ զոհերի» Ողբում մեռելաց, բյուրե-բյուրոց ողբում...:

Ողբ ու սուգ էր հայոց աշխարհում, քանզի համիրյան 300000 ջարդերին հաջորդած ցեղասպանությունը...

Չարենցն իր պոեմում ականատեսի վկայությամբ նկարագրում է քստմեղի տեսարաններ Վանի ճանապարհին...

Չարենցն իր պոեմում ականատեսի վկայությամբ նկարագրում է քստմեղի տեսարաններ Վանի ճանապարհին...

Չարենցն իր պոեմում ականատեսի վկայությամբ նկարագրում է քստմեղի տեսարաններ Վանի ճանապարհին...

գուն գերեզմանային», իսկ առջևում փռվել էր հողմակոծ ծովը... Այգաբացին սկսվում է կռիվը...

Շիրազի «Հայոց դանթեականը» համաժամալ պոեմ է, որում տրված է ողջ եղեռնի ավերը...

Բանաստեղծն ընդվզում է ոճագործության դեմ և պահանջում, որ այն դատապարտվի...

Վահան Թեքեյանի «Հայերգությունը» հայ ազգին նվիրված լավագույն էջերից է...

Բանաստեղծի հոգին կիզում է մտածումի արհալիրքը գերագույն «Հոն հայ աշխարհը կըլլա լռիկ դամբանն Հայությանը»...

«Ներկա Հայաստանին» բանաստեղծության մեջ Թեքեյանն արտահայտում է իր քերականը...

Ռափայել Պատկանյանի պոեզիայում ազգային ցավը նորովի էր բացահայտվում...

քաղաքների» կործանման, իր պանդուխտ գավակների համար...

Իսկ թե ինչ է սա նշանակում, բերեմ մի կենդանի օրինակ: Սեպտեմբերին Շուշի այցելեցին մի խումբ ամերիկահայեր...

Պատկանյանը խոսում էր ազգի միաբանության անունից՝ արթնության կոչելով բոլորին...

Այն դժոխական տարիներին, երբ վտանգված էր նամանակագր արևմտահայության ճակատագիրը...

Բարբարոս թուրքը ոչ միայն չաճաց, այլև ցույց տվեց իր գազանային ողջ էությունը՝ հրահրելով բնաջնջումը...

Չլռեց հայը: Որպես վրիժառու անմեղ զոհերի վեր էլավ նա ամեհի ու սասանեց թուրքին:

Հայը զորացավ: Նա մռնչաց որպես առյուծ և քաջ Կարդամի սուրը շողշողաց: Ազատագրվեց Արցախահողը:

Փոքրիկ է հայոց լեռնաշխարհը, բայց չքնաղ, ուր ամեն մի հայ խրախուսվում է տեր-յանական վսեմ խոսքերով...

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ Շուշիի Խ. Աբովյանի անվան հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԳԵՂԱԴԻՏԱԿ

ԳԱՐՈՒՆՆ ՈՒ ՄԱՅՐԻԿԸ

Թողեք մանկությունը հասունանա մանկության մեջ:

Ժան Ժակ Ռուսո

Երեխաները մեր կյանքի ծաղիկներն են: Նրանց ապագան կախված է նրանից, թե ինչպես ենք սնուցում նրանց, ինչքանով ենք բավարարում նրանց հոգու հացը:

Երբ հացագործը առողջ սերմեր է պահ տալիս հողին, չի նշանակում, որ այլևս անելիք չունի: Ընդհակառակը, ապագայի ակնկալիքներն ավելի են մեծացնում նրա ուշադրությունը և ու հոգատար վերաբերմունքը: Այլապես հողը վարձահատույց չի լինի: Այդպես են նաև երեխաները, որոնք անընդհատ ուշադրության ու հոգատարության կարիք ունեն, առավելապես՝ նախադպրոցական տարիքի երեխաները:

Դա կախարդական ու հրաշք մի աշխարհ է, ուր մոռանում ես ամեն հոգս ու ցավ և ընկղմվում երկնի լազուրով, ծիածանաթև հավքերով, դրախտի ծաղիկներով առելցուն մի աստվածային թագավորության մեջ, ուր գարուն է, ծաղիկ ու գեղեցկություն:

Այսպիսի կախարդիչ գույներով մի տեսարան բացվեց մեր

առջև, երբ մտանք Խնապատի մանկապարտեզ: Ծիածանվեց գարունը այս ջերմ ու ծաղկառատ դահլիճում: Բացվեց գմայելի ու ներդաշնակ մի պատկեր՝ ծաղիկն ու մայրիկը:

Միջոցառման վերնագիրն էր՝ «Մայրիկն ու գարունը»:

Բոլոր աշխատողների հոգատար ձեռքերով է այդպես շքեղ-

պարզելով մանուկներին:

Մեկ-մեկ, երկու-երկու կամ խումբ-խումբ շարքից դուրս էին գալիս այդ հրաշք ծաղիկները և իրենց թոթով լեզվով բարբառում: Այնուհետև կազմակերպվեց վիկտորինա «Մանուշակ» և «Գարուն» թիմերի միջև:

Դաստիարակ Անուշ Ասրյանն անընդհատ հետևում էր երեխաների խոսքի ճիշտ արտահայտությանն ու կապակցված խոսք կառուցելու հմտություններին: Հանելուկներով մարզում էր սանիկների միտքն ու տրամաբանությունը՝ նրանց մեջ դաստիարակելով սերդեպի բնությունն ու մարդը, վերջում խրախուսում մրցանակներով:

Տպավորիչն այն էր, որ այս կախարդական գեղեցկության դրսևորման բազմաթիվ երանգները զուրկ չէին թախծոտ շեշտադրությունից: Նրա այն հարցին, թե արդյո՞ք գարնանային բոլոր նշանավոր օրերը ուրախ բովանդակություն ունեն, մանուկներն ընդգծեցին մեր ազգային մեծ ողբերգության փատր՝ Տեղասպանության 100-րդ տարեկիցը:

Դահլիճի հատակին ցանած տարագույն անմոռուկներն ինքնին խոսում էին դրա մասին:

Հմուտ դաստիարակի գործունեությունը, իրոք, բարեբանելու արժանի է, քանի որ նա սիրում է երեխաներին ու ամբողջ էությամբ նվիրված է նրանց: Սա է այն մոգական ուժը, որով կարողանում է շահել բոլոր երեխաների սրտերը:

Անշուշտ, դրվատանքի արժանի են այն բոլոր մարդիկ, ովքեր զբաղված են մանուկների դաստիարակության ու կրթության պատասխանատու գործով:

Մանկապարտեզի տնօրեն Լուսինե Մանվելյանի խոսքով ավարտվեց միջոցառումը: Նա կրկին շեշտեց կնոջ ու գարնան անբաժանելիության փիլիսոփայությունը, շնորհավորեց բոլոր մայրիկներին՝ ցանկանալով նրանց սեր, միություն, երջանկություն, հոգու գարուն:

Շատ ուրախ է, որ իր տաքուկ օջախում հասակ են առնում 52 երեխաներ՝ երկու խմբով (ավագ խումբ՝ 26 երեխա և կրտսեր խումբ՝ 26 երեխա): Ավագ խմբի այսօրվա 26 երեխաներից 13-ը դպրոցահասակ են. սա ևս ուրախացնող փաստ է:

Ավարտված է միջոցառումը, բայց չես ուզում հեռանալ ջերմ ու տրամադրող դահլիճից, մանուկների պարզ ու անարատ, միևնույն ժամանակ կախարդիչ աշխարհից ու խնդրում Աստծուն, որ ամհոգ ու երջանիկ օրեր շնայի այս երեխաներին:



րեն զարդարվել դահլիճը: Ամեն ինչ գեղեցիկ էր ու կոկիկ:

Ավագ խմբի դաստիարակչուհի Անուշ Ասրյանը ջանք ու եռանդ չէր խնայել՝ միջոցառումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Երաժշտության դասատու Գայանե Հայրապետյանի քնքուշ մատների տակ երգում ու պարում էին դաշնամուրի ստեղծերը՝ հրճվանք ու բերկրանք

ԳԻՏԵԼԻՔԸ՝ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Տեղասպանության 100-րդ տարեկիցի միջոցառումների շրջանակներում Ասկերանի միջնակարգ դպրոցում կազմակերպվեց «Հայ ասպետ» ինտելեկտուալ խաղ-մրցույթը, որի նպատակն էր սովորողների ուշադրությունը սևեռել մեր ժողովրդի մեծ ողբերգության փաստին և գիտակցել տալ նրա հակամարդկային էությունը ու հետագայում պայքարել նման դրսևորումների դեմ:

Մրցույթին մասնակցում էին Ասկերանի, Խնապատի, Իվանյանի և Պատարայի միջնակարգ դպրոցների աշակերտները:

Խաղը ընթանում էր երկու փուլով: Առաջին փուլն ընդգրկում էր 15 հարց:

Թիմերը վաստակեցին հետևյալ միավորները. Իվանյանի մ/դ՝ 10, Խնապատի մ/դ՝ 9,75, Ասկերանի մ/դ՝ 8,25, Պատարայի մ/դ՝ 7:

Երկրորդ փուլն ընդգրկում էր երգ, ասմունք, թատերական պատկեր և մարտական պար:

Մրցույթի այս 4 ձևերից աչքի ընկան Խնա-

պատի (ասմունք ու պար), Ասկերանի (երգ և թատերական պատկեր), Իվանյանի (երգ և թատերական պատկեր), Պատարայի (թատերական պատկեր) թիմերը:



ժյուրին ամփոփեց արդյունքները: Թիմերը, ըստ այդ արդյունքների, դասավորվեցին հետևյալ հերթականությամբ.

Իվանյանի մ/դ - 41 միավոր, Ասկերանի մ/դ

- 39,25 միավոր, Խնապատի մ/դ - 38,75 միավոր, Պատարայի մ/դ - 30 միավոր:

Կրթության բաժնի ավագ մասնագետ Սվետլանա Ասրյանը, շնորհավորելով հաղթող թիմին, շնորհակալություն հայտնեց բոլոր կազմակերպիչներին և աշակերտներին ու պատվիրեց երբեք չմոռանալ օրվա խորհուրդը:

Իսկ Ասկերանի մշակույթի տան տնօրեն Արթուր Սարգսյանը, որ ընդգրկված էր ժյուրիի կազմում, ավելի մանրամասնեց թիմերի ելույթները: Ընդհանրապես ցածր է երգի արվեստը, բայց համեմատաբար լավ երգեց Ասկերանի ներկայացուցիչը: Խորհուրդներ տվեց ասմունքողներին, ընդգծեց Իվանյանի թիմի կարգապահ կեցվածքը:

Գնահատելով մանկավարժների զգալի աշխատանքը՝ միաժամանակ նշեց, որ այս գործում դեռ թերություններ չառ կան: Ասկերանի շրջանի հավաքական թիմը կմասնակցի հանրապետական փուլի մրցույթին:

Աշակերտները գեղեցիկ ու արտահայտիչ արտասանում էին մեր երևելի գրողների ստեղծագործություններից՝ խորապես զգալով հայ պոեզիայի շունչն ու հմայքը:

Իր քաղցրահնչուն ասմունքով ցերեկույթը համեմեց թռչակառու քաղաքացի, ակտիվ ընթերցող Ոսկան Խաչատրյանը:

Դպրոցի տնօրեն Նելսոն Բաբայանը շնորհակալություն հայտնեց աշակերտներին՝ միջոցառումը գեղեցիկ անցկացնելու և ներկայանալու անմոռաց պահ պարզելու, նաև՝ իրենց իսկ գոյության համար:

Խորհուրդ տվեց, որ ինչպես այդ օրը, այնպես էլ մշտապես աշակերտներն առաջնորդվեն մեսրոպյան պատգամներով:

Միջոցառումը, իրավամբ, դրական լիցքեր հաղորդեց բոլորին: Այն ուղեցույց էր նրանց ճիշտ դաստիարակելու և դեպի մեծ կյանք ճանապարհելու գործում:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սուրբյա ԴԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների

Պետական մոնիթինգի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու նպատակով սույն թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 15-ը (ներառյալ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունում կազմակերպվում է փաստաթղթերի ընդունելությունը:

Ցանկացողները դիմում- հայտի հետ միասին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ա) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) և ներդրի (միջուկի) բնօրինակները՝ պատճենների հետ միասին,
- բ) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի

վկայական, ԼՂՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակները՝ պատճենների հետ միասին,

գ) 2 լուսանկար (3x4սմ չափսի):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից)՝ ժամը 10 00-17 00-ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնում (14 սենյակ):

Տեղեկությունների համար զանգահարել (047) 94-11-39:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 04.04.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: